

«Զգեցեք որ մանուկները ինձի գան, արգելք մի ըլլաք անոնց,
որովհետև այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

Մ ԱՇՏՈՅԻ
Մ ԱՐՁԱԳԱՆԳ

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

ԺԹ տարի
2012

Տարեկան Բացառիկ

Բովանդակություն

Խօսք Հովհիի եւ Հոգաբարձութեան	Էջ 3
Նկարներ՝ Կիրակնօրեայի 2011-2012 տարեշրջանէն	Էջ 4
Մեր Խօսքը՝	Էջ 7
Հակիրճ Տեղեկութիւններ 2011-2012 Տարեշրջանի Մասին	Էջ 10
Ձեռնարկներ եւ Արտադասարանային Աշխատանքներ Ժամանակագրական Շարքով	Էջ 12
Աշակերտական Ներկայութեան Տախտակներ	Էջ 13
Նկարներ՝ Կիրակնօրեայի 2011-2012 տարեշրջանէն	Էջ 14



ՍՈՒՐՔ ԳԱԿՈՔ ԱՌԱՋ. ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՅԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

Զորեքշաբթի, 2 Մայիս 2012,
Մոնթրէալ

Սիրելի տնօրէնութիւն,
ուսուցչական կազմ, ծնողներ
եւ քանկագին աշակերտ-աշակերտուհիներ
Ս. Յակոբի Կիրակնօրեայ Դպրոցին,
Աստ,

Սիրելիք,

Այս տարի Իւնեսքօն Երեւանը ընտրեց եւ հռչակեց իբր Մայրաքաղաք
Համաշխարհային Գիրքի: 2012 տարին Հայ գիրքի տպագրութեան 500-ամեակն է, ուստի
միջազգային այն կազմակերպութեան որոշումը արդար էր եւ ճիշդ ժամանակին: Այս նոյն
առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը՝ Արամ Ա. Կաթողիկոս Կոնգակ մը
գրեց՝ վերահաստատելու համար Հայ գիրքին մեծ կարեւորութիւնը վասն մեր ինքնութեան
պահպանման ու յառաջդիմութեան:

Քրիստոսեան հաւատքին հայօրէն ընկալման առաջին հիմնական քայլը
Աստուածաշունչի թարգմանութիւնն էր, գիտէք: Սահակ Պարթեւ Հայրապետ եւ Մեսրոպ
Մաշտոց նախաձեռնեցին, եւ իրենց աշակերտներուն հետ «անեղին իմաստութիւնները»
թարգմանեցին ու մեր ժողովուրդին տուին, որպէսզի արթուն ըլլայ անիկա, ըլլայ նո՛ր
ժողովուրդ:

Աստուածաշունչի թարգմանութեան վրայ է, որ հայ գրականութիւնը զարգացաւ ու
ծաղկեցաւ: Այն զարգացումը եւ ծաղկումը՝ գէպի Լոյսը ճամբորդութիւն մըն էր:

Մինչեւ Հայ գիրքի տպագրութեան 500-ամեակը, եւ անկէ ետքն ալ՝ մեր հայրերն
ու Հայ հեղինակները գիրքերու հսկայ աշխարհ մը կտակեցին մեզի: Դարերու ընթացքին՝
ո՛չ թէ միայն Հայը կոտորուեցաւ, այլ նաեւ՝ Հայ գիրքը: Սակայն Հայն ալ վերապրեցաւ,
Հայ գիրքն ալ: Լոյսին ճամբորդները չեն մեռնիր:

Կիրակնօրեան Հայ հաւատքին յուսալից հողաչերտ մըն է:

Կիրակնօրեան Հայոց այբուբենի ծառերուն գեղեցիկ պարտիզակ մըն է:

Կիրակնօրեան Գիրքերու Գիրքին՝ Աստուածաշունչին արեւը վայելող լուսաւոր եւ
հեզ այգի մըն է:

Երանի՛ր անոր հաւատարիմ ծնողներուն եւ աշակերտ-աշակերտուհիներուն: Ու
վարձքը կատար տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին:


ՀՈՎԻ ԵՒ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ

Ս. ՅԱԿՈՔ ԱՌԱՋԱՌՈՂԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅՈՅ

ՆԿԱՐՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2011-12 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



ՆԿԱՐՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2011-12 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



ՆԿԱՐՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2011-12 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ ամբողջացնել մեր 32-րդ տարեշրջանը: Այս տարի նաեւ 19-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ անցեալ Սուրբ Յակոբի տօնին օրը՝ Դեկտեմբեր 2011-ին մեր կայքէջին՝ www.sourphagop.org-ին 11-րդ տարեդարձն էր:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքերը, որոնք Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն են, կը փսան հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները որոնց մանուկները արգելքներ ունին երթալու Յիսուսին, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին, մանաւանդ Գանատայի մէջ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, հայ կրօնական դաստիարակութեան սահմանափակումին հետեւանքով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ հայ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին, եւ այդ կարելի կ'ըլլայ հիմնականօրէն Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

Հայ Գիրքի Տարի

Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Հայրապետի կողմէ, 2012ը տարին հայ գիրքի տարի հռչակուիլը մեզի խթան մը եղաւ որպէսզի նորանոր հայերէն գիրքեր զետեղենք մեր կայքէջին վրայ: Շարունակեցինք հայերէն գրել եւ քաջալերել մեր աշակերտները եւ բոլոր անոնք որոնք մաս կը կազմեն մեր եմակի ցանկին որ իրենք ալ մեսրոպատառ հայերէն գրեն երբ եմակով կամ Facebook-ով կը հաղորդակցին իրար հետ: Այս հայ գիրքի տարուան ընթացքին, շարունակեցինք օգտագործել քրիստոնէական դաստիարակութեան առաջին եւ մեծագոյն միջոցը՝ Աստուածաշունչը մեր դպրոցական առօրեային մէջ եւ քաջալերեցինք որ մեր աշակերտները, իրենց առօրեային մէջ, հաւատարիմ փսան Աստուածաշունչի խորքին եւ ոգիին:

www.sourphagop.org-ը 11 տարեկան

Մեր այս տարուան դպրոցական տարեշրջանի ընթացքին մեր կայքէջը տօնեց իր 11-ամեակը եւ շարունակեց ծաւալիլ: Ամբողջացաւ նախորդ տարի սկսած մեր կայքէջին նորոգումը նոր տառատեսակով (Sylfaen): Մանրամասնութիւնները կը գտնէք էջ 9-ի վրայ:

«Մաշտոցի Արձագանգ»-ի 19-ամեակ

Մեր այս դպրոցական տարուան ընթացքին հրատարակեցինք նաեւ մեր ամսաթերթը 19-րդ տարին ըլլալով եւ մեր կայքէջին ծաւալումով, ծաւալեցաւ նաեւ մեր ամսաթերթի կարդացողներուն թիւը: «Մաշտոցի Արձագանգ»-ի միջոցաւ, այս տարի եւս արեւմտահայերէնով 164 քրիստոնէական դաստիարակութիւն ջամբող էջեր աւելցուցինք համացանցին վրայ:

Աշակերտութեան թիւ

Այս տարուան ընթացքին, բաղդատած նախորդ տարուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը յառաջխաղացք արձանագրեց 38-էն 48-ի բարձրանալով: Իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնը սակայն, 26-էն միայն 30-ի բարձրացաւ: Այս տարուան ընթացքին մեր երկրորդականի աշխոյժ խումբը յոյս կը ներշնչէ մեզի ապագայի նկատմամբ: Մեր փափաքն է որ մեր երկրորդականի խումբը տարուէ-տարի աճի եւ մեր պատանիներն ու պատանուհիները երբ հասնին երկրորդականի բարձր կարգերը, ըլլան դաստիարակներուն օգնականները օգտագործելով իրենց հմտութիւնները:

Երգերու եւ Շարականներու ուսուցում

Երկար տարիներէ ի վեր առաջին անգամ ըլլալով ունեցանք երգերու եւ շարականներու ուսուցման մասնագէտ մը որ աւելիով հարստացուց մեր Կիրակնօրեայ Դպրոցի ծրագիրը: Կը յուսանք որ տարուէ տարի մեր աշակերտութեան սերը, հանդէպ մեր շարականներուն աւելիով ծաղկի, եւ անոնք ամբողջացնեն իրենց Հայ եկեղեցւոյ գիտելիքները:

Աստուծոյ կամքով՝ մեր 33րդ տարեշրջանը կը սկսինք Մեպտեմբեր 16, 2012-ին: Մինչ այդ, բարի արձակուրդ կը մաղթենք ձեզի:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ

Նոր Մեկնարկ www.sourphagop.org-ին

11 տարիներ ետք, մեր կայքէջը նոր տեսք ունեցավ: Մեր գործարկումն, որ սկսավ Դեկտեմբերի 10-ին, 2000 թ, մենք օգտագործեցինք Արասան հայերեն տառատեսակը, եւ ստեղծեցինք աւելի քան 1,000 էջեր: Սակայն Windows 7 (64 bit)ի ներմուծումով, Արասանը անգործածելի եղավ մեր այցելուններուն համար:

Մեր տասնամեակի առիթով՝ Դեկտեմբեր 10, 2010ին, մեր կամաւորները որոշեցին բովանդակութիւնը փոխել Sylfaen-ի: Նախ պահեցինք նոյն տեսքը, սակայն վերջապէս որոշեցինք նոր տեսք մը տալ www.sourphagop.org-ին, որուն այնքան արժանի էր...:

Մենք դեռ որոշ ժամանակ պիտի պահենք նաեւ հին տեսքը, մինչեւ որ ամբողջացնենք լման բովանդակութեան փոխարինումը Sylfaen-ի:

Շնորհակալութիւն բոլոր կամաւորներուն, որոնք վերջին 11 տարիներու ընթացքին սատարեցին www.sourphagop.org-ի յաջողութեան: Վստահ եմ, որ անոնք պիտի շարունակեն օգնել մեզի յաջորդ 11 տարիներու ընթացքին ալ:

Հայաստանեայց Եկեղեցւոյ

Սուրբ Յակոբ

Միջակնօրեայ Դպրոց

Տուն ▾ Մեր մասին ▾ Սուրբեր ▾ Տօներ ▾ Գիրքեր ▾ Ժամանակացոյց ▾ Մաշտոցի Արձագանգ ▾ Կապեր ▾

Events ▾ Survey ▾ Blog ▾ News ▾ Armenian Font ▾ Gallery ▾

Արագ կապեր
[«Մաշտոցի Արձագանգ»ի Մայիս 2012-ի թիւը](#)
[Մեր հին կայքէջը.](#)
[Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մարք Եկեղեցւոյ կայքէջը.](#)
[L'École Arménienne Sourp Hagop Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի կայքէջը](#)

Հետեւեցէ՛ք մեզի

Facebook Twitter

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

2011-2012 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Առաքելական Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

32-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2011-2012 տարեշրջանը 32-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին՝ 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 32-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Իւրաքանչիւր տարեշրջան կը սկսի Խաչվերացի Կիրակին եւ կը տեւէ մինչեւ Մայիսի վերջը: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-1:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ մանկապարտէզի 3 եւ նախակրթարանի 6 դասարաններ ինչպէս նաեւ երկրորդականի 2 դասարաններ:

19-ամեակ «Մաշտոցի Արձագանգ» ին

Մեր 2011-12 տարեշրջանի ընթացքին նաեւ հրատարակեցինք, 19-րդ տարին ըլլալով՝ մեր պարբերաթերթը, «Մաշտոցի Արձագանգ»ը ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ
http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ էջին վրայէն:

11-ամեակ www.sourphagop.org-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները. Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Բառարան, Եկեղեցական բառարան, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, Խաղեր, Զարգացման Սրցում, Church Timeline, Daily Bible:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2011-12 տարեշրջանի իրենց մասնակցութիւնը բերին հետեւեալները.

Դաստիարակներ

Թամար Գիզիրեան՝
 Յասմիկ Նաճարեան՝

Մանկապարտէզի Ա. եւ Բ. Կարգերուն
 Մանկապարտէզի Գ., Նախակրթարանի Ա. եւ Բ.

Շողիկ Նաճարեան՝ Նախակրթարանի Գ. եւ Դ.
Յասմիկ Գանաճեան՝ Նախակրթարանի Ե. եւ Զ.

Երգերու եւ շարականներու ուսուցում

Վաչէ-Սագո Պոյաճեան՝ Նախակրթարան, Երկրորդական

«Մաշտոցի Արձագանգ»

Շաղիկ Թորիկեան Պոյաճեան եւ Անի Թորիկեան Պապիկեան

Օգնական Ուսուցիչ

Առէն Պապիկեան Երկր. Դ-ի աշակերտ

Տնօրէն

Թորոս Պապիկեան՝ Երկրորդականի պատասխանատու

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արժարժուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներ եւ այլ նիւթեր:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2011-12 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 48ն էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 30՝ բաժնուած 5 խումբերու:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2011-12 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին

Տէրունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան 2 խումբերու:

Մանկապարտէզի Ա. Բ. Գ. եւ Նախակրթարանի Ա. Բ. Դասարանները Նախակրթարանի Գ. Դ. Ե. եւ Զ. Դասարաններ եւ Երկրորդական:

Պահը ընթացաւ հետեւեալ ձեւով.

Ոսկեղէն համարներու կամ Մաղմոսներու ուսուցում

Բարոյալից պատմութիւններու ներկայացում

Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում

Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն:


Դասարանային բաժին

Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:


ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

11 Սեպտեմբեր 2011	Տարեսկիզբ եւ վերամուտ
18 Սեպտեմբեր 2011	Վարժարանի աշակերտութիւնը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդուեցաւ:
9 Հոկտեմբեր 2011	Թարգմանչաց տօնի յատուկ յայտագիր
8 Յունուար 2012	Ամանորի եւ Սուրբ Ծննդեան զոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նուէրներու բաշխումով:
19 Փետրուար 2012	Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութեան
Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը.	
Ա. շաբաթ	Ծամոն
Բ. շաբաթ	Շաքար
Գ. շաբաթ	Կազային խմիչքներ
Դ. շաբաթ	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Ե. շաբաթ	Կոլոհատ, տուրմ
Զ. շաբաթ	Chips
Է. շաբաթ	Հաւկիթ
17 Մարտ 2012	Դպրոցի Տնօրէնութիւնը, Ուսուցչական կազմը եւ երկրորդականի աշակերտները ստանձնեցին Հայ Եկեղեցւոյ Տաղաւարի պատասխանատուութիւնը Ազգային Առաջնորդարանի կազմակերպած Մանկական Ա. Փառատօնին ընթացքին: Հոն ներկայացուեցաւ Կիրակնօրեայի Կայքէջը, «Մաշտոցի Արձագանգ»ը, Հայ Եկեղեցւոյ մասին ծանօթութիւն, սակայն ամենէն աւելի ժողովրդական էր Հայկական Խաչի ձեռային աշխատանքը, որուն մասնակցեցան փառատօնի մասնակից մանուկներու ու պատանիներու մեծամասնութիւնը:
31 Մարտ 2012	Դպրոցի ուսուցչական կազմը եւ աշակերտութեան մեծ մասը մասնակցեցան մեր Եկեղեցւոյ Գործադիր Մարմնի կողմէ կազմակերպուած նախա-Ծաղկազարդեան ընտանեկան հաւաքոյթին:
1 Ապրիլ 2012	Դպրոցը փակ էր Ծաղկազարդի առիթով
8 Ապրիլ 2012	Սուրբ Զատնուայ յատուկ նշում
20 Մայիս 2012	Ամաւերջի Հանդէս

Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2011 - 2012 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրութիւն եւ միջին ներկայութիւն



2011-2012 տաեշրջանի իւրաքանչիւր Կիրակի օրուայ ներկայութիւն

ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅԻ 2010-11 ՏԱՐԵՇՐՁԱՆԷՆ



Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (11-րդ տարի)

Այս թիւով.....

«Զգեցէք որ մանուկները ինծի գան...»
Էջ 2

Սեպտեմբեր ամսուան բացատրական
տօնացոյց: Էջ 3-5

Նիկիոյ Ժողով
Խաչվերաց
Սուրբ Գեորգ Զօրավար
Վարագայ Սուրբ Խաչ
Վարագավանք

Եզակի Գիրքեր Էջ 5

Պակսող Բառք Էջ 6

Ծածկագիր Էջ 7

Քրիստոսի ներկայութիւնը աղօթողներու
մէջ Էջ 8

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 9-12

Սուրբ Յակոբ Կիրակնօրեային
Ամավերջի Հանդէսը Էջ 13-15

Ամսուան Համարը

«- Զգեցէք որ մանուկները ինծի գան,
արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ
այդպիսիներուն է Աստուծոյ
արքայութիւնը»:

Մարկոսի Աւետարան 10.14

Սեպտեմբեր 2011 (ԺԹ տարի թիւ 1)



Կ... Կիրակնօրեայ
Դպրոց

Խաչքարի Հեղինակ՝
Ժողովրդական Վարպետ
Ռուբեն Նալբանդյան

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Զգեցէք որ մանուկները ինծի գան...

Մարկոսի Աւետարանին 10.13-15 մէջ կը կարդանք.

«Ժողովուրդէն ոմանք մանուկներ բերին Յիսուսի, որպէսզի ձեռքը դնէ անոնց վրայ, քայց աշակերտները սաստեցին բերողները: Երբ Յիսուս տեսաւ, բարկացաւ եւ սաստեց աշակերտները, ըսելով.

- Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ Արքայութիւնը»:

1929ին Կիլիկիոյ երջանկայիշատակ Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեանը, Յեղասպանութենէն ազատած եւ տարագրուած հայ ազգի զաւակներուն Լիբանանի եւ Սուրիոյ մէջ ցիր ու ցան եղած ֆաւորիտացը հաւաքելու միակ ձեւը կը գտնէր զանոնք Քրիստոսի եւ Հայ Եկեղեցւոյ շուրջ հաւաքելուն մէջ: Եւ անոր համար կը հիմնէր, Հայաստանեաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները որպէսզի, ինչպէս կ'ըսէ իր բառերով. *«Զենք կրնար թող տալ որ հայ մատաղ սերունդը հակակրօն գաղափարներով դաստիարակուի»:* եւ կ'աւելցնէ *«Մենք յայտնի կերպով կը տեսնենք թէ ի նչպիսի ողբալի վիճակի մը մէջ ինկած է Աւետարանի լոյսէն, կրօնքի սրբաբար շնորհքէն զրկուած հայ երիտասարդութիւնը: Մենք կ'ուզենք որ մեր Մայրենի Եկեղեցւոյն զաւակները հարազատ զաւակները ըլլան իրենց Ընտանիքին, իրենց Ազգին, եւ իրենց Եկեղեցւոյն: ... Վերջապէս չենք ուզեր որ անկրօն եւ սոգէտ մեծնայ հայ ժողովուրդի երիտասարդ սերունդը»:*

Մանուկները, Յիսուսի կարենալ երթալու համար 2 բան պէտք ունին.

1. մայր մը որ զիրենք Յիսուսի ուզէ տանիլ,
2. եւ մէկը որ արգելքները վերցնէ:

Հայ Մայրը, որպէսզի իր զաւակը Յիսուսի տանի, պէտք է հաւատայ, որ որպէս Հայ, ասիկա իր իրաւունքն է, որովհետեւ որպէս հայ մայր, ասիկա իր պարտքն է ու իրաւունքը որ շահած է,

- ա. Թաղէն եւ Բարթողոմէոս Առաքեալներու նահատակութեամբ,
- բ. Սուրբ Գրիգոր Լուսաւորչի չարչարանքներով,
- գ. Սահակ-Մեսրոպ-Վռամշապուռի իմաստութեամբ, երազով եւ քրտինքով,
- դ. Աւարայրի հերոսներու արիւնով եւ
- ե. Նուարսակի Դաշնագրի ստորագրութեամբ:

«Զգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ Արքայութիւնը»:

Սահակ հայրապետը իր իմաստութեամբ, Յիսուսի այս խօսքը որպէս նշանաբան ունենալով մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն եւ Քրիստոսի խօսքերով կը սաստեր բոլոր անոնց որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ Հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

Արդեօք մենք ո՞ր խումբին կը պատկանինք: Անոնց որոնք իրենց զաւակները Քրիստոսի կը մօտեցնեն՝ թէ անոնց որոնք ոչ թէ միայն չեն մօտեցներ, այլ նաեւ արգելք կ'ըլլան բոլոր անոնց որոնք կ'ուզեն իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնել:

Սեպտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 3	Նիկիոյ Ս. Ժողովի 318 Հայրապետները
Եշ. 8	Տօն Ծննդեան Ս. Կուսին Մարիամու
Կիր. 11	Խաչվերաց
Բշ. 12	Յիշատակ Մեռելոց
Շբթ. 24	Սուրբ Գեորգ Զօրավար
Կիր. 25	Վարազայ Ս. Խաչ

Պահքի Օրեր: 2, 5, 6, 7, 8, 9, 14, 16, 19, 20, 21, 22, 23, 28, 30

ՆԻԿԻՈՅ ԺՈՂՈՎ Արիոս Աղեքսանդրացի, իր իմաստասիրական հմտութեամբը ծանօթ անձ մըն էր, որ մինչեւ իսկ հայրապետութեան յաջորդելու աչք ունեցաւ: Այն ժամանակները կը շարունակէին Յիսուսի անձին վրայ խնդիրներ եւ Արիոս ալ սկսաւ պաշտպանել այն տեսակէտը թէ Յիսուս Քրիստոս մարդացեալ Որդի Աստուծոյ չէ, այլ գերագոյն արարած մը, եւ թէ իրեն տրուած Որդի Աստուծոյ կոչումը բառական իմաստով առնելու չէ: Աղեքսանդր հայրապետ Աղեքսանդրիոյ կրկին գաւառական ժողովներու մէջ, 319-ին եւ 312-ին, հերքեց Արիոս երեցին կարծիքը, որ սակայն իրեն պաշտպան եպիսկոպոսներ ալ ունեցաւ եւ Եւսեբիոս արքեպիսկոպոս Նիկոմիդիոյ ուրիշ ժողովով մը արձակեց Արիոսը Աղեքսանդրիոյ ժողովներուն դատապարտութենէն: Երբ որ վեճերը ընդհանրացան եւ եկեղեցոյ մէջ հակառակութիւնները սաստկացան, Կոստանդիանոս կայսրը ուզեց խնդիրը ընդհանուր ժողովի մը մէջ լուծել, եւ բոլոր քրիստոնէայ աշխարհի եպիսկոպոսները հրաւիրեց Նիկիա քաղաքը 325-ին, ուր ժողովը բացուեցաւ Յունիս 19-ին: Հրաւիրուած էին նաեւ Տրդատ եւ Գրիգոր որոնք կամ չուզէին, կամ չկրնալով անձամբ երթալ, Արիստակէսը իրենց փոխանորդ նշանակեցին, եւ իրենց կարծիքին ու դաւանութեան յայտարարութիւնն ալ գրաւոր անոր յանձնեցին եւ ճամբայ հանեցին (ԽՈՐ. 176): Արիստակէս եղաւ Նիկիոյ 318 հայրապետներէն մին, որոնք միայն քանի մը հոգիի տարաձայնութեամբ, Արիոսական վարդապետութիւնը դատապարտեցին, եւ Արիոսը նզովեցին, եւ Կոստանդիանոս ալ զայն աքսորեց: Նիկիոյ ժողովին հայրապետներուն կը կարդացուի Հայոց Մեծաց Արիստարքոս կամ Արիստակիսոս կամ Արսափիոս անունով եպիսկոպոսը, որ մեր Արիստակէսն է, թէպէտ օրինակէ օրինակ անունը աղաւաղուած: Յատուկ գործունէութեան կամ բանախօսութեան յիշատակ մը չունինք, բայց արդէն այնչափ եպիսկոպոսներուն մէջէն միայն քանի մը հատ պայքարողներու անունները միայն կը տեսնուին ժողովին ատենագրութեանց մէջ: Արիստակէս ժողովէն շիտակ վերադարձաւ Վաղարշապատ արժանահաւատ բանիւ, եւ քսան կանոնեալ գլխովք ժողովոյն (ԽՈՐ. 177), եւ Գրիգոր ուղղափառ հաւատքի յաղթանակին վրայ ուրախանալով կ'ընդունի եւ կը հռչակէ Նիկիային կանոնները, եւ սուղ ինչ գլուխս յինքնէ ի կանոնս ժողովոյն յաւելու (ԽՈՐ. 177):



ԽԱՉՎԵՐԱՑը Հայ Եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն վերջինն է: Այն Խաչին նուիրուած տօներուն մէջ ամենակարևորն է, որովհետև նուիրուած է գերութենէն խաչի վերադարձի, անոր բարձրացման և փառաբանութեան պատմական յիշատակին: Հայաստանեայց Եկեղեցին Խաչվերացը կը տօնէ Սեպտեմբերի 11-17 ժամանակահատուածին հանդիպող Կիրակի օրը, իսկ տօնի յաջորդ օրը մեռելոց է: 610 թ. պարսից Խոսրով արքան մեծաքանակ զօրքով կը յարձակի Բիզանդական կայսրութեան վրայ: Սկզբնական յաջողութիւններէն ոգևորուած՝ պարսկական զօրքերը 614 թ. կը մտնեն Երուսաղէմ: Շատերուն կը սպաննեն եւ շատերն ալ գերի կը վերցնեն: Վերջիններուն մէջ էր նաև Երուսաղէմի Զաքարիա հայրապետը: Բայց պարսիկներն այսքանով չեն բաւարարուիր. կը մտնեն Ս. Յարութեան տաճար և գերի կը վերցնեն այնտեղ պահուող Աստուածընկալ Ս. Խաչը, որ Դ դարի սկզբին Կոստանդիանոս կայսեր մօր Հելինէի ձեռքով գտնուէր և պաշտամունքի առարկայ էր դարձեր բոլոր քրիստոնեաներու համար: 628 թ. բիզանդական զօրքերը Հերակլ կայսեր գլխաւորութեամբ խաչափայտը վերադարձնելու համար կը պատերազմին պարսիկներու դէմ: Բիզանդական զօրքին կ'օժանդակէ նաև հայկական զօրախումբը Մծեժ Գնունիի գլխաւորութեամբ: Տիրոջ օգնութեամբ բիզանդացիները յաղթանակ կը տանին: Ս. Խաչը հանդիսաւոր թափօրով կը տեղափոխուի հայոց Կարին քաղաքը: Իսկ Կարինէն զայն կը տեղափոխեն Կ. Պոլիս, ապա Երուսաղէմ: Գերեզարձի ճանապարհին Տիրոջ խաչափայտը կը բարձրացուէր և ցնծութեան առիթ կ'ըլլար ժողովուրդի համար: Խաչը քրիստոնեաներու համար Աստուծոյ զօրութիւնն է ու պարծանքներու պարծանքը, որուն վրայ իր անմեղ արիւնը թափեց Քրիստոս տալով մեզ յաղթութեան զենքը՝ ընդդէմ սատանային ու անոր խաբկանքներուն: Յիսուս խաչի վրայ ցոյց տուաւ իր անհուն սէրը մարդկութեան հանդէպ, և խաչը դարձաւ մեզի համար յոյսի, սիրոյ և փրկութեան երաշխիք:

Սուրբ Գէորգ Զօրավար

Խաչվերացէն 13 օր ետք եկող շաբաթ օրը Ս. Գէորգ է: Նահատակուած է մօտաւորապէս 303 Ք.Ե. Նիկումեդիոյ մէջ:

Մեծցեր է քրիստոնեայ ընտանիքի մէջ: Երբ Հռոմէացի Դիոկղետիանոս կայսրը (284 - 305) հրովարտակ կը հրատարակէ քրիստոնեաներուն դէմ, Գէորգ զօրավարը կը պատռէ Նիկումեդիա քաղաքի հրապարակին վրայ կախուած այս արքունական հրամանը:

Այս պատճառով կը չարչարուի եւ կը նահատակուի որովհետեւ կը մերժէ ուրանալ իր քրիստոնէութիւնը:

Բազմաթիւ աւանդութիւններ հիւսուած են Ս. Գէորգի մասին: Ասոնցմէ ամենածանօթը այն է որ Գէորգը սպաննելով վիշապ մը ազատեւ է կոյս մը, եւ ասոր համար կ'ընդունուի որպէս վիշապասպան սուրբ:

Անգլիացիները իրենց պահապան սուրբը կը համարեն Ս. Գէորգը (Saint George): Սուրբ Գէորգի անունով եկեղեցիներ ունին Հայերը, եւ եւրոպական ժողովուրդները:



Գիտելի ր թէ

. Խաչվերացին օրը, ռեհանով զարդարուած խաչով տեղի կունենայ Թափօր-Անդաստանը:

. Հայց. Եկեղեցւոյ սովորութիւններէն է Խաչվերացի տօնին օրհնել զանազան միրգեր:

. Պօղոս Առաքեալ կը գրէ. «Գալով ինծի քաւ լիցի եթէ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ»:

. Հայց. Եկեղեցին ունի Ս. Խաչի 3 տօներ եւս. Գիւտ Խաչի, Վարագայ խաչ, Երեւման խաչ

. Ս. Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի վերամուտը ամէն տարի Խաչվերացին տեղի կ'ունենայ:

Վարագայ Սուրբ Խաչ Ամէն տարի Սուրբ Գեորգին յաջորդող Կիրակին, որ միշտ Սեպտեմբեր 28-ի ամենէն մօտ Կիրակին է, Հայաստանեայց Եկեղեցին կը նշէ խաչին նուիրուած Վարագայ Ս. խաչի տօնը:

Այս տօնը կը վերագրուի Ս. խաչի երեւման Վարագ լեռներու բարձունքներուն վրայ կառուցուած վանքին մէջ: Ըստ աւանդութեան, Ս. Հռիփսիմէն այդ տեղ պահեր է իր վիզի խաչը: Հոն, շուրջ 653 թուականին, երկու ճգնաւորներ, Յովէլ եւ Թողիկ, տեսիլք մը կ'ունենան ուր հրաշալի լուսաւորութիւն մը զիրենք կ'առաջնորդէ դէպի Վանի Վարագ լեռներ ուր լուսաւորութիւնը կը կեդրոնանայ ու ի յայտ կու գայ խաչ մը:



Վարագավանք Կը գտնուի Վան քաղաքին հարաւարեւելեան կողմը, Վարագ լեռան արեւմտեան լանջին: 653-ին երբ յայտնի կը դառնայ Վարագայ Ս. Խաչի «Նշան»ի տեղը, Ներսէս Գ. կաթողիկոս Տայեցին, կը կառուցէ Ս. Նշան եկեղեցին եւ կը հաստատէ Վարագայ Ս. Խաչի տօնը:

870-ին արաբները կը գրաւեն Վարագավանքը, սակայն շատ չանցած Աշոտ Արծրունի իշխանը կ'ազատագրէ զայն:

1857-ին Վարագավանքի վանահայր կը նշանակուի Խրիմեան Հայրիկը «Մկրտիչ Ա. Խրիմեան Վանեցի»: 1915-էն ի վեր Վարագավանքը լքուած է եւ ներկայիս աւերակ վիճակի մէջ կը գտնուի:

Եզակի գիրեր

Հայերէն գիրերով Sudoku

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր իւրաքանչիւր

- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

	դ				թ		զ	զ
թ	ե			է	ը			
է			բ		դ		ը	
		զ		ե	է	դ		
	է	ե				ա	զ	
		ը	զ	դ		է		
	բ		ա		զ			թ
			դ	զ			ե	է
զ	զ		է				բ	

Ծածկագիրը

Ինչո՞ւ Յիսուս Յորդանան գետ եկաւ:

Օգտագործելով ծածկագիրը գտէ՛ք հարցումին պատասխանը:

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	ի	լ	խ
38	37	36	35	34	33	32	31	30	29	28	27	26
ծ	կ	հ	ձ	ղ	ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ
25	24	23	22	21	20	19	18	17	16	15	14	13
ջ	ռ	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք	օ	ֆ	
12	11	10	9	8	7	6	5	4	3	2	1	

18.28.10.15. 5.10 36. 38.27.28.27. 34.38.18. 32.17 18.15. 7.35. 38.17.38.17

36.34. 8 34.24.38. 5 18.15. 9. 23.38.17.17. 32.10. 28 24.15.21.19.32

19.24. 7. 8. 15. 5. 34. 27.15. 5 23.38.19. 38. 7

Մատթեոս 3:13

Քրիստոսի ներկայութիւնը աղօթողներու մէջ

«Ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունով, ես հոն եմ՝ անոնց միջեւ»: Մատթէոս 18:20


Եկեղեցի բառը երկու իմաստներով կը գործածուի՝

* նիւթական եկեղեցի = քարեղէն շէնքը

* հոգեւոր եկեղեցի = հաւատացեալ ժողովուրդը

Ամբողջացուր նախադասութիւնները, տունիկներուն մէջ գրելով հետեւեալ բառերը

հաւատան - կ'օգնեն - կ'աշխատին - սիրեն



Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ
Դպրոցներու նշանաբանը: Մարկոս 10.14

Յիսուս, մանուկները, արգելք, այդպիսիներուն,
արքայութիւնը

----- ըսաւ.

«Ձգեցէք որ ----- ինծի գան, ----- մի՛

ըլլաք անոնց, որովհետեւ ----- է Աստուծոյ

-----»:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին հիմնուեցան
«Հայաստանեայց Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցները».

- ա. 1900
- բ. 1929
- գ. 1979
- դ. 1980

2.- Ո՞ր տարին հիմնուեցաւ
Մոնթրէալի Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցը.

- ա. 1900
- բ. 1929
- գ. 1979
- դ. 1980

3.- Այս տարի «Մաշտոցի
Արձագանգ»ի քանիերորդ
տարեդարձն է:

- ա. 6
- բ. 32
- գ. 17
- դ. 19

4.- Աստուածաշունչը կը բաղկանայ
երկու մասերէ. առաջին մասը
կը կոչուի «--- Կտակարան» իսկ
երկրորդը՝ «Նոր -----»:
Առաջին մասը գրուեր է Քրիստոսէ ---
-- իսկ երկրորդը ----- ետք:

5.- Ի՞նչ կը կոչուի այն տաղաւարը
որ կը տօնենք Սեպտեմբեր ամսուան
ընթացքին.

- ա. Խաչվերաց
- բ. Սուրբ Ծնունդ
- գ. Սուրբ Զատիկ

դ. Սուրբ Աստուածածնի
Վերափոխում

6.- Հետեւեալ սուրբերէն որո՞ւն տօնը
կը տօնենք Սեպտեմբերին.

- ա. Սուրբ Սարգիս
- բ. Սուրբ Գեորգ
- գ. Սուրբ Թադէոս
- դ. Սուրբ Պետրոս

7.- Ի՞նչ կը կոչուի խաչին
կեդրոնական մասը.

8.- Յիսուս քանի՞ տարեկան էր երբ
մկրտուեցաւ.

- ա. 6
- բ. 32
- գ. 30
- դ. 33

9.- Ամբողջացո՛ւր Հայց. Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու
Մաղթերգին առաջին 4 տողերը:
Կիրակնօրեայ Սուրբ յարկին
մենք ----- ենք լուսաբաղձ
Կայծերու պէս -----
Յայտած՝ սրտէն պերճ -----:

10.- Ամբողջացո՛ւր Հայց. Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Դպրոցներու
Մաղթերգին երկրորդ 4 տողերը:
Ուստի քալենք -----,
Ո՛վ հարազատ զարմ -----
----- զընացքով
Լոյս-աղբիւրին -----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. և Զ. դասարաններու անկիւն

1.- Ո՞վ է ներկայիս Մեծի Տանն

Կիլիկիոյ Կաթողիկոսը.

ա. Սահակ Բ. Խապայեան

բ. Արամ Ա.

գ. Գարեգին Ա.

դ. Գարեգին Բ.

բ. Յայտնութիւնը Քրիստոսի

գ. Յարութիւնը Քրիստոսի

դ. Անունը Քրիստոսի

2.- Ո՞վ է ներկայիս Ամենայն Հայոց
Կաթողիկոսը.

ա. Սահակ Բ. Խապայեան

բ. Արամ Ա.

գ. Գարեգին Ա.

դ. Գարեգին Բ.

6.- Պատարագի ընթացքին ո՞վ
(որո՞նք) կ'երգէ (կ'երգեն) «Քրիստոս
ի մէջ մեր յայտնեցաւ...».

ա. Պատարագիչը

բ. Սարկաւազը

գ. Քահանան

դ. Դպիրները

3.- Ըստ Ա. Կորնթացիներուն 13րդ
գլուխին երեք հիմնական շնորհներն
են Հաւատք, Յոյս եւ Սէր եւ այս
երեքէն ամենէն մեծն է...

ա. հաւատքը

բ. յոյսը

գ. սէրը

դ. Աստուածային հիմնական
շնորհները թիւով 4 են:

7.- Ս. Պատարագի ընթացքին Ողջոյն
տուողը կ'ըսէ: «Քրիստոս - մէջ ---
յայտնեցաւ»:

8.- Ս. Պատարագի ընթացքին ողջոյն
ստացողը կը պատասխանէ. «-----
է ----- Քրիստոսի»:

4.- Վերջին ընթրիքի ընթացքին
Յիսուս հաստատեց Հաղորդութեան
խորհուրդը. Աւագ շաբթուան ո՞ր օրն
էր այդ.

ա. Երկուշաբթի

բ. Ուրբաթ

գ. Հինգշաբթի

դ. Չորեքշաբթի

9.- Հինգ տաղաւարներն են.- Ս.
Ծնունդ, Ս. Զատիկ Այլակերպութիւն,
Վերափոխումն Ս. Աստուածածնի եւ
....

ա. Մեռելոց

բ. Խաչվերաց

գ. Ծաղկազարդ

դ. Համբարձում

5.- Սուրբ Ծնունդի մաղթանքն է.-
Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,
օրհնեալ է...

ա. Քրիստոսի Ծնունդը

10.- Ս. Զատիկէն 40 օրեր ետք կը
տօնենք.

ա. Համբարձում

բ. Երեւում

գ. Այլակերպութիւն

դ. Յայտնութիւն

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

Ամբողջացո՛ւր:

1.- Հայրապետական յատուկ
գիրով, Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա.
Կաթողիկոս Մեծի Տանն
Կիլիկիոյ 2011 տարին
հռչակեց, - - - - -
տարի:

2.- 325 թուականի Նիկիոյ
ժողովին Հայաստանեայց
եկեղեցւոյ ներկայացուցիչն
էր, - - - - - ը Գրիգոր
Լուսաւորչի որդին:

3.- 325 թուականին
գումարուած Նիկիոյ
ժողովին մասնակցեցան - - -
հայրապետներ (կամ անոնց
ներկայացուցիչները):

4.- Առաջին տիեզերական
ժողովը սեղի ունեցաւ
- - - - - մէջ, - - -
թուականին :

5.- Խաչվերացը կը տօնենք
Սեպտեմբեր - - ի ամենէն
մօտ զուգադիպող Կիրակի
օրը:

6.- Հայաստանեայց
եկեղեցւոյ խաչի տօներն են.
ա. - - - - խաչի
բ. - - - - - խաչ
գ. - - - - - խաչ
դ. Խ - - - - -

7.- Խաչվերացէն 13 օրեր
ետք
Ս. - - - - - ին տօնն է, եւ
յաջորդ
օրը - - - - - Սուրբ Խաչ:

8.- Էջ 6-ի պակսող բառ, - - -
- - - է:

9.- Ամբողջացո՛ւր 7-րդ էջի
նախադասութիւնը:

10.- Սեպտեմբեր 11, 2011ին
Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ
Դպրոցը իր դռները կը
բանայ -- րդ յաջորդական
տարին ըլլալով:

Ս. ՅԱԿՈԲԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻՆ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԸ



Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեան իր 31-րդ տարեշրջանը բոլորեց: Կիրակի, 22 Մայիսի յետմիջօրէին, Ս. Յակոբ Վարժարանի Բաստրմաճեան սրահին մէջ տեղի ունեցաւ ամաւերջի հանդէսը՝ ի ներկայութեան հայ հոգեւոր արժէքներուն գիտակից ծնողներու եւ հովիւին՝ Արժ. Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի:

Ամփոփ եւ յաջող յայտագիր մը պատրաստուած էր: Աշակերտներ եւ ժողովուրդ յոտնկայս երգեցին Տէրունական աղօթքը: Ապա աշակերտները դարձեալ յոտնկայս աղօթեցին Ներսէս Շնորհալիի «Իմաստութիւն Հօր, Յիսուս»ը, ու երգեցին Կիրակնօրեայի քայլերգը:

Բացման խօսքը ըրաւ երկրորդականի աշակերտներէն՝ Առէն Պապիկեան: Ան իր խօսքին մէջ յիշեց կարեւոր միտք մը, որ քաղուած էր Եղիշէի պատմագիրքէն, եւ ըսաւ: «Քանզի հայր մեր զՍուրբ Աւետարանն գիտեմք, եւ զմայր՝ զԱռաքելական եկեղեցին կաթողիկէ»: Վարդանանց սերունդը այսպէս ուխտեց եւ դէպի նահատակութիւն գնաց քաջութեամբ:

«Հոգենորոգ գուարթութիւն» անունով կենդանի պատկեր մը պատրաստուած էր: Խումբ մը աշակերտներ դաստիարակիչ այս խաղը յաջողութեամբ ներկայացուցին: Գլխաւոր դերակատարն էր Արշակ Խշիշեան: Չարիք եւ ֆաաս հասցնելու բարքով պատանիի մը դերը ստանձնած էր ան: Խաղի վերջաւորութեան՝ անոր ընթացքը բարութեան փոխուած էր: Առողջ եւ Աստուծոյ շնորհքով դաստիարակութիւնը՝ կեանքին բարիք է:

Մանկապարտեզի ու Նախակրթարանի Ա. Եւ Բ. Դասարաններու աշակերտները «Սուրբ Աստուած», «Քրիստոս Ի մէջ մեր յայտնեցաւ» եւ «Մարմին Տէրունական» երգեցին: Ապա Աստուածաշունչէն ոսկեղէն համարներ արտասանեցին:

Նախակրթարանի Գ., Դ., Ե., Զ., եւ Երկրորդականի աշակերտները միասնաբար 23-րդ Մաղմուսը արտասանեցին:



Աշակերտական բոլոր ելոյթներն ալ բեմին վրայ մանկական ազատութեամբ եւ ուրախ հոգիով կատարուեցան ու ներկաները զուարթացուցին:

Պրն. Թորոս Պապիկեան, նախանձախնդիր տնօրէնը Կիրակնօրեային, իր խօսքին մէջ շնորհակալութիւններ յայտնելէ, եւ Միջին Արեւելքէն ներս հայ ըլլալու յարաբերաբար նպաստաւոր վիճակը պարզելէ յետոյ՝ ըսաւ հետեւեալը, թէ մեր ապրած շրջագիծին մէջ մկրտութիւնը ֆիզիքականօրէն եկեղեցւոյ չի կապեր հայ անհատը, թէ քրիստոնէութիւնը կը վարկաբեկուի կարգ մը եկեղեցականներու մոլորութիւններուն շուրջ տեղեկատուական յաճախակի արշաւներով, թէ քրիստոնէաբար աղօթելը կ'արգիլուի քաղաքական եւ կրթական հաստատութիւններու մէջ:

Պրն. Պապիկեան մատնանշեց Հայց. Եկեղեցւոյ շուրջ լարուած թակարդները, ակնարկեց մանուկները հակակրօն կամ ապակրօն գաղափարներով դաստիարակելու քաղաքականութեան, եւ ցոյց տուաւ Սուրբ Յակոբ Կիրակնօրեային նպատակը, ըսելով.

ա.- Հայց. Եկեղեցւոյ դաւանութեան եւ աւանդութեան համաձայն կրօնական դաստիարակութիւն տալ մանուկներուն ու պատանիներուն, որովհետեւ ուրիշ տեղ այդ դաստիարակութիւնը չի տրուիր: Եւ

բ.- Այդ դաստիարակութիւնը կ'ուզէ հայ ժողովուրդի նոր սերունդը գիտակից դարձնել իր կրօնքին, Մայրենի եկեղեցւոյն, ինչպէս նաեւ անոր քաղաքացիութիւնը կերտել հայ քրիստոնէական հիմքերու վրայ:

Ան վերյիշեցուց, թէ իւրաքանչիւր հայ ընտանիք պէտք չէ մոռնայ, որ հայ քրիստոնէական դաստիարակութիւնը իր իրաւունքն է եւ պատասխանատուութիւնը, որովհետեւ հայ քրիստոնէութիւնը շահուած է՝

ա.- Թաղէոս եւ Բարթողիմէոս առաքեալներուն նահատակութեամբ.

բ.- Ս. Գրիգոր Լուսաւորչի չարչարանքներով.

գ.- Սահակ-Մեսրոպ-Վռամշապուհի իմաստութեամբ, երազով եւ քրտինքով.

դ.- Աւարայրի հերոսներու արեամբ. եւ

ե. Նուարսակի դաշնագրի ստորագրութեամբ:

Պրն. Պապիկեան շեշտեց, որ Կիրակնօրեան ժապոն Վարդանանց է:

Տնօրէնի խօսքին յաջորդեց վկայագրերու, վկայականներու եւ նուէրներու բաշխումը:

Հովիւը հուսկ բանքով շնորհակալութիւններ յայտնեց տնօրէնին, ուսուցիչներուն եւ ծնողներուն: Գովեց անոնց նուիրումը: Եւ աշակերտներուն ուղղելով իր խօսքը՝ զանոնք հայ եկեղեցւոյ զինուորներ կոչեց, եւ վստահութեամբ յուսաց, որ անոնք իրենց ամենօրեայ դասընկերներուն մօտ Կիրակնօրեայի բարիքներուն մասին պիտի խօսին եւ զանոնք հոգեւոր կրթարանին աշակերտ ըլլալու հրաւիրեն:

Հանդէսը աւարտեցաւ աղօթքով եւ «Կիլիկիա» մաղթերգով: Նոյն առիթով, ըստ մեր Կիրակնօրեայի աւանդութեան՝ ներկաներուն բաժնուած էր «Մաշտոցի Արձագանգ» պարբերականի տարեկան բացառիկը:

* * *

Գիտես, սիրելի ընթերցող, որ ի՛նչ շահեկան է «Մաշտոցի Արձագանգ» ին ամէն մէկ թիւը: Քեզմէ կը խնդրեմ, որ անոր քարոզչութիւնը կատարես: Թէեւ անիկա աշխարհով մէկ հոչակ ունի, բայց որքան աւելի տուն հասնի՝ այնքան Կիրակնօրեային, եւ ուստի Հայ եկեղեցւոյ առաքելութիւնը կը տարածուի:

Տարեկան բացառիկին սկիզբը՝ Հովիւին եւ հոգաբարձութեան կողմէ նամակ մը կայ, ուր ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի 2011-ի կոնդակին անդրադառնալով գրուած է. «Մանուկները ժողովուրդի մը ապագան են: Հայ մանուկներն ալ՝ հայ ժողովուրդի ապագան են: Հետեւաբար, պատասխանատու դաստիարակութեամբ զանոնք պէտք է կրթել: Այսինքն՝ կրթել այնպէս՝ որ հայ մանուկները աճին երկնային ազատութիւնը շնչելով, զարգանան՝ սորվելով տեսնել բարին, գեղեցիկը եւ ազնիւը:

Մեր համայնքը իր կրթական հաստատութիւններէն Կիրակնօրեան հիմնելով՝ պատասխանատու դաստիարակութեան կարեւոր քայլ առած էր: Հարիւրաւոր մանուկներ այնտեղ Հայ եկեղեցւոյ ոգիին մէջ աճեցան ու կ'աճին: Այն ոգին ուղեղի լուացում չ'ուզեր, այլ կը պահանջէ յարգել անհատին զարգացումը՝ իբր քաղաքացի Աստուծոյ արքայութեան»:

Մոնթրէալի հայութեան պատասխանատուութիւնն ու պարտքն է Կիրակնօրեայ եւ եկեղեցի բերել իր մանուկներն ու պատանիները:

Ս. Յ.



2011-2012 Տարեշրջան (32րդ)

Վերամուտ՝

Կիրակի 11 Սեպտեմբեր, 2011 ժամը 10:30

Մանկապարտեզ : Ա. Բ. Եւ Գ. Դասարաններ (3 - 5

տարեկան)

Նախակրթարան : Ա. Բ. Գ. Դ. Ե. Եւ Զ. Դասարաններ

(6 - 11 տարեկան)

Երկրորդական : Ա. Բ. Գ. Դ. Եւ Ե. Դասարաններ

(12 - 16 տարեկան)

Գործունեություն՝

Ամեն Կիրակի Ժամը **10:30 – 1:00**

Յաւելեալ տեղեկություններու համար դիմել Տնօրէնին՝

Թորոս Պապիկեան

Հեռ. (514)-956-1277 email director@sourphagop.org

Կայքէջ՝

www.sourphagop.org

11րդ տարի

Ամսաթերթ՝

«Մաշտոցի Արձագանգ»

19րդ տարի

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (11-րդ տարի)

Այս թիւով.....

Արեւմտահայերէնի փրկութիւնը՝
թուային (digital) պարունակութիւն
ունենալու մէջ կը կայանայ Էջ 2

Հոկտեմբեր ամսուան բացատրական
բառարան: Էջ 3-5

Ս. Աւետարանիչներ.

Ս. Մատթէոս, Ս. Մարկոս,
Ս. Դուկաս, Ս. Յովհաննէս
Քրիստոսի 72 աշակերտները
Ս. Թարգմանիչ Վարդապետները
Ս. Մեսրոպ Մաշտոց
Ս. Եղիշէ Պատմիչ
Ս. Դաւիթ Անյաղթ
Ս. Սովսէս Քերթող
Ս. Գրիգոր Նարեկացի
Ս. Ներսէս Շնորհալի

Հսկան Էջ 6

Օշական գիւղի Մեսրոպ Մաշտոց
եկեղեցին Էջ 7

Փութանակի Թարգմանութիւն Էջ 7

Հաւատանք եւ վստահիւնք Աստուծոյ
Էջ 8

Յիսուսի Փորձութիւնը Էջ 9

Աններող Ծառային Առակը Էջ 10

Եգակի գիրքը Էջ 11

Ո՛րն է ճիշդ պատասխանը Էջ 12-15

Կիրակնօրեայի Գործունեութիւն Էջ 16

Հոկտեմբեր 2011 (ԺԹ տարի թիւ 2)



Թ... Թարգմանչաց

Խաչքարի Հեղինակ՝
Ժողովրդական Վարպետ
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարները

«Ճանաչել զիմաստութիւն եւ զիրատ
իմանալ զբանս հանձարոյ»: *Առակաց 1.2*
«Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է:
Առակաց 1.7

Խմբագրական՝

Արեւմտահայերէնի փրկութիւնը՝թուային (digital) պարունակութիւն ունենալու մէջ կը կայանայ

405 թուին ծնունդ առած հայերէնը արդէն 1606 տարեկան է: Լեզու մը, երիտասարդ մնալու համար, պարտի նորագոյն արուեստագիտութիւններու (technology) հետ քայլ պահել: Արդեօք լեզու մը կա թ որ չօգտագործեց ԺԵ. դարու Կիթէմպլըկի տպագրութեան գիտը: Ոչ, որովհետեւ այն լեզուները որոնք տպագրութիւն չունեցան, մեռան: (Հոս կ'արժէ յիշել թէ 2012 թուականին, մենք պիտի տօնենք Հայ տպագրութեան 500-ամեակը):

Այսօր, մենք կ'ապրինք թուային ժամանակաշրջանի մը մէջ: Գիրքեր, երգեր, արուեստի գործեր, արուեստագէտներ եթէ չունին թուային ներկայութիւն, տեղ չունին իրենց համակիրներու համակարգիչներուն եւ բջիջային հեռախօսներուն մէջ, եւ ուրեմս տեղ չունին ժողովուրդի մտքին մէջ:

Մենք կ'ընդունինք թէ արեւմտահայերէնի փրկութիւնը համազգային առաջնահերթութիւն է, սակայն պէտք է բաժնել պարտականութիւնները.

1. Այն հայ կազմակերպութիւնները որոնք օտար լեզուներով համացանցային ներկայութիւն են, պարտին նաեւ համահաւասար հայերէնով ներկայութիւն ունենալ:
2. Հայ ուսուցիչներ պարտին իրենց հայ աշակերտներուն հետ հայերէնով ե-նամակով (email) հաղորդակցութիւն ստեղծել:
3. Ուսուցիչներ պարտին իրենց աշակերտներուն քաջալերել Հայերէն գործածելու իրենց Facebook, Myspace, Twitter եւ այլ կայքէջերու վրայ:
4. Հայաստանեայց Եկեղեցին, պարտի իր բոլոր հաղորդակցութիւնները կղերականներու, ժողովականներու եւ ժողովուրդին միջեւ ընել նաեւ մետրոպատառ հայերէնով:
5. Գիրքեր որոնք կը տպագրուին թուղթերու վրայ (ԺԵ դար) պարտին նաեւ մատչելի ըլլալ թուային ձեւով որպէսզի նոր սերունդի զաւակները՝ անոնք որոնք հայերէն գիրքեր կը ճանչնան, կարենան կարդալ այս գիրքերը իրենց համակարգիչներուն, iphoneներուն եւ ipadներուն վրայ:
6. Իմաստալից ձեւով յիշատակենք Թարգմանչաց տօնը, կարդալով հայագրեալ Աստուածաշունչը, որուն թարգմանութեան համար յատկապէս հայերէն գիրքեր կեանք առին:

Եթէ մենք հաւաքաբար շարունակենք չգործածել հայերէնը մեր առօրեային մէջ, այն ատեն միայն մենք մեզ կրնանք այպանել:

Մենք, որպէս Կիրակնօրեայ Դպրոց եւ «Մաշտոցի Արձագանգ»ի խմբագրութիւն, մեր բաժինը կը բերենք այս համազգային պարտականութեան մէջ:

2000 թուականին, ստեղծեցինք մեր կայքէջը, որպէսզի հայերէնով ճաշու Աւետարանը թուային ներկայութիւն ունենայ համացանցին վրայ:

2002 Մեպտեմբերէն սկսեալ «Մաշտոցի Արձագանգ»ը որպէս ամսաթերթ զետեղեցինք համացանցին վրայ, թուային ներկայութիւն տալու համար անոր:

Մեր կարելիութեան սահմաններուն մէջ հայերէն որոշ գիրքերու տուինք թուային ներկայութիւն, համացանցի հետեւեալ հասցէներուն վրայ (ինչպէս կը տեսնէք, URL-ները հայերէն են:

<http://www.sourphagop.org/գիրքեր/դասագրքեր>

http://www.sourphagop.org/գիրքեր/այլ_գիրքեր

Յոյսով կը սպասենք որ բոլոր հայ կազմակերպութիւնները մետրոպատառ հայերէնը թուային ներկայութիւն դարձնեն իրենց համացանցային հաղորդակցութեան մէջ:

Հոկտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շրթ. 1	Եօթանասուններկու Աշակերտներ Քրիստոսի
Շրթ. 8	Սգ. Թարգմանչաց Վարդապետացն մերոց
Շրթ. 15	Ս. Աւետարանիչներ՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս
Կիր. 23	Գիւտ Ս. Խաչի
Շրթ. 29	Ս. Յովհան Ոսկեբերան Հայրապետ

Պահօր Օրեր: 5, 7, 12, 14, 19, 21, 26, 28

Սուրբ Աւետարանիչներ՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս



Ս. Մատթէոս



Ս. Մարկոս

Այս տարի Հոկտեմբեր 15-ին Հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ տօնը Քրիստոսի կեանքն ու քարոզչութիւնը պատմող աւետարաններու հեղինակներուն՝ Սուրբ աւետարանիչներ՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի:

Մատթէոս պաշտօնով մաքսաւոր էր՝ այսինքն հարկահաւաք, երբ Յիսուս զինք իր 12 առաքեալներէն մէկը ըլլալու կանչեց:



Ս. Ղուկաս



Ս. Յովհաննէս

Մարկոսի Աւետարանը չորս աւետարաններէն ամենէն կարճն է եւ գրուած է բոլորէն առաջ:

Ղուկաս յոյն բժիշկ մըն էր, որ աշակերտած էր Պօղոս առաքեալի եւ դարձած անոր հաւատարիմ գործակիցը եւ բազմաթիւ անգամներ անոր հետ ճամբորդած:

Յովհաննէս՝ Յիսուսի 12 Առաքեալներէն կրտսերագոյնն էր: Իր աւետարանը յատկանշական կերպով տարբեր է միւս աւետարաններէն: Անիկա Յիսուսը կը ներկայացնէ որպէս Աստուծոյ Խօսքը որ մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ:

Քրիստոսի 72 աշակերտները

Բացի 12 առաքելներէն Յիսուս ունէր նաեւ 72 աշակերտներ, որոնց ուղարկեց Բարի Լուրը քարոզելու բոլոր ազգերուն: Դժբախտաբար, Աւետարաններուն մէջ նշուած չեն այս աշակերտներու անունները: Աւետարաններուն մէջ, «աշակերտ» բառը ընդհանրապէս կը գործածուի Քրիստոսի բոլոր հետեւորդներու համար: Յիսուս Քրիստոսն իր առաքելներուն եւ աշակերտներուն «իբրեւ գառներ գայլերու մէջ»՝ երկու-երկու ուղարկեց՝ քարոզելու Աստուծոյ Արքայութիւնը՝ ըսելով. «Ով որ ձեզ լսէ՝ զիս լսած կ'ըլլայ, եւ ով որ ձեզ մերժէ՝ մերժած կ'ըլլայ զիս որկողն ալ» (տե՛ս Դուկաս Ժ 1-20): 12 առաքելներուն եւ 72 աշակերտներուն միջեւ գրեթէ տարբերութիւններ չկան. անոնք ունին նոյն իշխանութիւնը եւ նոյն առաքելութիւնը (Դուկաս Ժ 9, Թ 1), սակայն 72 աշակերտներուն բոլոր անունները, Բերլեհէմի սուրբ մանուկներու նման, միայն Աստուծոյ յայտնի են՝ գրուած երկնքի արքայութեան սրբազան գիրքին մէջ:

Հայ Առաքելական Եկեղեցին Քրիստոսի 72 աշակերտներու յիշատակութեան օրը կը տօնէ Վարագայ Խաչին յաջորդող շաբաթ օրը, որ այս տարի Հոկտեմբեր 1-ին կը հանդիպի:



Սբ. Թարգմանիչ Վարդապետները

Սբ Թարգմանիչ Վարդապետներու տօնը հայ ժողովուրդի ամենանուիրական եւ սիրուած ազգային-եկեղեցական տօներէն է: Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին սուրբ թարգմանիչ վարդապետներու անուան ներքեւ կը տօնէ Մեսրոպ Մաշտոցի, Եղիշէ Պատմիչի, Մովսէս Խորենացիի, Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացիի եւ Ներսէս Կլայեցիի (Շնորհալի) պայծառ յիշատակը:

Ս. Թարգմանիչներն իրենց անսահման ջերմութեամբ եւ հաւատքի լոյսով ցրեցին տիրող խաւարն ու ջերմացուցին հայ մարդու հոգին: Անոնց շնորհիւ Աստուածաշունչ մատեանը հայերէն թարգմանուեցաւ, եւ հայր առաջին անգամ ըլլալով հնարաւորութիւն ստացաւ իր մայրենի լեզուով կարդալու Աստուծոյ կենդանի խօսքը: Սրբազան թարգմանիչներն իրենց լայն գործունէութեամբ նպաստեցին Հայոց աշխարհի հոգևոր-մշակութային զարթօնքին:

Ս. Գրքի թարգմանութեան յաջորդեցին Եկեղեցւոյ Ս. Հայրերու բազմաբնոյթ երկերու հայերէն թարգմանութիւնները, որոնցմէ շատեր այսօր, իրենց բնօրինակներու կորստեան պատճառով, բնագրի արժէք ստացեր են:

Հայ Առաքելական Եկեղեցին սբ. Թարգմանիչ Վարդապետներու՝ Մեսրոպի, Եղիշէի, Մովսէս Քերթողի, Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացիի եւ Ներսէս Կլայեցիի (Շնորհալի) յիշատակը կը տօնէ Ս. Խաչի Դ Կիրակիին յաջորդող շաբաթ օրը:

Ս. Մեսրոպ Մաշտոց (362-440) ստեղծած է Այբուբենը 405 թուականին: Ծնած է Տարօն քաղաքի Հացեկաց գիւղին մէջ, մօտաւորապէս 362 թուականին: Շատ լաւ գիտեր նաեւ յունարէն, պարսկերէն, ասորերէն, եւ վրացերէն: Արքունիքի ատենադպիր, եւ ապա զինուորական ծառայութիւն մտնելէ ետք 394 թուականին դարձած վանական: Հայաստանի տարբեր շրջանները քարոզելով՝ Մաշտոց խորապէս գիտակցած է իր ժողովուրդին սպառնացող վտանգին՝ երկրին մէջ տիրող օտար ազդեցութիւններու հետեւանքով եւ վճռած է ստեղծել հայոց գիրերը: Այդ նպատակով Սահակ Պարթեւ կաթողիկոսի եւ Վռամշապուհ թագաւորի աջակցութեամբ ան ուղուած է Ասորիք: Բաւական նեղութիւններէ ետք 405 թուականին Մաշտոց վերդարձած է հայրենիք իր հետ բերելով իր ստեղծած 36 գիրերը: Անկէ ետք, Ս. Սահակ հայրապետին ոգնած է Հայ դպրութեան տարածման: Բացած է դպրոցներ, եկեղեցական արարողութիւնները հայացնելու նպատակով կազմած է Պատարագամատոյց «Մաշտոցի եւ Ժամագրքի նախնական տարբերակները», սկսած է Աստուածաշունչի թարգմանութիւնը, գրած է քարոզներ: Վախճանած է 17 Փետրուար 440-ին Վաղարշապատի մէջ եւ թաղուած Օշական գիւղին մէջ:

Ս. Եղիշէ Պատմիչ (~ 410 - ~470) գրած է «Վարդանանց եւ հայոց պատերազմի մասին», Հայ մեծ պատմիչ եւ աստուածաբան եւ կրտսեր աշակերտ Ս. Սահակ Պարթեւի եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի: 434-441 կ'ուսանի Աղեքսանդրիոյ մէջ: Հայաստան վերադառնալէ ետք կը ծառայէ Վարդան Մամիկոնեանին որպէս զինուոր եւ դպրապետ: 450-451 Վարդանանց պատերազմին մասնակցելէ ետք կը լքէ զինուորական ասպարէզը, կը հեռանայ աշխարհական կեանքէն եւ կը դառնայ մենակեաց:

Ս. Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայ (~475-~550) Հայ մեծ իմաստասէր, ծնած է Տարօնի Ներգին գիւղին մէջ: Իր ուսումը ստացած է Աղեքսանդրիոյ մէջ: Հրապարակային փիլիսոփայական վեճերու մէջ իր յաղթանակներուն համար ստացած է Անյաղթ տիտղոսը: Ան հիմնադիրն է Հայաստանի մէջ տրամաբանական գիտութիւններու: Ան փիլիսոփայութեան տուած է բարոյագիտական ուղութիւն: Դաւիթ Անյաղթի մեծագոյն գրական գործը «Սահմանք Իմաստասիրութեան» գործն է որ մէկ հազարամեակ եղած է մեկնողական աշխատութիւններու առարկայ: Ան նաեւ ստեղծած է բազմաթիւ երգեր եկեղեցւոյ համար:


Ս. Մովսէս Քերթոզ Սիւնեցի (է. դար) Իր ծննդեան եւ մահուան թուականները անյայտ են: Եղած է Է. դարու երկրորդ կէսի աստուածաբան, թարգմանիչ, ծիսագետ եւ երաժիշտ-տեսաբան:

Ս. Գրիգոր Նարեկացի (951- 1003) Բանաստեղծ, երաժիշտ, Հայ առաքելական եկեղեցւոյ տօնելի սուրբերէն: Անոր ամենէն աւելի ծանօթ ստեղծագործութիւնն է «Մատենան Ողբերգութեան»ը, որ աւելի հանրածանօթ է իբր «Նարեկ» աղօթագիրքը:

Նարեկացիի «Մատենան Ողբերգութեան»ը հրատարակուած է գրաբար, աշխարհաբար՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն եւ թարգմանուած է բազմաթիւ լեզուներու ինչպէս ֆրանսերէն, անգլերէն, պարսկերէն, իտալերէն, գերմաներէն, սպաներէն: Հետաքրքրական է նաեւ թէ նոյն այս գլուխ-գործոցի գրչագիր ընդօրինակութիւններէն մեզի հասած է 150-էն աւելի օրինակներ:

Ս. Ներսէս Շնորհալի (1102 - 1173) Բանաստեղծ, երաժիշտ, Ամենայն հայոց կաթողիկոս, Ներսէս Դ. Կլայեցի, կոչուեր է «Շնորհալի» իր բացառիկ գիտութեան, առաքինի վարքին համապատասխան: Ան կրած է նաեւ բազմաթիւ այլ որակաւորներ, որոնցմէ են «Երկրորդ լուսաւորիչ», «Եռամեծ վարդապետ», «Երանաշնորհ սուրբ», «համահրեշտակ» եւայլն:

Ներսէս Շնորհալիի հոգեւոր բանաստեղծութիւնները թիւով շատ են: Անոնցմէ ամենէն աւելի ծանօթ է «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, որ 24 տուներէ բաղկացած գեղեցիկ բանաստեղծութիւն մը կարելի է համարել: Այս տուններէն իւրաքանչիւրը կը վերագրուի օրուան 24 ժամերէն իւրաքանչիւրին: Անպարզ ու նոյն ատեն խորաթափանց աղօթք մըն է:



Մեսրոպ Մաշտոցի արձանը՝ Մատենադարանի մուտքին



Մագաղաթ

Հսկան

Երեւանի Մաշտոցի պողոտայի վերջաւորութեան կը գտնուի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանը: Ան իր նմանը չունի ամբողջ աշխարհի մէջ: Այնտեղ կը պահուին միայն ձեռագիր մատենաներ:

Տ ե ս ա կ - տ ե ս ա կ մատենաներ կան Մատենադարանին մէջ. ամենն ալ շատ արժեքաւոր են: Բայց ամենէն հետաքրքրական երկու մատենաները գիտէ՞ք որոնք են. աշխարհի ամենէն մեծ ձեռագիր մատենան՝ հսկան եւ ամենէն փոքրը՝ թզուկը:

Հսկան, որ ծանօթ է «Մշոյ ճառքնոսի» անունով կը կշռէ 30 քիլո... առանց կողքի: Անոր մէկ էջը շինուած է մէկ հորթի կաշիէ եւ ունի 700 էջեր: Վարդան Կարնեցի անունով գրիչը երեք տարի աշխատած է այս մատենանը ընդօրինակելու համար: Այս մատենանին էջերը նկարներով զարդարած է Ստեփանոս:

1022 թուականին, հսկան կը պատկանէր հայ մարդու մը: Մելճութ թուրքերը կը գողնան զայն եւ երկու տարիներ ետք կը ծախեն դրացի հայ գիւղացիներուն 4000 ոսկիի: Գիւղացիները դրամահաւաք կ'ընեն, հսկան կը գնեն ու զայն կը պահեն Մուշ քաղաքի Սուրբ Առաքելոց վանքին մէջ: 700 տարիներ շարունակ հսկան հոն կը մնայ:

1915-ի ցեղասպանութիւն երբ կը սկսի, երկու հայ կիներ որոնք կը փախչէին թուրքերէն, կը պահուրտին Ս. Առաքելոց վանքին աւերակներուն մէջ: Յանկարծ փլած պատերուն տակ կը տեսնեն ... մեր հսկայ մատենանը: Այս երկու կիները կ'որոշեն իրենց հետ փախցնել եւ ազատել այս թանկագին ձեռագիրը: Եւ որովհետեւ ան

շատ ծանր էր, զայն կը կիսեն երկուքի ու ամէն մէկը կ'առնէ մէկ կէս ու ճամբայ կ'ելլեն:

Չենք գիտեր թէ ի նչ պատահած է այդ երկու հայուհիներուն: Միայն գիտենք թէ այս կամ այն ձեւով հսկային մէկ բաժինը կը բերուի մատենադարան: Տարիներ շարունակ ոչ ոք կը գիտնայ թէ միւս կէտը ո՞ւր է: Օր մըն ալ մէջտեղ կ'ելլէ որ հսկային երկրորդ մասը թաղուած է Էրզրում քաղաքի հայկական եկեղեցոյ բակին հողին տակ: Վերջապէս, այս նշանաւոր մատենանին երկու կէտերը դարձեալ կը միանան իրարու...

Երբ Մատենադարան այցելէք կրնաք տեսնել Հսկան ցուցաբեկին մէջ եւ թզուկը, ճիշտ իր քովը:



Օշական գիւղի Մեսրոպ Մաշտոց եկեղեցին

Մեսրոպ Մաշտոցի անունը կրող այս եկեղեցին կառուցուած է 1875 թուին, Գեորգ Դ. Կաթողիկոսի օրով: Սուրբին մասունքները կը հանգչին եկեղեցւոյն խորանին տակ: 1962 թուականին, Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600-ամեակին առիթով, գիւղի մուտքին զետեղուեցաւ նաեւ յուշարձան մը՝ հայ գիրերու նուիրուած կոթողը: Կոթողը կը ներկայացնէ բացուած մատեանի նմանող երկու յուշասալեր, որոնցմէ ձախ կողմին վրայ քանդակուած է հայերէն այբուբենը: Ան՝ այբուբենին նուիրուած առաջին յուշարձանն է (տեսնել ձախին): 2005-ին, Հայ գիրերու գիւտին 1600-ամեակին առիթով Մեսրոպ Մաշտոցի եկեղեցւոյ պարտեզին մէջ տեղադրուեցան 36 գիրերը որպէս խաչքար: (որոնցմէ Թ գիրը կը գտնէք այս թերթի առաջին էջին վրայ):



Փութանակի թարգմանութիւն

Բոլորիս ծանօթ են, անպայման, Կորին Սքանչելի, Եզնիկ Կողբացի եւ Մովսէս Խորենացի անունները: Անոնք Մեսրոպ մաշտոցի աշակերտներն են որոնք կը դասուին մեր առաջին թարգմանիչներու կարգին: Հայաստանեայց եկեղեցին մեր թարգմանիչները սրբացնելով անոնց յատկացուցած է իւրայատուկ յիշատակութիւն, որ կը տօնենք Հոկտեմբեր ամսուան ընթացքին:

Բոլորիս ծանօթ է նաեւ այն իրողութիւնը թէ առաջին գիրքը որ հայերէնի կը թարգմանուի 408-415 թուականներուն միջեւ Սուրբ Գիրքի Հին ուխտն էր կատարուած Եօթանասնիցի վրայ: Նոյնքան հետաքրքրական է նաեւ գիտնալ թէ Նոր Ուխտի հայերէն լեզուով թարգմանութիւնը եղած է ասորերէն հին թարգմանութեան մը հետեւողութեամբ: Այս թարգմանութիւնն է որ կոչուած է «փութանակի թարգմանութիւն», որ կը նշանակէ հապճեպով, աճապարանքով կատարուած թարգմանութիւն:



*Միջնադարեան Հայ
Ձեռագիր, ԺԲ դար*

Հաւատանք եւ վստահինք Աստուծոյ

Նկարներուն վրայ գրէ անոնց յարմարող համարներու թիւը:

Ա - Ե՛լ, առ մանուկն ու անոր մայրը եւ փախիր Եգիպտոս:
Անոնք վստահեցան Աստուծոյ եւ գացին: Մատթէոս 2:13

Բ - Միայն հրահանգ մը տուր եւ ծառան պիտի առողջանայ: Ղուկաս 7:7
Նոյնիսկ Իսրայէլի մէջ այսչափ հաւատք չգտայ: Ղուկաս 5:27-28




Գ - Ինձի հետեւէ, ըսաւ Յիսուս: Եւ մաքսաւորը անոր հետեւեցաւ: Ղուկաս 5:27-28 , եւ եղաւ Յիսուսի աշակերտը:

Դ - Կը հաւատային որ իրենց զաւակը «Բարձրեալին մարգարէն պիտի կոչուի եւ Տիրոջ առջեւէն պիտի քալէ»: Ղուկաս 1:76

Ե - Ապաշխարեցէք որովհետեւ երկինքի արքայութիւնը մօտեցած է: Մատթէոս 3:2

Զ - Խնդրեցէ՛ք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտրեցէք եւ պիտի գտնէք, բախեցէք եւ պիտի բացուի ձեզի: Ղուկաս 11:9

Աստուած կը խոստանայ մտիկ ընել մեզի երբ աղօթենք:



Յիսուսի Փորձութիւնը

Մատթէոս 4:1-11


Յիսուս Սատանային փորձուեցաւ անապատին մէջ ուր քառասուն օր եւ զիշեր ծոմապահութեամբ անցուցած էր եւ անօթի:

Սատանան ըսաւ.

«Եթէ Աստուծոյ որդին ես, ըսէ՛ որ այս քարերը հաց դառնան»:

Յիսուսի պատասխանը գտեք բառերը ամբողջացնելով հետեւեալ գիրերով ու վանկերով.

իօ	ւի	բո	աց	ապր	քեր
n	ն	տուած	արդ	այ	



« Մ _ _ _ _ _ այն հ _ _ ով չ՝ _ _ _ _ _ իր
 _ _ _ _ _ լ _ _ լոր այ _ _ իօս _ _ _ _ _ ով
 _ _ _ _ _ ր Աս _ _ _ _ _ _ _ _ _ _ սած է »

Մատթէոս 4:4



Աններոյ Ծառային Առակը

Մատթեոս 18: 21-35

Առակին չորս նախադասութիւնները ընդօրինակէ իրենց յարմար տեղերը՝ վարի նկարներուն վրայ:

- Բանտ նետել տուաւ իր ծառայակիցը:
- Համբերէ եւ ժամանակ տուր ինծի եւ բոլորը կը վճարեն քեզի:
- Ծառային Տէրը գթաց եւ պարտքը շնորհեց:
- Պարտքդ վճարէ ինծի:



Պետրոս հարցուց. «Տէ՛ր քանի՞ անգամ եթէ եղբայրս մեղանչէ ինծի դէմ պէտք է ներեմ իրեն. մինչեւ եօ թը անգամ:»

Ջնջեցէք թիւ եօթերը եւ գտէք Յիսուսի պատասխանը՝

7	n	7	չ	7	թ	7	է	7	ե
o	7	թ	7	ը	7	ա	7	ն	7
7	գ	7	ա	7	մ	7	ա	7	յ
լ	7	ե	7	o	7	թ	7	ա	7
7	ն	7	ա	7	u	7	n	7	ւ
ն	7	ա	7	ն	7	գ	7	ա	7
մ	7	ե	7	o	7	թ	7	ը	7

Իրարու միացուր այս բառերն ու անոնցմէ իւրաքանչիւրին յարմարող սահմանումը:

- | | |
|----------------|--|
| ա. Գրիչ | 1. Հորթի կամ գառնուկի մորթով շինուած գրելու կաշի |
| բ. Վանական | 2. Հին գիրք |
| գ. Հորթ | 3. Կովու ձագ |
| դ. Մագաղաթ | 4. Վանքի մէջ ապրող կրօնական |
| ե. Մատեան | 5. Ձեռագիր մատեան ընդօրինակող մարդ |
| զ. Մատենադարան | 6. Հոն՝ ուր ձեռագիր մատեաններ պահուած են |

Խօսքեր՝ Ղազարոս Աղայեանէն

Բաւական չէ ազգասէր եւ հայրենասէր ըլլալը: Պէտք է քիչ մըն ալ լեզուասէր ըլլալ, պէտք է սիրել, պաշտել, գգուել հարազատ լեզուն. այս սերը միայն կը բանայ մեր առջեւ լեզուի անհատնում ճոխութիւնը, անոր նրբութիւնը եւ քաղցրութիւնը:

Եթէ բոլոր հայ մայրերն այնքան հայրենասէր եւ ազգասէր ըլլան, որ իրենց զաւակներուն հետ մայրենի լեզուով խօսին, անոնց սրտին մէջ ազգային պատուասիրութիւն ձգեն, հայրենիքի սէր, ալ այնուհետեւ ի՞նչ մահ կարող է սպառնալ մեզի:

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

ը	դ	բ	ե	ա	թ	է	զ	գ
թ	ե	զ	զ	է	ը	բ	ա	դ
է	զ	ա	բ	զ	դ	թ	ը	ե
զ	ա	զ	ը	ե	է	դ	թ	բ
դ	է	ե	թ	բ	զ	ա	զ	ը
բ	թ	ը	զ	դ	ա	ե	է	զ
ե	բ	է	ա	ը	զ	զ	դ	թ
ա	ը	թ	դ	զ	բ	զ	ե	է
զ	զ	դ	է	թ	ե	ը	բ	ա

է	զ		ե				ը	բ
	ա	բ			թ	դ	է	
	դ			զ			է	
դ		զ	բ	է				
		ա				թ		
				ը	ա	զ		զ
	է			ե			զ	
	զ	ը	դ			ե	զ	
ա	է				զ		թ	ը

Նախորդ «Եզակի գիրեր»ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր, իւրաքանչիւր

- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Ըստ Ղուկաս Աւետարանին 9.12-13ի
կ'իրիկնանար, Արձակէ՛, գտնեն, ամայի, ուտելիքը, ձուկ,
հաց, բաւականաչափ

Երբ օրը -----, տասներկու աշակերտները
մօտեցան Յիսուսի եւ ըսին.

- ----- ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերն
ու ազարակները, հանգչին եւ ուտելիք -----, որովհետեւ հոս
----- տեղ ենք:

Յիսուս անոնց ըսաւ.

- Դո՛ւք տուէք անոնց -----:

Անոնք ըսին.

- Ամբողջ մեր ունեցածը հինգ ----- եւ երկու ----- է. բայց
երէ՛ կ'ուզես, կ'երթանք ժողովուրդին համար -----
կերակուր կը գնենք

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ հայ
գիրերու գիւտը.

ա. 301

բ. 405

գ. 451

դ. 325

2.- Ո՞ր գիրքը առաջին անգամ
հայերէնի թարգմանուեցաւ.

ա. Մեր հայերէնի գիրքը

բ. Կարմիր գլխարկիկը

գ. Աստուածաշունչը

դ. Յայսմաւորքը

3.- Ո՞վ ստեղծեց հայ գիրերը.

Սուրբ Մ----- -g

4.- Ո՞ր էր հայ գրչութեան առաջին
կեդրոնը.

Վ-----տ

5.- Ո՞վ է այն սուրբ թարգմանիչը որ
գրած է «Հաւատով Խոստովանիմ»ը.

ա. Ս. Եղիշէ Պատմիչ

բ. Ս. Դաւիթ Անյաղթ

գ. Ս. Մովսէս Քերթոդ

դ. Ս. Ներսէս Շնորհալի

6.- Ո՞վ է այն սուրբ թարգմանիչը որ
գրած է «Նարեկ»ը.

ա. Ս. Եղիշէ Պատմիչ

բ. Ս. Դաւիթ Անյաղթ

գ. Ս. Մովսէս Քերթոդ

դ. Ս. Գրիգոր Նարեկացի

7.- Այս չորս Աւետարանիչներէն ո՞վ
բժիշկ էր.

ա. Ս. Մատթէոս

բ. Ս. Մարկոս

գ. Ս. Դուկաս

դ. Ս. Յովհաննէս

8.- Այս տարի, Հոկտեմբերի ո՞ր օրը
Ս. Խաչին Գիւտը կը տօնենք.

ա. 10

բ. 17

գ. 23

դ. 24

9.- Յիսուս ինչո՞վ կերակրեց 5,000ը.

ա. 5 հաց եւ 2 ձուկ

բ. 2 հաց եւ 2 ձուկ

գ. 2 հաց եւ 5 ձուկ

դ. 5 հաց եւ 5 ձուկ

10.- Քանի՞ կողով ճաշ աւելցաւ
5,000ը կերակրելէն ետք.

ա. 2

բ. 5

գ. 10

դ. 12

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. և Զ. դասարաններու անկիւն

1.- Գրէ՛ հայերէնի թարգմանուած առաջին համարը.

«Ճ----- գ-----
եւ գ----- ի-----
գ----- հ-----»:

2.- Հին Կտակարանի ո՞ր գիրքին առաջին գլխուն երկրորդ համարն է վերել յիշուածը.

ա. Առակաց
բ. Սաղմոսաց
գ. Ժողովող
դ. Երգ Երգոց

3.- Գրէ՛ 4 Սուրբ Աւետարանիչներուն անունները.

ա. Ս. -----
բ. Ս. -----
գ. Ս. -----
դ. Ս. -----

4.- Ամբողջացո՛ւր, գործածելով հետեւեալ թիւերէն երկուքը.
12, 24, 48, 72

Բացի -- առաքեալներէն Յիսուս ունէր նաեւ -- աշակերտներ:

5.- Հետեւեալներէն ո՞վ Ս. Թարգմանիչներուն մաս չի կազմեր.
ա. Եղիշէ Պատմիչ
բ. Ներսէս Շնորհալի
գ. Դաւիթ Անյաղթ
դ. Թորոս Ռոսլին

6.- Ո՞վ էր Յիսուսի կրտսերագոյն առաքեալը.

ա. Մատթէոս
բ. Մարկոս
գ. Ղուկաս
դ. Յովհաննէս

7.- Ըսէ՛ մէկ բառով՝
Ոսկի բերան ունեցող.

Ս. Յովհան Ո-----

8.- Ո՞վ գրեց «Վարդանանց եւ հայոց պատերազմի մասին».

ա. Ս. Եղիշէ Պատմիչ
բ. Ս. Ներսէս Շնորհալի
գ. Ս. Դաւիթ Անյաղթ
դ. Ս. Գրիգոր Նարեկացի

9.- Ո՞վ գրած է «Հաւատով խոստովանիմ»ը.

ա. Ս. Եղիշէ Պատմիչ
բ. Ս. Ներսէս Շնորհալի
գ. Ս. Դաւիթ Անյաղթ
դ. Ս. Գրիգոր Նարեկացի

10.- Ո՞վ գրած է «Նարեկ»ը.

ա. Ս. Եղիշէ Պատմիչ
բ. Ս. Ներսէս Շնորհալի
գ. Ս. Դաւիթ Անյաղթ
դ. Ս. Գրիգոր Նարեկացի

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Աստուածաշունչի հայերէնի
առաջին թարգմանութիւնը
կատարուեցաւ հետեւեալ յունարէն
թարգմանութենէն.

Եօթ----- կամ Septuagint LXX

Փ----- թարգմանութիւն

7.- Հայաստանի ո՞ր գիւղին մէջ
կը գտնուի Ս. Մեսրոպ Մաշտոց
եկեղեցին.

2.- Թո՛ւ է 6 սուրբ թարգմանիչները՝
ժամանագրական կարգով.

ա. (362-440) -----

բ. (410 - 470) -----

գ. (475-550) -----

դ. (Է. դար) -----

ե. (951-1003) -----

զ. (1102 - 1173) -----

8.- Ո՞ւր գրուած է:

«Մարդ միայն հացով չ'ապրիր
այլ բոլոր այն խօսքերով որ
Աստուած խօսած է».

Մատթէոս -.

3.- Ո՞ր սուրբ թարգմանիչն է
«Մատեան ողբերգութեան» հատորին
հեղինակը.

Ս. -----

9.- Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան
մատենադարանին մէջ գտնուող
«Հսկան» ծանօթ է նաեւ

Մշոյ -----
անունով:

4.- Ո՞ր սուրբ թարգմանիչն է «Նարեկ»
հատորին հեղինակը.

Ս. -----

10.- Ս. թարգմանիչներէն ո՞վ նաեւ
Ամենայն Հայոց Կաթողիկոս եղած է.

Ս. -----

5.- Ո՞ր սուրբ թարգմանիչը
փիլիսոփայական բանավեճերու մէջ
միշտ յաղթող էր.

Ս. -----

6.- Ըսէ՛ մէկ բառով «հապճեպով,
աճապարանքով կատարուած
թարգմանութիւն».

2011-2012 Տարեշրջան (32րդ) Գործունեություն՝ Ամեն Կիրակի Ժամը 10:30 – 1:00

Մանկապարտեզ : Ա., Բ. և Գ. Դասարաններ	(3 - 5 տարեկան)
Նախակրթարան : Ա., Բ., Գ., Դ., Ե., Եւ Զ., Դասարաններ	(6 - 11 տարեկան)
Երկրորդական : Ա., Բ., Գ., Դ. և Ե. Դասարաններ	(12 - 16 տարեկան)

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Տնօրէնին՝

Թորոս Պապիկեան

Հեռ. (514)-956-1277 email director@sourphagop.org

Կայքէջ՝

www.sourphagop.org

11-րդ տարի

Ամսաթերթ՝

«Մաշտոցի Արձագանգ»

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

19-րդ տարի

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (11-րդ տարի)

Այս թիւով.....

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը
խորհուրդները Էջ 2

Նոյեմբեր ամսուան բացատրական
բառարան Էջ 3-7

Տօն՝ Ս. Հրեշտակապետներ
Գաբրիէլի եւ Միքայէլի
Ս. Յովհան Ոսկերեբան
Յիսնակ
Սուրբ Գրիգոր Սբանչելագործ
Տօն Ս. Առաքեալներու Անդրեասի
եւ Փիլիպպոսի
Տօն Ս. Առաքեալներու Թադէոսի
եւ Բարթողոմէոսի
Սուրբ Նիկողայոս Զմիւռնացի՝
սբանչելագործ հայրապետը

Յիսուսի Մկրտութիւնը Էջ 8

Սէր թշնամիին հանդէպ Էջ 9

Յիսուս տասը բորոտները կը բուժէ
Էջ 10

Ս. Կոյսի տաճար ընծայումը Էջ 11

Եզակի գիրքեր Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 12-15

Կիրակնօրեայի գործունէութիւն Էջ 16

Նոյեմբեր 2011 (ԺԹ տարի թիւ 3)



Հ... Հրեշտակապետ

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական
Վարպետ, Ռուբէն Նալբանդյան

Ամսուան Համարները

«Արդ, ով որ իր անձը այս մանուկին պէս
կը խոնարհեցնէ՝ անիկա է մեծը երկինքի
արքայութեան մէջ»: Մատթէոս 18.4

«Զգո՛յշ, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն
մէկը. գիտցեք, որ անոնց հրեշտակները
երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր
Հայրս»: Մատթէոս 18.10

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը խորհուրդները

Այս թիւէն սկսեալ յաջորդական թիւերով պիտի ներկայացնենք մեր եկեղեցւոյ խորհուրդներէն իւրաքանչիւրը:

Ի՞նչ կը նշանակէ եկեղեցական խորհուրդ

Խորհուրդ կը կոչուին եկեղեցիէն ներս կատարուող արարողութիւնները որոնց միջոցաւ ի յայտ կու գայ Քրիստոսի փրկարար գործութիւնը եւ անոնց միջոցաւ, անտեսանելի ու խորհրդաւոր ձեւով հաւատացեալներուն կը բաշխուին երկնային շնորհները: Այս խորհուրդներուն միջոցաւ, Ս. Եկեղեցին կը շարունակէ Քրիստոսի փրկագործութիւնը եւ կ'օգնէ որ հաւատացեալները հոգեւոր կեանքի բարձրութեան վրայ ամուր եւ անսասան ժաման:



Քրիստոսի սուրբ Եկեղեցին ունի եօթը խորհուրդներ, որոնք են.

- ա. Մկրտութիւն
- բ. Դրոշմ
- գ. Ապաշխարութիւն
- դ. Հաղորդութիւն
- ե. Պսակ կամ ամուսնութիւն
- զ. Ձեռնադրութիւն
- է. Կարգ հիւանդաց կամ Վերջին օծում:

Խորհուրդին միջոցաւ աստուածային շնորհներու արժանանալու համար հաւատացեալէն կը պահանջուի.

- ա. Հաւատք
- բ. Երկիւղածութիւն
- գ. Հոգեկան պատրաստութիւն
- դ. Աղօթք

Խորհուրդը օրինաւորապէս կատարելու համար անհրաժեշտ են.

- ա. Խորհրդակատար ձեռնադրեալ պաշտօնեայ՝ քահանայ կամ եպիսկոպոս,
- բ. Խորհուրդին արտաքին կամ զգալի նշանը: Օրինակ՝ մկրտութեան ատեն՝ ջուրը, Ս. հաղորդութեան ատեն՝ սրբագործուած հացն ու գինին:
- գ. Խորհուրդին յատուկ բանաձեւն ու աղօթքը, որոնք կը սրբագործեն ենթական:

Նոյեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 5	Սրբոցն Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի
Շբթ. 12	Սրբոցն Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի
Շբթ. 19	Տօն Ամենայն Սրբոց
Կիր. 20	Բարեկենդան Յիսնակաց Պահոց
Բշ. 21	Սբ. Կոյսի Տաճար ընծայում, Ա. օր Յիսնակի Պահոց
Շբթ. 26	Սրբոցն Գրիգոր եւ Նիկողայոսի Սքանչելագործ Հայրապետացն Պահքի Օրեր :2,4,11, 16, 18, 21, 22, 23, 24, 25,

Տօն՝ Սուրբ Հրեշտակապետներու Գաբրիէլի եւ Միքայէլի



Միքայէլ հրեշտակապետը Իսրայէլի ժողովուրդին համար մարտնչելու ընթացքին: Երուսաղէմ, ձեռ. 2027, էջ 4բ, Աստուածաշունչ 1266 թ. Կիլիկիա, ծաղկող Թորոս Ռոպին

միջնորդներ հոգեւոր եւ նիւթեղէն աշխարհներուն միջեւ: Անոնք ունին իրենց ղեկավարները որոնցմէ ամենէն աւելի ծանօթ են Գաբրիէլը եւ Միքայէլը: Հին միջնադարեան մանրանկարչութեան մէջ յատկապէս, կը գտնենք Գաբրիէլ հրեշտակապետի պատկերը, Տիրամօր աւետելու ատեն:

Նոյեմբեր ամսուան առաջին կամ երկրորդ Շաբաթ օրը, Հայց. Եկեղեցին կը յիշատակէ հրեշտակապետներ Գաբրիէլի եւ Միքայէլի տօնը: Հրեշտակ կը նշանակէ պատգամաւոր, առաքեալ «ղրկուած»: Նախապէս անոր կը տրուէր երկնային դեսպան, պատգամաւոր, եւ կամ սուրհանդակ նշանակութիւնը: Աստուածաշունչը կը վկայէ որ հրեշտակները իբրեւ լուսեղէն ստեղծուած են առաջին օրը, լոյսի հետ միասին: Անոնք ժամանակի ներգործութենէն չեն ազդուիր եւ սեռային յատկանիշներ չունին:

Աստուածաշունչին մէջ հրեշտակներու մասին ակնարկութիւնները շատ են: Անոնք կը ներկայացուին իբրեւ բազմաթիւ, մեծագործ եւ զօրաւոր էակներ: Հին Կտակարանին մէջ անոնք Աստուծոյ ներկայացուցիչները կը նկատուին,



Գիտէի՞ր թէ... ներկայիս Ս. Թադէի վանքը կը գտնուի Պարսկաստանի Հիւսիս Արեւմտեան ծայրամասը: Վանքը որպէս քրիստոնէական հնագոյն եւ ճարտարապետական բարձր արժէք ներկայացնող կեդրոն, մաս կը կազմէ Իրանի պետութեան եւ ՅՈՒՆԷՍԿՈՅԻ կողմէ ընդունուած, ուշադրութեան արժանի յուշարձաններու շարքին:

Սուրբ Յովհան Ոսկեբերան (344/54-407 թթ.)



Սուրբ Յովհան Ոսկեբերանը, որուն տօնը այս տարի Հոկտեմբեր 30-ին տօնեցինք, ընդհանրական եկեղեցւոյ տասներկու վարդապետներէն մէկն է: Ծնած է Անտիոքի մէջ, ազնուական ընտանիքի մէջ, ազգութեամբ՝ ասորի: Հայրը մահացեր է երբ ան տակաւին մանուկ էր: Մօր բարի խնամքին շնորհիւ ստացեր է լաւ կրթութիւն՝ ուսանելով Ժամանակի հռչակաւոր հռետոր եւ ճարտասան Լիբանիոսի մօտ:

380 թուականին Մելիտոս եպիսկոպոսի թախանձագին հարկադրանքով սարկաւագ կը ձեռնադրուի: 386 թուականին Մելիտոսին յաջորդած Փլաբիանոս հայրապետը զայն քահանայ կը ձեռնադրէ: 397 թուականին կը վախճանի Կոստանդնուպոլսոյ Նեկտարիոս պատրիարքը, Արկադիոս կայսրը, տեղեակ ըլլալով սուրբ Յովհան Ոսկեբերանի համբաւի մասին, կը պատուիրէ, որպէսզի զայն անմիջապէս, անադմուկ բերեն Կոստանդնուպոլիս պատրիարք ձեռնադրելու: 398 թուականին տեղի կ'ունենայ անոր ձեռնադրութիւնը:

Իր հօտին նուիրուած հովիւր ոչ միայն քաղցրութեամբ կը խրատէր, այլ երբեմն յանդիմանութեամբ, այդ էր պատճառը, որ շուտով անուանի հայրապետը շատ հակառակորդներ կ'ունենայ: Այդ հակառակորդներու շարքին մէջ էր նաեւ Եւդոքսիա թագուհին, որ կը յանդիմանուէր հայրապետի կողմէ արքունական յոռի բարքերու պատճառով: Իր թշնամիներու սադրանքով 403 թուականին ան կ'աքսորուի, սակայն վախնալով ժողովուրդի ցասումէն և այդ օրերուն տեղի ունեցած երկրաշարժէն՝ արքունիքը ետ կը բերէ հայրապետը: 404 թուականին Ս. Յովհան Ոսկեբերանը դարձեալ կ'աքսորուի Կիլիկիոյ Կոկիսոն քաղաքը, աւելի ուշ՝ Բիւզանդիա: Զղիմանալով ճանապարհի դժուարութիւններուն 407 թուականին կը մահանայ: Անոր արտասանած վերջին բառերն են. «Փառք քեզ, Աստուած, փառք քեզ, ամէն ինչի համար փառք քեզ»:

438թ. սուրբի մարմինը մեծ հանդիսաւորութեամբ կը բերուի եւ կ'ամփոփուի Կ. Պոլսոյ Ս. Առաքելոց եկեղեցւոյ մէջ:

Ընդհանրական եկեղեցւոյ այս անխոնջ մշակի ոսկեբերան խօսքերը դարեր շարունակ առաջնորդէր և կրթէր են բազում եկեղեցական սերունդներ: Անոր խօսքերէն կատարուած մէջբերումներու կը հանդիպինք ամենուրեք: Ան յայտնի է իր Աստուածաշունչ մատեանի գիրքերու մեկնութիւններով: Բազմատեսակ է անոր մատենագրական վաստակը՝ մեկնութիւններ, ճառեր, ներբողներ, թուղթեր և այլն, որոնք իրենց բարերար ազդեցութիւնը ունեցած են քրիստոնէական մտքի պատմութեան վրայ: Անոր գործերը հայերէնի թարգմանուած են, արդէն իսկ իր կենդանութեան օրերուն:

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Յովհան Ոսկեբերանի յիշատակն ամէն տարի կը տօնէ երկու անգամ, նախ՝ Տասներկու վարդապետներու շարքին՝ Խաչվերացի Զ. Կիրակիին յաջորդող շաբաթ օրը, ապա, առանձին՝ Խաչվերացի Է. Կիրակիին յաջորդող շաբաթ օրը:

ստացանք director@sourphagop.org հասցէին

Յարգելի խմբագիր,

Շատ ուրախ եմ որ Թարգմանչաց տօնը ամէն տարի կը յարգէք: Կը մաղթեմ որ երիտասարդներ հայագիր ե-նամակներով հաղորդակցին իրարու, ուխտած ըլլալով Մեսրոպագիրը մինչեւ 22-րդ դար կենդանի լեզուներու շարքին մէջ պահել:

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ



Հրեշտակներու քանդակներ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցւոյ ճակատին Յիսնակ

Յիսնակը, 50 օրերու միջոց մըն է, որուն ընթացքին կը պատրաստուինք տօնելու Յիսուսի ծնունդն ու աստուածայայտնութիւնը որ տեղի կ'ունենայ Յունուար 6-ին: Յունուար 6-էն 50 օրեր ետեւ հաշուելով կը հասնինք Նոյեմբեր 18-ին, հետեւաբար այդ թուականին ամենէն մօտ Կիրակին Յիսնակի Բարեկենդանն է:

Կարժամանակ, երբ Յիսնակի ամբողջ տեւողութեան պահք կը պահուէր, Ս. Յարութեան նախորդող մեծ պահքին պէս: Սակայն ներկայիս սովորական Չորեքշաբթիի եւ Ուրբաթի պահքերէն զատ երեք շաբաթներու վերածուէր է Յիսնակի Պահքը: Առաջին շաբաթը Յիսնակի Պահք, Դեկտեմբերին՝ Ս. Յակոբի պահք, իսկ Յունուարին՝ Ս. Ծննդեան պահք:

Սուրբ Գրիգոր Սքանչելագործ



Ս. Գրիգոր Սքանչելագործը ծներ է Պոնտոսի (Մեքաստիա) Նեոկեսարիա քաղաքին, ազնուական ընտանիքի մը մէջ, շուրջ 210 թ.: Գրիգորը մտադիր էր հմտանալ օրէնսգիտութեան և հռետորութեան մէջ, սակայն Աստուած անոր եւ իր եղբոր համար այլ ճանապարհ նախասահմաններ էր, անոնք ուսում ստացան Աթենքի մէջ, ապա Պաղեստինեան Կեսարիա քաղաքին մէջ, աշակերտելով այն ժամանակուայ ամենահեղինակաւոր քրիստոնէայ մտաւորականին՝ Որոգինեսին: Նեոկեսարիա վերադառնալով՝ ան կը ձեռնադրուի քաղաքի եպիսկոպոս: Աւանդութեան համաձայն, Ս. Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրուելու օրերուն Նեոկեսարիոյ մէջ հազիւ 17 քրիստոնէայ կար, իսկ մահուան օրերուն՝ ընդամենը 17 հեթանոս: Իր անուան հետ կապուած բազմաթիւ հրաշքներու համար արժանացեր է «Սքանչելագործ» մականորին:

Ս. Գրիգոր աչալըջութեամբ կառավարեց թէ՛ իրեն վստահուած թեմն ու ժողովուրդը և թէ՛ եղաւ մեծ մատենագիր թողելով բազմաթիւ աստուածաբանական երկեր:

Ան վախճանած է 270 թ. խաղաղ մահուամբ: Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Գրիգոր Սքանչելագործի, Նիկողայոս Հայրապետի և Միլոն եպիսկոպոսի յիշատակը կը տօնէ Ս. Խաչի Ժ. Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:

Տօն՝ Սուրբ Առաքելներու Անդրեասի եւ Փիլիպպոսի

Անդրեաս առաքելը Պետրոս առաքելի եղբայրն էր, որ իրեն պէս ձկնորս էր: Սկիզբը, Անդրեասը աշակերտեր է Ս. Յովհաննէս Մկրտիչին եւ Յիսուսը գտնելէ ետք, անմիջապէս իր եղբայրը Պետրոսը գտած ու ըսած է անոր «Մեսիան գտանք» «Յովհ. 1.35-42»: Ըստ աւանդութեան, Ս. Անդրեաս առաքել կը քարոզէ Յունաստանի եւ փոքր Ասիոյ մէջ եւ կը նահատակուի X ձեռով խաչի մահով, Յունաստանի մէջ:

Փիլիպպոս առաքելը Բեթսայիդէն էր, Անդրեասի եւ Պետրոսի քաղաքէն: Յիսուս էր որ երբ Գալիլիա գացած ատեն Փիլիպպոսը տեսաւ, անոր ըսաւ. «Հետեւէ՛ ինծի»: Անդրեասն ալ իր կարգին գտաւ Բարթողոմէոսը «Նաթանայէլը» եւ զայն Յիսուսի ներկայացուց «Յովհ. 1.43-51»: Ըստ աւանդութեան կը նահատակուի Եփեսոսի մէջ խաչի մահով:

Տօն՝ Սուրբ Առաքելներու Թադէոսի եւ Բարթողոմէոսի

Հայաստանի մէջ Քրիստոսի աւետարանին քարոզութիւնը առաջին անգամ մուտք գործեց Ս. Թադէոս առաքելի միջոցաւ: Աստուածաշունչին մէջ ան նաեւ կը կոչուի Ղեբէոս եւ Յուդա: Յիսուսի Համբարձումէն ետք Ս. Թադէոս եկաւ Եդեսիա եւ ծանր հիւանդութենէն բժշկեց Արգար թագաւորը: Ան մեր երկիրը բերաւ նաեւ Ս. Գեղարդը



որ գործածուած էր Յիսուսի կողը խոցելու խաչափայտին վրայ: Արգարի նամակով Ս. Թադէոս եկաւ Արտազ գաւառը՝ Սանատրուկ թագաւորին մօտ եւ դարձի բերաւ թագաւորն ու Սանդուխտ կոչը: Սակայն, Արգարի մահէն ետք Սանատրուկ ուրացաւ իր հաւատքը եւ ծանր հալածանքներ սկսաւ քրիստոնէաներուն դէմ: Նախ նահատակուեցաւ թագաւորին դուստրը, ապա նաեւ Ս. Թադէոս առաքելը 46 թուին: Ս. Թադէի վանքը ներկայիս կը գտնուի Իրանի մէջ:

Բարթողոմէոս Առաքել կը կոչուի նաեւ Նաթանայէլ: Ան Հնդկաստանէն վերադարձին Գողթան գաւառէն սկսաւ իր քարոզութիւնը Հայաստանի մէջ: Ըստ աւանդութեան, ան Հայաստան բերաւ Տիրամօր սրբապատկերը եւ Անահիտ դիցուհիի մեհեանին տեղ կառուցեց Ս. Աստուածածին եկեղեցին, ինչպէս



նաեւ կուսանոց: Ըստ աւանդութեան Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս առաքելները իրարու կը հանդիպին Արտաշատի կամուրջին վրայ:

Հայաստանեայց եկեղեցին սուրբերուն տօնը 2011-ին կը յիշատակէ Դեկտեմբեր 3-ին:

Սուրբ Նիկողայոս Զմիռնացի՝ սքանչելագործ հայրապետը

Ս. Նիկողայոս Հայրապետը ծնած է Փոքր Ասիոյ Լիկիա գաւառի Բաթարա քաղաքին մէջ (ներկայիս Անթալիայի մօտակայ)։ Փոքր հասակէն կորսնցուցած է մեծահարուստ եւ բարեպաշտ ծնողքը եւ մեծցած է իր մօրեղբօր՝ Նիկողայոս Երէց եպիսկոպոսի խնամքին ներքեւ։ Աւետարանական պատգամը՝ «Ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր» (հմմտ. Մտթ. 19.21), իր կեանքի նշանաբանը կը դարձնէ՝ իր խնամքը տարածելով աղքատներու, հիւանդներու, բանտարկեալներու եւ որբերու վրայ։ Ժողովուրդի կամքով կը դառնայ Զմիռնիոյ եպիսկոպոսը։ Հալածանքներու ընթացքին կ'աքսորուի, սակայն չի դադրիր ամենուրեք Աւետարանը քարոզելէ։ Խաղաղութիւն վերահաստատուելուն պէս կը վերադառնայ իր աթոռը, կը մասնակցի 325 թ. Նիկիոյ Տիեզերական ժողովին։ Կը մահանայ 326թ.։ Ընդհանրական Եկեղեցւոյ ամենասիրուած սուրբերէն է՝ առաւելաբար յայտնի Santa Claus անունով։



Հրէշտակի բարձրաքանդակը Ադրամար վանքի Ս. Խաչ եկեղեցւոյ ճակատին



«Հրէշտակը եւ Ս. Մարիամը» 1330-ի Կիրակոս Ադբալեցիի «Աւետում» մանրանկարը


Յիսուսի Մկրտութիւնը

Ղուկաս 3:21-22

Կէտ ունեցող բաժինը ներկեցէք եւ գտէք թէ ինչ իջաւ Յիսուսի վրայ: Ապա գտէք պահուած բառերը եւ գրեցէք գծիկներուն վրայ:

Ներկայ ամբողջ ժողովուրդը մկրտուելէ ետք՝ Յիսուս ալ մկրտուեցաւ: Երբ Յիսուս կ'աղօթէր, երկինքը բացուեցաւ եւ _____ տեսանելի կերպարանքով _____ պէս իջաւ անոր վրայ: _____ մը լսուեցաւ երկինքէն, որ կ'ըսէր - « _____ », _____ »:





Սեր թշնամիին հանդէպ

Ղուկաս 6:27-36

Խառնուած գիրերը ճիշդ կարգով գրէ եւ գտիր Ղուկաս 6:31

նչի	րո	քովէկ	րո	գծիե	ներ
ւքող	լա	նցնաո	յնըո	աղկիմր	էքրը


 ----- :

Ջնջէ գոյգ գրուած գիրերը:
 Մնացած գիրերով բառ մը կազմէ
 եւ ամբողջացուր

----- եղէք, ինչպէս որ ձեր

երկնաւոր հայրն ալ ----- է:


Ղուկաս 6:36



Յիսուսի տասը բորոտները կը բուժէ

Ղուկաս 17:11-19


Երկրորդ գիրէն սկսեալ Այբուբենի գիրերը շարքով գտիր եւ ջնջէ:
Մնացեալ գիրերը գրէ գծիկներուն վրայ եւ տես թէ ինչ պատահեցաւ երբ
տասը բորոտները բժշկուեցան:



Սուրբ Կոյսի Տաճար Ընծայումը

Մարիամի ծնողքը ուխտեր էին, որ իրենց զաւակը պիտի ընծայեն Տիրոջ: Երբ Մարիամ մէկ տարեկան եղաւ, ծնողքը զինք տաճար տարին՝ Աստուծոյ ընծայելու: Երբ Մարիամ 3 տարեկան եղաւ, ծնողքը դարձեալ զինք տաճար տարաւ մինչեւ Մարիամի 7-րդ տարեդարձը:

Եօթը տարեկանէն սկսեալ, Մարիամը սկսաւ ապրիլ տաճարին մէջ: Ան ստացաւ Ս. Հոգիին եօթը շնորհները՝ եւ զարդարուեցաւ եօթը առաքինութիւններով: Ան բնակեցաւ տաճարին մէջ իբրեւ անբիծ աղանի, աճեցաւ եւ զարգացաւ հասակով եւ իմաստութեամբ: Մարիամ իր առաքինի վարքով եօթը տարի փաց տաճարին մէջ եւ ամէն օր հոգիով կը կրթուէր պարկեշտութեան մէջ:



ԱՌԻՆՋԻ Ս. Աստուածածին Եկեղեցին 2000թ

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

է	զ	թ	ե	ա	դ	գ	ը	բ
ը	ա	բ	է	զ	թ	դ	ե	գ
զ	դ	ե	ը	զ	բ	ա	է	թ
դ	թ	զ	բ	է	զ	ը	ա	ե
զ	ը	ա	զ	դ	ե	թ	բ	է
ե	բ	է	թ	ը	ա	զ	դ	գ
թ	է	զ	ա	ե	ը	բ	զ	դ
բ	զ	ը	դ	թ	է	ե	զ	ա
ա	ե	դ	զ	բ	զ	է	թ	ը

ը					ա		ե	թ
		զ	է	բ			ը	
	զ	է	զ					դ
				դ	զ	թ	բ	ը
	ա						է	
դ	ը	բ	թ	զ				
զ					թ	զ	դ	
	է			զ	է	ա		
բ	դ		է					է

Նախորդ «Եզակի գիրեր»ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր, իւրաքանչիւր

- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Ամէն մարդ կերաւ այնքան որ ուզեց: Եւ ինչ որ աւելցաւ, տասներկու կողով լեցուց:

Ամբողջացո՛ւր ըստ Ղուկասի Աւետարանին 9.14-17

հինգ, յիսունական, տասներկու, աչքերը, կշտացան, ձուկը, հացը, կատարեցին

Որովհետեւ շուրջ ----- հազար մարդ կար: Յիսուս
աշակերտներուն ըսաւ.

- Նստեցուցէք զանոնք ----- հոգինոց խումբերով:

Անոնք ----- հրահանգը եւ նստեցուցին բոլորն ալ: Ապա
Յիսուս առաւ հինգ ----- եւ երկու -----, ----- երկինք
բարձրացուց, օրհնեց, կտրեց եւ աշակերտներուն տուաւ որ
բաժնեն ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու -----, եւ
աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝
----- սակառ լեցուցին:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք դ. 7

Նոյեմբեր 19ին:

ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
Հայրապետ

բ. Ս. Գեորգ

գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոս

դ. Բոլոր Սուրբերուն

6.- Քանի՞ հատ են Քրիստոսի Սուրբ
Եկեղեցւոյ խորհուրդները:

ա. 1

բ. 3

գ. 7

դ. 12

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք

Ս. Գաբրիէլ եւ Ս. Միքայէլ

Հրեշտակապետերուն տօնը:

ա. Նոյեմբեր 5

բ. Նոյեմբեր 13

գ. Նոյեմբեր 20

դ. Նոյեմբեր 27

7.- Ըսէ՛ մէկ բառով. Ոսկի Բերան
Ունեցող:

Ո-----ն

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ

Առաքեալներու՝ Անդրէասի եւ

Փիլիպպոսի տօնը:

ա. Նոյեմբեր 6

բ. Նոյեմբեր 12

գ. Նոյեմբեր 20

դ. Նոյեմբեր 27

8.- Գրէ՛ Հրեշտակապետին անունը:

Մ-----

9.- Գրէ՛ Հրեշտակապետին անունը:

Գ-----

4.- Ս. Կոյս Մարիամ քանի՞

տարեկանէն սկսեալ սկսաւ

Տաճարին մէջ ապրիլ:

ա. 6

բ. 12

գ. 20

դ. 7

10.- Ի՞նչ էր Պետրոս Առաքեալին
եղբօրը անունը:

ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
Հայրապետ

բ. Ս. Փիլիպպոս

գ. Ս. Անդրէաս

դ. Ս. Գրիգոր

5.- Յիսնակը, քանի՞ օրերու միջոց մըն
է:

ա. 6

բ. 13

գ. 50

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ. Ե. և Զ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Նոյեմբեր 12ին:

- ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
Հայրապետին
- բ. Ս. Գեորգին
- գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոսին
- դ. Բոլոր Սուրբերուն

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս.
Կոյսին Տաճար ընծայումը:

- ա. Նոյեմբեր 6
- բ. Նոյեմբեր 13
- գ. Նոյեմբեր 21
- դ. Նոյեմբեր 27

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ
Գրիգոր Սբանչելագործի տօնը:

- ա. Նոյեմբեր 6
- բ. Նոյեմբեր 13
- գ. Նոյեմբեր 20
- դ. Նոյեմբեր 26

4.- Այս տարի ե՞րբ տօնեցինք Ս.
Յովհան Ոսկեբերանի տօնը:

- ա. Նոյեմբեր 6
- բ. Նոյեմբեր 13
- գ. Հոկտեմբեր 20
- դ. Հոկտեմբեր 30

5.- Յիսնակի Բարեկենդանը
Նոյեմբերի ո՞ր օրուան ամենէն մօտ
Կիրակիին կը հանդիպի:

- ա. 6
- բ. 16
- գ. 18
- դ. 31

6.- Ի՞նչ է Ս. Մկրտութեան
խորհուրդին զգալի նշանը:

- ա. Զուր
- բ. Գինի
- գ. Հաց
- դ. Ս. Միւռն

7.- Ինչե՞ր են Ս. Հաղորդութեան
զգալի նշանները:

- ա. Զուր
- բ. Գինի
- գ. Հաց
- դ. Ս. Միւռն

8.- Աստուածաշունչին մէջ ո՞ւր կը
կարդանք:

««Զգո՞յ՛, մի՛ արհամարհէք այս
փոքրիկներէն մէկը. գիտցէք, որ անոնց
հրեշտակները երկինքի մէջ միշտ կը
տեսնեն իմ երկնաւոր Հայրս»:

Աւետարան ըստ Մ-----սի ---.

9.- Յիսուս քանի՞ բորոտներ բժշկեց
ըստ Ղուկասի 17.11-19-ին:

- ա. 5
- բ. 1
- գ. 12
- դ. 10

10.- Յիսուսի բժշկած բորոտներէն
քանի՞ հոգի վերադարձան
շնորհակալութիւն յայտնելու:

- ա. 5
- բ. 1
- գ. 12
- դ. 10

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք

բ.

Նոյեմբեր 21ին: (2 պատասխան)

գ.

ա. Ս. Կոյսի Տաճար ընծայում

դ.

բ. Ա. օր Յիսնակի Պահոց

գ. Ս. Անդրեասի եւ Ս. Փիլիպպոսի

դ. Բոլոր Սուրբերուն

6.- Ներկայիս ո՞ւր կը գտնուի Ս. Թադէի վանքը:

----- Հիւսիս

Արեւմտեան ծայրամասը:

2.- Յիսուսի ո՞ր Առաքելը X ձեռով խաչի մահով մահացաւ:

ա. Մատթէոս

բ. Թադէոս

գ. Բարթողոմէոս

դ. Անդրեաս

7.- Ս. Հաղորդութեան ընթացքին, Ս. Սեղան ընծայուող ո՞ր երկու նիւթերը կը փոխակերպուին Քրիստոսի Մարմնին ու Արեան:

----- ու -----

3.- Թուէ՛ Ընդհանրական Եկեղեցւոյ 12 վարդապետներէն մէկը որուն յիշատակը տարին 2 անգամ կը տօնենք:

ա. Ս. Յովհան Ոսկեբերան

բ. Ս. Գրիգոր Սքանչելագործ

գ. Ս. Անդրեաս

դ. Ս. Փիլիպպոս

8.- Ըստ աւանդութեան Հայաստանի մէջ ո՞ւր կը հանդիպին Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս առաքելները:

-----ի կամուրջին վրայ

4.- Մեր Եկեղեցւոյ 7 խորհուրդներէն ո՞ր մէկը կը տրուի Ս. Պատարագին ընդմէջէն:

ա. Մկրտութիւն

բ. Դրոշմ

գ. Ապաշխարութիւն

դ. Հաղորդութիւն

9.- Ամբողջացո՛ւր Ղուկաս 6.31-ի ոսկեշէն համարը:

Ինչ որ ----- -- -----

ձեզի ----- դուք ալ ----- անոնց:

5.- Խորհուրդին միջոցաւ աստուածային շնորհներու արժանանալու համար

հաւատացեալէն ի՞նչ կը պահանջուի:

ա.

10.- Ով է իրաւ Santa Claus-ը եւ ո՞ր տիեզերական ժողովին մասնակցած է:

ա. Ս. Ն----- Զ-----

բ. -----

2011-2012 Տարեշրջան (32րդ) Գործունեություն՝ Ամեն Կիրակի Ժամը 10:30 – 1:00

Մանկապարտեզ : Ա., Բ. և Գ. Դասարաններ	(3 - 5 տարեկան)
Նախակրթարան : Ա., Բ., Գ., Դ., Ե., Եւ Զ., Դասարաններ	(6 - 11 տարեկան)
Երկրորդական : Ա., Բ., Գ., Դ. և Ե. Դասարաններ	(12 - 16 տարեկան)

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել Տնօրէնին՝

Թորոս Պապիկեան

Հեռ. (514)-956-1277 email director@sourphagop.org

Կայքէջ՝

www.sourphagop.org

11-րդ տարի

Ամսաթերթ՝

«Մաշտոցի Արձագանգ»

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

19-րդ տարի

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (11-րդ տարի)

Այս թիւով.....

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը
խորհուրդները. Մկրտութիւն Էջ 2

Դեկտեմբեր ամսուան բացատրական
տօնացոյց Էջ 3-7

Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ

Ս. Պետրոս եւ Ս. Պօղոս

Ս. Ստեփանոս Նախավկայ

Որոտման Որդիք

Ս. Աբգար թագաւոր

Դաւիթ Թագաւոր, Մարգարէ՞ թէ
սաղմոսագիր

Սաղմոսավանք

Հ ա յ ա ս տ ա ն ի առաջին
լուսաւորիչները

Յովհաննէս Մկրտիչի քարոզութիւնը
Էջ 8

Յովհաննէս Մկրտիչ Էջ 9

Զաքարիայի օրհներգութիւնը Էջ 10

Ս. Գրիգոր Նիսացի Էջ 11

Եզակի գիրքը Էջ 11

Որն է ճիշդ պատասխանը Էջ 12-15

Կիրակնօրեայի գործունէութիւն Էջ 16

Դեկտեմբեր 2011 (ԺԹ տարի թիւ 4)



Յ... Յիսուս, Ս. Յակոբ

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարները

«Հետեւաբար, գացեք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցեք: Զանոնք
մկրտեցեք՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց ստրվեցուցեք այն բոլոր
պատուիրանները որ ես ձեզի տուի. եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ
աշխարհիս վախճանը»: Մատթէոս 28.19-20

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

www.sourphagop.org

director@sourphagop.org

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը խորհուրդները (շար. 2)

Նոյեմբեր 2011-ի թիւն սկսեալ յաջորդական թիւերով կը ներկայացնենք մեր եկեղեցւոյ խորհուրդներէն իւրաքանչիւրը:

Մկրտութիւն

Մկրտութիւն կը նշանակէ՝ լուացում, մաքրութիւն եւ հաստատում եւ մարդ արարածին *Սկզբնական* կամ *Աղամական մեղքը* սրբելու համար: Սկզբնական մեղքը մեր նախածնողաց՝ Ադամի եւ Եւայի անհնազանդութեան յանցանքն է: Մկրտութիւնը կը կոչուի նաեւ ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴ, որովհետեւ մկրտուողը իր մեղքերէն սրբուելով կը դառնայ Աստուծոյ որդեգիր, Եկեղեցւոյ անդամ, Երկինքի արքայութեան ժառանգորդ եւ կը սկսի նոր կեանք մը: Մկրտութեան զգալի նշանը ջուրն է:



Մկրտութիւնը կրնայ կատարուիլ երեք ձեւերով.
ա. *Հեղմամբ*՝ մկրտուողին վրայ ջուր թափելով:
բ. *Ընկղմամբ* կամ *Թաղմամբ*՝ մկրտուողը ջուրի մէջ թաղելով:
գ. *Սրսկմամբ*՝ մկրտուողին վրայ ջուր սրսկելով:

Մկրտութիւնը ՄԷԿ անգամ կը կատարուի:
Կրկնամկրտութիւնը սխալ է եւ Աստուծոյ խօսքին դէմ մեղանշում:

Մկրտութեան թեկնածու անձը կը կոչուի *երախայ* եւ իրմէ կը պահանջուի հաւատք առ Սուրբ Երրորդութիւն, որովհետեւ ան Սուրբ Երրորդութեան անունով կը մկրտուի:

Եկեղեցին անչափահաս մանուկները կը մկրտէ անոնց ծնողքին եւ կնքաւոր հաւատքին վրայ: Յիսուսի պատուէրն է որ ամէն ոք (մեծ թէ պզտիկ) ջուրէն ու հոգիէն ծնի, այսինքն մկրտուի (Յովհ. 3.3-8): Աստուածաշունչին մէջ կան օրինակներ երբ առաքեալներու ժամանակ ոմանք հանդերձ ընտանեօք մկրտուած են:

Ծնողք կնքաւոր միջոցաւ երախան կը ներկայացնեն քահանային եւ կը խնդրեն որ զայն մկրտէ: Անոնք, մկրտութենէն վերջ Աստուծոյ առջեւ պարտական են զայն դաստիարակելու Քրիստոնէական հաւատքով, որպէսզի ան դառնայ առաքինի հաւատացեալ մը: Կնքաւոր պարտականութիւնն է՝ հսկել իր սանին վրայ ու անպակաս ընել իր խրատներն ու ցուցմունքները, որպէսզի ան չշեղի ու չկորսնցնէ իր որդեգրութիւնը:

Դեկտեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 3	Սբ. Թադէոս եւ Բարթողոմէոս
Գշ. 6	Սբ. Աբգար Թագաւոր
Շբթ. 10	Սբ. Նիկողայոս Զմիւռնացի Սքանչելագործ հայրապետ
Շբթ. 17	Սբ. Յակոբ Մծբնայ հայրապետ եւ Մարուգէ ճգնաւոր
Շբթ. 24	Սբ. Դաւիթ մարգարէ եւ Ս. Յակոբ Տեառնեղբայր Առաքեալ
Բշ. 26	Սբ. Ստեփանոս Նախասարկաւագ եւ առաջին մարտիրոս
Գշ. 27	Սբ. Պետրոս, Սբ. Պօղոս
Գշ. 29	Սբ. Ռոման Բրդուղէ Յակոբոս եւ Յովհաննէս Առաքեալներու
Շբթ. 31	Ս. Բարսեղ Հայրապետ, Գրիգոր Նիսացի եւ Եփրեմ Խուրի ասորի Պահքի Օրեր՝ 2, 7, 9, 12, 13, 14, 15, 16, 21, 23, 28, 30, 31

Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ

Ե՞րբ կը տօնենք

Սուրբին յիշատակի օրը կանուխէն հաստատուած է Հայ Առաքելական եկեղեցոյ տօնացոյցին մէջ եւ կը տօնուի ամէն տարի Յիսնակի երրորդ Կիրակի օրուան յաջորդող շաբաթ օրը: Այս կը նշանակէ թէ Սուրբ Յակոբին տօնը կը յիշատակենք Դեկտեմբեր 12-18 օրերուն մէջ հանդիպող Շաբաթ օրը:

Սուրբ Յակոբի կեանքը

Սուրբ Յակոբ ծնունդով ասորի էր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի հօրաքրոջ որդին եւ Պարթեւական տոհմէն: Անոնք միասին դաստիարակուած էին Կեսարիոյ մէջ: Ս. Յակոբ որոշ ժամանակ ապրեր էր Պարսկաստանի արքունիքին մէջ, սակայն հետագային կ'ընտրէ ճգնաւորի կեանքը եւ Ս. Հոգիին ներգործութեամբ կ'ուղղուի Մծբին քաղաքի վանքերէն մէկը՝ մարուգէ ճգնաւորին մօտ: Ան մասնակցած է Նիկիոյ մէջ կայացած տիեզերական ժողովին՝ 325 թուականին: Մծբինի աթոռին համար ձեռնադրուած է եպիսկոպոս՝ Մարուգէ ճգնաւորի մարգարէութեան կատարում: Հայ մատենագրութեան մէջ յայտնի են իր 22 ճառերէ բաղկացած «Զգօն» գիրքը: Ս. Գրիգոր Նարեկացին հիացող մը եղած է Յակոբ Մծբնայ Հայրապետին, որուն նուիրած է իր ներբողական գրութիւններէն մէկը:

Սուրբ Յակոբին նուիրուած «Յաղթող եւ Սուրբ Հայրապետ» անունով գեղեցիկ շարական մը գրուած է: Այս շարականը հաւանաբար գրուած է այն դէպքին առիթով ուր կը պատմուի թէ պարսից Շապուհ Բ. թագաւորը աշխարհաճաւալ իր արշաւանքներուն ընթացքին կը հասնի Մծբին որ կը պաշարէ 70 օրեր շարունակ: Շնորհիւ Ս. Յակոբի քաղաքին ներսէն կազմակերպած միջոցառումներուն, ան անկարող կ'ըլլայ գրաւելու Մծբինը: Այդ յաղթանակին առիթով Ս. Ներսէս Շնորհալի կը ձօնէ իր այդ շարականը:



Սուրբ Պետրոս եւ Սուրբ Պօղոս առաքեալներ

Հայաստանեայց եկեղեցին, ամէն տարի Դեկտեմբեր ամսուան վերջին շաբթուան ընթացքին կը յիշատակէ Ս. Պետրոս եւ Ս. Պօղոս առաքեալները: Այս երկու անուններն ալ ընդհանրացած են մեր ժողովուրդին քով:

Ս. Պետրոս առաքեալ

Բուն անունով Սիմոն, ան Յիսուսի կողմէ Պետրոս անուանուեցաւ: Պետրոս կը նշանակէ վեմ, ժայռ եւ Յիսուս յայտարարեց «Քեզի կ'ըսեմ՝ թէ ժայռ ես դուն, եւ այդ ժայռին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս...» Մատթ. 16:18:

Պետրոս այն առաքեալն էր որ Յիսուսը երեք անգամ ուրացաւ աւագ Հինգշաբթի օրը:

Ս. Պետրոս առաքեալ գրած է երկու ընդհանրական նամակներ որոնք մաս կը կազմեն Նոր Կտակարանին: Առաջին նամակը ուղուած է «Աստուծոյ ընտրեալներուն», այսինքն՝ քրիստոնէաներուն: Անոր գլխաւոր նպատակն է քաջալերել ընթերցողները, որոնք իրենց քրիստոնէական հաւատքին համար հալածանքներու եւ նեղութիւններու դիմաց կը գտնուէին: Երկրորդ նամակը ուղուած է առաջին դարու քրիստոնէաներու լայն շրջանակի մը նպատակ ունենալով պայքարիլ սուտ ուսուցանողներու տարած աշխատանքին դէմ: Մոլորեցնող ուսուցումներէ եւ անպարկեշտ կենցաղէ հեռու պահելու համար քրիստոնէաները, առաքեալը կոչ կ'ուղղէ անոնց որ կառչած մնան Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի:

Ս. Պօղոս առաքեալ

Պօղոս առաքեալ, Յիսուսի 12 առաքեալներէն մէկը չէր: Բուն անունով Սօղոս կամ Սաւուղ, հրեայ բարեկեցիկ ընտանիքի մը զաւակն էր եւ դաստիարակուած էր ըլլալու կարծր եւ օրինապահ հրեայ մը, որ պայքարեցաւ քրիստոնէութեան տարածման դէմ: Չորս անտարաններուն մէջ ոեւէ ակնարկութիւն չկայ Պօղոսին: Կ'արժէ յիշել թէ Աստուածաշունչին մէջ Սօղոսի մասին առաջին ակնարկութիւնը կը տեսնենք Գործք. Առաք. 7:58-ին մէջ եւ կը կարդանք նաեւ թէ «Ստեփանոսի քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սօղոսն էր» (Առաքեալներուն Գործերը 8:1):

Սօղոս, որ աշակերտած էր Գամաղիէի, եւ ուներ Հռոմէական քաղաքացիութիւն, շարունակեց Յիսուսի հետեւորդները հալածել եւ Աւագ քահանայէն (Երուսաղէմ) Դամասկոսի հրեայ ղեկավարներուն ուղղուած նամակներ առնելով ճամբայ ինկաւ դէպի Դամասկոս: Սակայն Դամասկոսի մօտերը լոյս մը փայլեցաւ, որ կուրցուց զինք, եւ լսեց ձայն մը որ կ'ըսէր «Սաւուղ, ինչո՞ւ զիս կը հալածես»:

«Ո՞վ ես Տէր,» հարցուց Սաւուղ:

Ձայնը պատասխանեց. «Ես Յիսուսն եմ զոր դուն կը հալածես...»: Առաքեալներու Գործերը գիրքին 9րդ գլխուն մէջ կը կարդանք Սօղոսի Դարձին մասին ու 18րդ համարին մէջ կ'ըսէ «Անմիջապէս Սօղոսի աչքերէն կարծես կեղեւանքներ ինկան, եւ սկսաւ տեսնել: Ելաւ մկրտուեցաւ, եւ ապա կերակուր ուտելով զօրացաւ»:

Այս պատահարէն ետք Սօղոս Պօղոս կոչուեցաւ եւ նոյն ջանքով որ կը պայքարէր քրիստոնէութեան դէմ, աշխատեցաւ քրիստոնէութեան տարածման համար, եւ կոչուեցաւ 13րդ եւ հեթանոսներու առաքեալ: Ան ունեցաւ 3 ճամբորդութիւններ եւ գրեց 14 նամակներ որոնցմէ տասը ուղղեց եկեղեցիներու եւ չորսը անհատներու:



Ս. Ստեփանոս նախավկայ, անդրանիկ վկան է որ իր արինը թափեց Յիսուս Քրիստոսը՝ Աստուծոյ որդին վկայելով: Յիսուսի 72 աշակերտներէն մէկը որ ուրիշ 6 հոգիներու հետ նախնական եկեղեցին, (Պետրոս առաքեալի առաջնորդութեամբ), կարգեց եկեղեցւոյ սեղանի սպասաւոր, այսինքն սարկաւագ: Նոր Կտակարանի «Առաքեալներու Գործերը» գրքին մէջի 6-րդ գլխուն մէջ կը կարդանք 7-ը սարկաւագներուն նշանակուելու եւ Ստեփանոսի ձեռնադրութեան պատմութիւնը, իսկ 7-րդ գլխուն մէջ կը կարդանք իր վկայութիւնը եւ քարկոծումին մանրամասնութիւնները: Ստեփանոսի քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սոդոսն էր որ հետագային եղաւ Պողոս Առաքեալ: Մեր եկեղեցին սուրբին օրը կը նշէ Դեկտեմբեր 25-ին, կամ 26-ին եթէ 25-ը Կիրակի կամ պահքի օր ըլլայ:

Որոտման Որդիք

Մարկոսի Աւետարանին 3.16-19 ին մէջ կը գտնենք Յիսուսի 12 առաքեալներուն ցանկը՝ Պետրոս, Ջեբեդէոսի որդիները՝ Յակոբոսն ու եղբայրը՝ Յովհաննէսը, որոնք Բռաներգես, այսինքն Որոտացող Մարդիկ կոչեց, Անդրէասը, Փիլիպպոսը, Բարթողոմէոսը, մաքսաւոր Մատթէոսը, Թովմասը, Ալփիէոսի որդին Յակոբոսը, Թադէոսը, Նախանձայոյց Սիմոնը, եւ Իսկարովտիացի Յուդան, որ զինք մատնեց:

Յովհաննէս Աւետարանիչ ձկնորս էր: Մինչեւ Յիսուսի հետեւիլը, կը հետեւէր Յովհաննէս Մկրտիչին: Ան Յիսուսի ամենասիրելի առաքեալն էր եւ հետեւեցաւ իրեն մինչեւ Գողգոթա: Խաչին վրայէն Յիսուս իրեն յանձնեց իր մօր հոգատարութիւնը: Իր եղբօր Յակոբոսի եւ Պետրոսի հետ ան դարձաւ Երուսաղէմի եկեղեցւոյ սիւներէն մէկը: Հետագային, իր գործունէութեան վայրը հանդիսացաւ Եփեսոսի եկեղեցին: Տիրոջ կամքով, Յովհաննէս Առաքեալ միւս առաքեալներէն աւելի ապրեցաւ եւ վախճանեցաւ 94 տարեկանին: Երբ արդէն շատ ծեր էր, իր քարոզներու ընթացքին շարունակ կը կրկնէր. «Զաւակնէ րս, սիրեցէ ք զիրար»: Երբ իրեն կը հարցնէին թէ ինչո՞ւ յաճախ այդ բառերը կ'ըսէր. «Այս Յիսուսի պատուիրանն է, եթէ սէր ունենաք, ուրիշ ոեւէ բանի պէտք չէք ունենար»: Ան գրած է Աւետարան, երեք ընդհանրական նամակներ, եւ յայտնութեան գիրքը:

Յակոբոսն ալ ձկնորս է: Յակոբոսը շատ եռանդուն էր, գործունէայ, մեծ սէր եւ նախանձախնդրութիւն ունէր Յիսուսի հանդէպ եւ դարձաւ Հրեաներու ատելութեան զոհը: Ան գլխատուեցաւ Հերովդէս թագաւորի կողմէ 44 թուին, ըլլալով առաջին նահատակը առաքեալներու մէջ: Այս երկուքը հաւանաբար Քրիստոսի հանդէպ իրենց բոցավառ սիրոյ եւ նախանձախնդրութեան պատճառով կոչուեցան Որոտման Որդիք:

Ս. Աբգար Ա. թագաւոր, ըստ աւանդութեան՝ Ա. դարու անդրանիկ քրիստոնէայ թագաւորը, պարթեւ Արշակունի Արշամի որդին էր: Իր թագաւորութեան մայրաքաղաքը Եդեսիան էր: Ըստ Մովսէս Խորենացիի, ան հայոց թագաւորն էր: Մովսէս Խորենացին նաեւ կը գրէ թէ Աբգար թագաւոր լսել է Յիսուսի հրաշքներուն մասին եւ հաւատացել է որ Յիսուս ճշմարիտ Աստուծոյ որդին է, եւ նամակ ուղարկած է Յիսուսի որ գայ եւ զինք բժշկէ բոլորտունէն: Յիսուս կը խոստանայ որկել իր աշակերտներէն մէկը որ բժշկէ զինք եւ կեանք շնորհէ իրեն եւ իր հետ եղողներուն: Յիսուսի համբարձումէն ետք, Ս. Թադէոս Առաքեալ կ'ուղուի դէպի Եդեսիա եւ կը բժշկէ Աբգար թագաւորը եւ իր հետ եղողները:

Ասկէ ետք Ս. Թադէոս Առաքեալ կ'ուղուի Աբգար թագաւորի քեռիին որդիին՝ Սանատրուկ թագաւորի պալատը: Մեր եկեղեցին Ս. Աբգար թագաւորի տօնը կը յիշատակէ ընդհանրապէս Յիսնակի Ե. Կիրակիին նախորդող Շաբաթ օրը:



Դավիթ. Թագաւո՞ր, մարգարե՞ թէ սաղմոսագիր

Մեզմէ քիչեր կան որոնք չեն լսած «Սաղմոս» բառը եւ չեն գիտեր անոր ինչ ըլլալը: Սաղմոսները օրհներգներ, աղօթքներ եւ զանազան այլ կերպի քերթուածներ են, որոնք կ'արտայայտեն Աստուծոյ հանդէպ խոր հաւատք եւ սէր: Հին կտակարանի գիրքերէն Սաղմոսներու գիրքը կը համախմբէ 150 սաղմոսներ, որոնցմէ 73-ը աւանդաբար վերագրուած են Իսրայէլի Դավիթ թագաւորին:

Այս տարի Դեկտեմբեր ամսուան 24-րդ օրը, Հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ անունը սաղմոսագիր Դավիթ թագաւորին որ նաեւ ընդունուած է իբր մարգարէ:

Ո՞վ է Դավիթ

Դավիթ՝ Իսրայէլի երկրորդ եւ մեծագոյն թագաւորն էր: Ան զաւակն էր Յեսսէի, ծնած Բեթլեհէմ ք. Ա. 1040 թուականին: Իր ընտանիքի կրտսերագոյն որդին էր եւ ուներ 7 մեծ եղբայրներ: Ան պատանեկութենէն Սամուէլ մարգարէի ձեռքով օծուած էր, հռչակ ստացած էր սպաննելով Գողիաթը: Ան ք.Ա. 1010 - 970 թագաւորեց, յաջորդելով Սաուլ թագաւորին: Իր գործած մեղքին պատճառաւ Աստուած թոյլ չտուաւ Դավիթին որ Տաճարը կառուցէ:

Դավիթի Որդի Յատուկ տիտղոս մըն է, որ Հրեաները կու տային գալիք Մեսիային: Աւետարաններուն մէջ, մեսիական այս տիտղոսը Յիսուսի տրուած է (Մտ. 1.1, Մր. 10.47):

Դավիթի Քաղաք Նոր Կտակարանին մէջ այս անուանումը գործածուած է Դավիթի ծննդավայրին՝ Բեթլեհէմի համար, ուր Յիսուս ծնաւ (ՂԿ 2.4 եւ 11):



Սաղմոսավանքը կը գտնուի Հայաստանի Արագածոտնի մարզի սահմաններէն ներս: Սաղմոսաւան գիւղէն ներս կառուցուած այս վանքը եղած է միջնադարեան Հայաստանի հոգեւոր կեդրոններէն մէկը: Շինուած է տուֆէ եւ անոր ամենահին յուշարձանն է Սուրբ Սիոն եկեղեցին, կառուցուած Վաչէ Վաչուտեան իշխանի հրամանով՝ 1215 թուականին: Համալիրին մաս կը կազմէնաւ Սուրբ Աստուածածին եկեղեցին:

Հայաստանի առաջին լուսաւորիչները

Յիսուս իր յարութենէն ետք իր աշակերտներուն պատուիրեց երթալ աշխարհի չորս կողմերը եւ քարոզել անտարանը: Առաքեալները, Յիսուսի պատուիրին համաձայն ցրուեցան աշխարհի բոլոր կողմերը ու իրենց քարոզչութիւններով քրիստոնէայ եկեղեցիներ սկսան հաստատել:

Յիսուսի տասներկու առաքեալներէն երկուքը՝ Թադէոսը եւ Բարթողոմէոսը, եկան Հայաստան եւ հոն տարածելով Աւետարանի ճշմարտութեան լոյսը, հաստատեցին Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին:



Աստուածաշունչին մէջ, Թադէոս Առաքեալ կը յիշուի նաեւ Ղեբէոս անուան տակ: Ան Հայաստան այցելած ու հոն քրիստոնէութիւն քարոզած առաջին առաքեալն է (43-66 թ.): Անոր գործունէութեան գլխաւոր կեդրոնը կը նկատուի Վասպուրական նահանգի Արտագ գաւառը, ուր կը գտնուէր Սանատրուկ թագաւորի պալատը: Ըստ Մովսէս Խորենացիի, Թադէոս Առաքեալ, Եդեսիոյ Աբգար թագաւորը բժշկելէ, եւ քրիստոնէութիւն քարոզելէ ետք, Աբգարի հրովարտակով կը ներկայանայ Հայոց Սանատրուկ թագաւորին: Սանատրուկ թագաւորը, նախ կ'ընդունի քրիստոնէութիւնը, սակայն զգուշանալով իր իշխաններուն սպառնալիքներէն, ետ կը դառնայ իրենց նախկին կրօնքին: Հակառակ ասոր, ժողովուրդէն շատեր, որոնց մէջը ըլլալով իր դուստրը, Սանդուխտը կ'ընդունին քրիստոնէութիւնը: Շատ չանցած, Սանատրուկի կարգադրութեամբ, Արտագ գաւառի Շաւարշաւան գիւղաքաղաքին մէջ կը նահատակուին Թադէոս առաքեալը եւ Սանդուխտը: Առաքեալի նահատակութեան վայրին մէջ (ներկայիս Իրան) կառուցուած է Ս. Թադէ վանքը: Հայ եկեղեցին տարին երկու անգամ կը յիշատակէ Ս. Թադէոսը: Մէկ անգամ Բարթողոմէոս Առաքեալի հետ, Յիսնակի առաջին Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը (Նոյեմբերի վերջը կամ Դեկտեմբերի սկիզբը): Իսկ երկրորդ անգամ Ս. Սանդուխտ Կոյսի հետ: Թադէոս առաքեալ իր հետ Հայաստան բերած է այն գեղարդը որու միջոցաւ խոցուած էր խաչուած



քրիստոսի կողը:

Յովհաննէսի Աւետարանին մէջ, Բարթողոմէոս առաքեալ կը յիշատակուի Նաթանայէլ անուան տակ: Յիսուս, վկայելով անոր մասին, կ'ըսէ. «Ահաւասիկ ճշմարիտ Իսրայէլացի մը, որուն մէջ նենգութիւն չկայ» (Յովհ. 1.47): Սուրբ Բարթողոմէոս իր քարոզչութեան ճամբով հասաւ Հայաստան եւ քարոզեց մօտաւորապէս 8 տարիներ (60-68թ): Ան իր քարոզութիւնը սկսաւ Սիւնեաց նահանգին մէջէն: Անոր քարոզութեան գլխաւոր վայրերէն մէկն էր Գողթն գաւառը ուր առաքեալի ձեռքով կառուցուած է Տեառնընդառաջ եկեղեցին: Առաքեալը անցաւ նաեւ Արտաշատ քաղաքը ուր հանդիպեցաւ Թադէոս Առաքեալին: Հայաստանեայց եկեղեցին այս երկու


առաքեալներուն յիշատակը կը տօնէ Յիսնակի առաջին Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը: Նկարներուն մէջ, ան կ'երեւի դաշոյնով (որով նահատակուէր է) եւ Տիրամօր պատկերը ձեռքին (որ ըստ աւանդութեան իր հետ Հայաստան բերած է եւ զետեղուած է Անձեւացեաց գաւառի Հոգեաց վանքին մէջ): Յայտնի է Բարթողոմէոս Առաքեալի անունով վանք Վասպուրականի Աղբակ գաւառին մէջ, ուր թաղուած է:

Յովհաննէս Մկրտիչի Քարոզութիւնը

Ղուկաս 3:1-20

Յովհաննէս Յորդանան գետին եզերքը գտնուող բոլոր շրջանները երթալով՝ կը քարոզէր ապաշխարել եւ մկրտուիլ, որպէսզի Աստուած մեղքերու թողութիւն տայ:

Միքտերուն մէջի բառերը գրեցէք գծիկներուն վրայ եւ տեսէք թէ ի՞նչ կ'ըսէր Յովհաննէս Մկրտիչ իր հետեւորդներուն:



Յովհաննէս Մկրտիչ

Ղուկաս 1-3



1-



2-



3-



4-



5-

Ճիշդ կարգով նկարներուն տակ ընդօրինակէ՝

- 1 - Դուն ես իմ սիրելի Որդիս. Քեզի հաճեցայ: Ղուկաս 3:22
- 2 - Զաքարիա, մի վախնար, Աստուած լսեց աղօթքդ: Ղուկաս 1:13
- 3 - Յովհաննէս պիտի կոչուի: Ղուկաս 1:60
- 4 - Ասկէ ետք գործով ցոյց տուէք թէ ապաշխարած էք: Ղուկաս 3:8
- 5 - Եւ դուն զաւակս, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս եւ Տիրոջ առջեւէն պիտի քալես, անոր ճամբան պատրաստելու: Ղուկաս 1:76

Զաքարիայի Օրհներգությունը

Ղուկաս 1:67-80

Յովհաննէսի հայրը՝ Զաքարիան, Սուրբ Հոգիով լեցուած մարգարէացաւ, ըսելով.

Եւ դուն զաւակս,

Բ _____

Գրեցէք բոլոր թիւ 1-երու գիրերը
գծիկներուն վրայ կարգով, ապա
թիւ 2-ները, թիւ 3-ները եւ մինչեւ
թիւ 6-երը եւ գտէք Զաքարիայի՝
մարգարէութիւնը իր զաւակին՝
Յովհաննէսին համար:



1	Բ	2	ալ	3	ե	4	ալ	1	ա	5	ա	3	ւ	6	ալ
3	Տ	1	ր	4	ի	2	ի	5	ն	1	ձ	3	ի	6	ա
4	տ	3	ր	1	ր	5	ո	2	տ	6	տ	1	ե	3	ո
2	ի	3	ջ	4	ի	1	ա	5	ր	3	ա	6	ր	1	լ
5	ճ	1	ի	3	ո	4	ք	2	կ	1	ն	3	ջ	2	ո
3	ե	2	չ	1	մ	5	ա	1	ա	3	ւ	2	ո	4	ա
1	ր	4	լ	2	ւ	1	գ	3	է	5	մ	6	ա	6	ս
1	ա	5	ք	6	տ	2	ի	4	ե	1	ր	6	ե	3	ն
6	լ	2	ս	5	ա	6	ու	1	է	4	ս	1	ն	5	ն



Ս. Գրիգոր Նիսացի, (335 — 394թթ.), երեւելի աստուածաբան, փիլիսոփայ, եկեղեցական գործիչ (եպիսկոպոս), Հայ և ընդհանրական եկեղեցւոյ սուրբ, եկեղեցական հայր, Բարսեղ Կեսարացիի կրտսեր եղբայրն է: Ծնած է Կապադովկիոյ Նեոկեսարիա քաղաքին մէջ, յոյն մեծահարուստ եւ ազնուական ընտանիքի մէջ որ յայտնի էր աստուածապաշտութեամբ: 372 թ. Բարսեղ Կեսարացին, Կապադովկեան Կեսարիա քաղաքի արքեպիսկոպոս ձեռնադրուելով, իր եղբայրը կը նշանակէ հայաբնակ Նիսա գիւղի և Սեբաստիա քաղաքի եպիսկոպոս: 378թ. Բարսեղ Կեսարացիի մահէն ետք կ'ամբողջացնէ եւ կը հրատարակէ աւագ եղբօր անաւարտ երկը՝ «Վեցօրեայքը»:

Մասնակցած է 381թ. Կոստանդնուպոլսոյ երկրորդ տիեզերական ժողովին, ուր Գրիգորը ձեռք կը բերէ հեղինակաւոր աստուածաբանի և քարոզիչի համբաւ, կայսերական հրովարտակով անոր անունը կը ներառուի այն եպիսկոպոսներու ցանկի մէջ, որոնց հետ շփումը «պարտադիր է ուղղափառներու համար»:

+++

Եզակի գիրեր Հայերեն գիրերով Sudoku

ը	բ	դ	գ	է	ա	զ	ե	թ
ա	թ	զ	ե	բ	դ	ե	ը	գ
ե	զ	է	զ	թ	ը	բ	ա	դ
է	զ	ե	ա	դ	զ	թ	բ	ը
զ	ա	թ	ը	ե	բ	դ	է	զ
դ	ը	բ	թ	զ	է	ե	զ	ա
զ	ե	ա	բ	ը	թ	զ	դ	է
թ	է	ը	դ	զ	ե	ա	զ	բ
բ	դ	զ	է	ա	զ	ը	թ	ե


					թ		ա	
թ	է	զ		դ			զ	
			զ	ը			բ	
դ		բ	թ		ը	զ		զ
	է	ը				է	թ	
է		զ	է		դ	բ		ա
	բ			է	զ			
	զ			ա		զ	է	է
	դ		զ					

Նախորդ «Եզակի գիրեր»ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, է, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր, իւրաքանչիւր

- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Դուկաս 2.8-14 ի.

Հովիւներ, խաղաղութի՛ւն, Փրկիչը, խանձարուրով, հաճութիւն, հրեշտակը,
աւետիս, Օծեալ

Այնտեղ, դաշտերուն մէջ ----- կային, որոնք գիշերով իրենց
հօտերուն պահակութիւն կ'ընէին: Տիրոջ ----- անոնց երեւցաւ եւ
Տիրոջ փառքը լոյսի պէս անոնց վրայ ծագեցաւ: Հովիւները սաստիկ վախցան.
Հրեշտակը ըսաւ անոնց.

- Մի՛ վախնաք, ձեզի ----- մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին
մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր
----- ծնաւ, որ ----- Տէրն է: Հետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի. Հոն
մանուկ մը պիտի գտնէք՝ ----- փաթթուած եւ մսուրի մէջ դրուած:

Եւ յանկարծ այդ հրեշտակին միացաւ երկնաւոր զօրքերու բազմութիւն
մը, որ կ'օրհնաբանէր զԱստուած, ըսելով.

«Բարձունքներուն մէջ Աստուծոյ փա՛ռք, ----- երկրի վրայ
եւ մարդոց միջեւ -----»:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք

Դեկտեմբեր 17ին (մէկէ աւելի
պատասխաններ).ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
Հայրապետ

բ. Մարուգէ ճգնաւոր

գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոս

դ. Սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետ

6.- Որո՞նք են Հայաստանի առաջին
լուսաւորիչները.

ա. Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս

բ. Սուրբ Պօղոս եւ Սուրբ Պետրոս

գ. Աբգար Ա. եւ Տրդատ Գ.

դ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք

Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս
առաքելներուն տօնը.

ա. Նոյեմբեր 3

բ. Դեկտեմբեր 13

գ. Նոյեմբեր 23

դ. Դեկտեմբեր 3

7.- Յիսուս որո՞ւ կողմէ մկրտուեցաւ.

Յ----- Մ-----

8.- Յիսուս քանի՞ անգամ
մկրտուեցաւ.

ա. 1

բ. 2

գ. 3

դ. 4

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք

Սուրբ Պօղոս եւ Սուրբ Պետրոս
Առաքելներու տօնը.

ա. Նոյեմբեր 6

բ. Դեկտեմբեր 12

գ. Նոյեմբեր 20

դ. Դեկտեմբեր 27

9. Մենք քանի՞ անգամ կրնանք
մկրտուիլ.

ա. 1

բ. 2

գ. 3

դ. 4

4.- Ո՞վ էր առաջին քրիստոնէայ
թագաւորը.

ա. Աբգար Ա.

բ. Տրդատ Գ.

գ. Տրդատ Ա.

դ. Տրդատ Բ.

10. Ի՞նչ էր Յովհաննէս Մկրտիչին
հօրը անունը.

Զ-----

5.- Ի՞նչ է Մկրտութեան զգալի նշանը.

ա. Հաց

բ. Գինի

գ. Զուր

դ. Միւռոն

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Դեկտեմբեր 3-ին (մէկէ աւելի
պատասխաններ).

ա. Ս. Թադէոս Առաքեալ

բ. Մարուգէ ճգնաւոր

գ. Ս. Բարթողոմէոս Առաքեալ

դ. Սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետ

6.- Ո՞վ էր Իսրայէլի երկրորդ
թագաւորը.

ա. Սաւուղ

բ. Դաւիթ

գ. Սողոմոն

դ. Սամուէլ

2.- Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետի
տօնը կը տօնենք ամէն տարի.

ա. Դեկտեմբեր 16-ին

բ. Դեկտեմբեր 17-ին

գ. Դեկտեմբեր 18-ին

դ. Դեկտեմբեր 12-18 օրերուն մէջ
հանդիպող Շաբաթ օրը:

7.- Ո՞վ «Բարձեալին մարգարէն
պիտի կոչուի եւ Տիրոջ առջեւէն
պիտի քալէ անոր ճամբան
պատրաստելու համար».

Յ----- Մ-----

3.- Ո՞վ է առաջին մարտիրոսը.

ա. Ս. Պօղոս

բ. Ս. Պետրոս

գ. Ս. Ստեփանոս

դ. Ս. Դաւիթ մարգարէ

8.- Մկրտութեան թեկնածուն ի՞նչ կը
կոչուի.

ա. Երախայ

բ. Երեխայ

գ. Մանուկ

դ. Պգտիկ

4.- Ո՞վ էր նախասարկաւագը.

ա. Ս. Պօղոս

բ. Ս. Պետրոս

գ. Ս. Ստեփանոս

դ. Ս. Դաւիթ մարգարէ

9. Մկրտութիւնը կը կոչուի նաեւ.

Վ----- Ծ-----

5.- Ո՞ր առաքեալը Յիսուսը 3 անգամ
ուրացաւ եւ որուն տօնը այս տարի
Դեկտեմբեր 27-ին կը յիշատակենք.

Ս. Պ-----

10. Հին Կտակարանի Սաղմոսներու
գիրքը քանի՞ սաղմոսներէ կը
բաղկանայ.

ա. 150

բ. 66

գ. 76

դ. 39

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

- 1.- Մկրտուիթինը մեզ կը սրբէ. մասնակցեցաւ: Եւ ո՞ր տարին:
ա. Սկզբնական մեղքէն
բ. Ադամական մեղքէն
գ. Մինչեւ մեր մկրտուիլ, մեր գործած բոլոր մեղքերէն
դ. Մեծ մեղքերէն:
- 2.- Մկրտուիթինը կրնայ կատարուիլ 3 ձևերով: Թո՞ւ ի՞նչ այս երեք ձևերը.
ա. Հ-----
բ. Ը-----
գ. Ս-----
- 3.- Եկեղեցին որո՞ւն հաւատքին վրայ կը մկրտէ անչափահաս մանուկը.
ա. Մանուկին
բ. Ծնողքին
գ. Կնքահօր
դ. Ծնողքին եւ կնքահօր
- 4.- Ամբողջացո՞ւր.
Անչափահաս մանուկի մը մկրտութենէն ետք, ծնողքը Աստուծոյ առջեւ պարտական է զայն դաստիարակելու ----- հաւատքով, որպէսզի ան դառնայ առաքինի ----- մը:
- 5.- Ս. Յակոբ Մծբնայ հայրապետը ո՞ր Տիեզերական ժողովին մասնակցեցաւ եւ ո՞ր տարին.
ա. Ն-----
բ. 3--
- 6.- Ս. Գրիգոր Նիւսացի ո՞ր Տիեզերական ժողովին
- 7.- Ս. Պօղոս Առաքեալի գրած գիրքերուն թիւը երբ բաժնենք Ս. Պետրոս առաքեալի գրած գիրքերուն թիւով, քանի՞ կ'ունենանք.
ա. 2
բ. 3
գ. 5
դ. 7
- 8.- Ինչո՞ւ այս տարի Ս. Ստեփանոսի օրը կը նշենք Դեկտեմբեր 26-ին երբ անցեալ տարի նշեցինք Դեկտեմբեր 25-ին:

9. Ո՞ր քաղաքը «Դաւիթի քաղաք» կը կոչուի.

10. Ինչո՞ւ Բարթողոմէոս առաքեալ դաշոյնով կ'երեւի նկարներուն մէջ:
Որովհետեւ դաշոյնով
ն----- է:

2011-2012 Տարեշրջան (32րդ) Գործունեություն՝ Ամեն Կիրակի Ժամը 10:30 – 1:00

Մանկապարտեզ : Ա., Բ. եւ Գ. Դասարաններ	(3 - 5 տարեկան)
Նախակրթարան : Ա., Բ., Գ., Դ. Ե., եւ Զ., Դասարաններ	(6 - 11 տարեկան)
Երկրորդական : Ա., Բ., Գ., Դ. եւ Ե. Դասարաններ	(12 - 16 տարեկան)

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել տնօրէնին՝

Թորոս Պապիկեան

Հեռ. (514)-956-1277 email director@sourphagop.org

Կայքէջ՝

www.sourphagop.org

11-րդ տարի

Ամսաթերթ՝

«Մաշտոցի Արձագանգ»

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

19-րդ տարի

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (12-րդ տարի)

Այս թիւով.....

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը
խորհուրդները. Դրոշմ

Էջ 2

Դեկտեմբեր ամսուան բացատրական
տօնացոյց

Էջ 3-7

Ճրագալոյց Ս. Ծննդեան
Ջրօրհնէք
Աստուածայայտնութիւն
Խթում
Տաղ Սուրբ Ծննդեան
Յովհաննու Կարապետ
Ս. Վահան Գողթնացի
Ս. Գրիգոր Աստուածաբան
Ս. Աթանաս Աղեքսանդրիացի
Ս. Կիրէղ Աղեքսանդրիացի
Խորհուրդ Մեծ

Յիսուսի Ծնունդը

Էջ 8

Յիսուսի Տաճար Ընծայումը

Էջ 9-10

Առաջաւորաց Պաիք

Էջ 11

Եզակի գիրքեր

Էջ 11

Ո՛րն է ճիշդ պատասխանը

Էջ 12-15

Խմբագրական՝ Ի՞նչ կրնաւ ընել
Հայ տպագրութեան 500-ամեակը
արժանաւորապէս ոգեկոչելու համար

Էջ 16

Յունուար 2012 (ԺԹ տարի թիւ 5)



Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ծ...Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ
Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի

Ամսուան Համարը

«Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը
Միածինին, որ Հօրմէն եկաւ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն»։ *Յովհաննէս 1.14*

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը խորհուրդները (շար. 3)

Նոյեմբեր 2011-ի թիւէն սկսեալ յաջորդական թիւերով կը ներկայացնենք մեր եկեղեցւոյ խորհուրդներէն իւրաքանչիւրը:

Դրոշմ կը նշանակէ՝ *կնիք*: Դրոշմը Սուրբ Հոգիին կնիքն է, եւ ուրեմն դրոշմի խորհուրդը կը կոչուի *կնունք* որովհետեւ մկրտուածին ճակատը եւ մարմնին այլ 8 մասերը Ս. միւռնով կը կնքուին: Դրոշմի *խորհուրդով* ենթական կը ստանայ Սուրբ Հոգիին *շնորհքը*: Շնորհք կը նշանակէ՝ *պարգև* եւ այս նուէրը Աստուծոյ զօրութիւնն ու իմաստութիւնն է Քրիստոնէական հաւատքի մէջ ամուր Ժափնի եւ Սուրբ Երրորդութիւնը համարձակօրէն դաւանելու համար: Դրոշմի խորհուրդը կը կատարուի մկրտութենէն անմիջապէս յետոյ: Դրոշմին զգալի նշանը Ս. միւռնն է, որ կը խորհդանշէ Սուրբ Հոգին:



Բալասան



Դափնի

. Յիսուս Քրիստոս հաստատեց Դրոշմի խորհուրդը, երբ մկրտուելէ ետք ստացաւ Սուրբ Հոգիին օծումն ու կնիքը, եւ Յովհաննէս Մկրտիչ զԱյն հռչակեց Աստուծոյ օծեալը, այսինքն՝ Քրիստոս, Մեսիա՝
 . Դրոշմի խորհուրդը ստացողները կը կոչուին Աստուծոյ օծեալներ եւ կնքուածներ:
 . Միւռն կը նշանակէ սուրբ իւղ որ օրհնուած է աղօթքով եւ մասնաւոր արարողութեամբ (միւռնօրհնէք), որ կը կատարուի կաթողիկոսին կողմէ:

Ս. միւռնը ձիթենիի եւ դափնիի մաքուր ձէթն է, որուն մէջ կը խառնուին բալասան եւ 40-է աւելի անուշահոտ նիւթեր:

Առաքեալներն ալ կատարեցին Դրոշմի խորհուրդը, երբ Պետրոս եւ Յովհաննէս Սամարիա երթալով նորադարձ մկրտեալներուն վրայ ձեռք դնելով աղօթեցին որպէսզի անոնք ստանան Սուրբ Հոգին (Առ. Գործ. 8.14-17): Պօղոս առաքեալն ալ Եփեսոսի մէջ ձեռք դրաւ մկրտուող հաւատացեալներուն վրայ եւ անոնց վրայ իջաւ Սուրբ Հոգին (19.5-7):

Հայաստանեայց Եկեղեցին կը կատարէ Դրոշմի խորհուրդը, մկրտեալին մարմնին իննը մասերը՝ ճակատը, աչքերը, ականջները, հոտոտելիքը, բերանը, ձեռքերը, սիրտը, կոնակը եւ ոտքերը միւռնով օծելով եւ կնքելով:

. Դրոշմի խորհուրդը կատարելէ ետք քահանան կ'ըսէ դրոշմեալին.

- «Խաղաղութիւն քեզի, ո՛վ Աստուծոյ փրկեալ, խաղաղութիւն քեզի, ո՛վ Աստուծոյ օծեալ»:

. Դրոշմի խորհուրդն ալ մկրտութեան պէս անկրկնելի է:

Յունուար ամսուան բացատրական տօնացոյց

Կիր. 1	Ամանոր
Եշ. 5	Ճրագալոյց Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան
Ուր. 6	Տօն Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի
Շբթ. 7	Յիշատակ Մեռելոց
Ուր. 13	Տօն Անուանակոչութեան մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի
Շբթ. 14	Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետի
Շբթ. 21	Ս. Հայրապետներ Աթանաս եւ Կիրիլ
Գշ. 24	Ս. Վահան Գողթնացի
Շբթ. 28	Ս. Գրիգոր Աստուածաբան
Կիր. 29	Բարեկենդան Առաջաւորաց Պահքին

Ճրագալոյց Ս. Ծննդեան կը կոչուի Աստուածայայտնութեան նախորդող երեկոյեան արարողութիւնը: Ճրագալոյցը բարդ բառ մըն է, «ճրագ լուցանել (վառել)», որովհետեւ եկեղեցւոյ մէջ երեկոյեան բազմաթիւ լապտերներ ու կանթեղներ կը վառին եւ պատարագ կը մատուցուի, որուն ընթացքին բոլոր հաւատացեալները վառող մոմեր կը բռնեն:

Ճրագալոյցի լապտերներու եւ մոմերու լոյսը կը խորհրդանշէ այն հոգեւոր լոյսի ճառագայթումը մեր մէջ, որ մեզի պարգեւեց Փրկիչը իր տնօրինութիւններով:

Ջրօրհնէքի արարողութիւնը հաստատուած է ի յիշատակ Քրիստոսի մկրտութեան: Այն կը կատարուի Աստուածայայտնութեան տօնին: Հին ժամանակ ջրօրհնէքը կը կատարուէր գետերու կամ լիճերու ափին, այժմ՝ եկեղեցւոյ մէջ: Պատարագի աւարտին քահանան յատուկ ընթերցումներով, քարոզէն եւ աղօթքէն յետոյ խաչով կ'օրհնէ մեծ տակառի մէջ լեցուած ջուրը, Ս. Միլոն կաթեցնելէ ետք անոր մէջ, որ կը բաժնուի հաւատացեալներուն՝ իբրեւ սրբութեան խորհրդանիշ եւ բժշկութեան միջոց:

Աստուածայայտնութիւն (Սուրբ Ծնունդ եւ Մկրտութիւն)

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի տնօրինութիւնները, որոնցմով Ան յայտնուեցաւ աշխարհին (Գաբրիէլ հրեշտակապետի աւետումը, Յիսուս Մանուկին ծնունդը, ութնօրեայ թլփատութիւնը, հովիւներու եւ մոզերու երկրպագութիւնը, քառասնօրեայ ընծայումը, ինչպէս նաեւ Յորդանան գետին մէջ մկրտուիլը) առաջին դարերուն կը տօնուէին միեւնոյն, Աստուածայայտնութիւն կոչուող մեծ տօնախմբական շրջանին:

Հետագային այս տօնի գրեթէ բոլոր յիշատակները առանձնացան՝ տարուայ մէջ բաժնուելով ըստ համապատասխան ամիսներու եւ օրերու: Մնացին միայն Ծնունդը եւ Մկրտութիւնը, որոնք ըստ Աւետարանին կատարուած են նոյն օրը՝ երբ Յիսուս 30 տարեկան էր: Ըստ աւանդութեան այդ օրը Յունուար 6-ն էր:

Աւելի ուշ, Ե. դարուն (451 թուին Քաղկեդոնի մէջ գումարուած չորրորդ Տիեզերական ժողովին՝ որուն Հայաստանեայց Եկեղեցին չմասնակցեցաւ) Յունա-Հռոմէական եկեղեցին, Ծննդեան տօնը եւս անջատեց Մկրտութենէն եւ սկսաւ տօնել Դեկտեմբեր 25-ին (մոռցնել տալու համար այդ օրերու արեւի պաշտամունքը Եւրոպայի մէջ) որ տարածում գտաւ ամբողջ աշխարհին մէջ: Սակայն Հայ Եկեղեցին հաւատարիմ մնաց հնագոյն աւանդութեան եւ մինչեւ այսօր Քրիստոսի ծննդեան եւ մկրտութեան յիշատակը միացեալ կը տօնէ Յունուար 6-ին՝ Աստուածայայտնութիւն անուանումով:

ԽԹՈՒՄ

«Խթում» անուան տակ ծանօթ են Սուրբ Ծնունդը նախորդող երեկոյեան ընթացքին կատարուող նախատօնական եկեղեցական եւ ժողովրդական արարողութիւնները:

Այդ երեկոյ եկեղեցիէն ներս կանթեղներ կը վարուին եւ ճրագը կը բաժնուի ժողովուրդին՝ անոնց մոմերը վառելով ու այդպէս վառած մոմերը տուն տանելով: Ճրագ վառելու այս սովորութեան հետեւողութեամբ, Խթումի երեկոյեան տրուած է նաեւ ճրագալոյց անունը:

Անցեալին Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր մեծ տօներուն իբր նախատօնակ ճրագալոյց կը կատարուէր, իսկ ներկայիս միայն Սուրբ Ծնունդի եւ Զատիկուայ տօները նախորդող երեկոները:

Ճրագալոյցի ժողովրդական սովորութիւններէն են մէկը միսին Քրիստոսի ծննդեան աւետիս տալը, ապա աւանդական ընթրիքի շուրջ հաւաքուիլը, ճաշակելու համար ձուկ, բանջար, հակիթ եւ գինի:

Տաղ Սուրբ Ծննդեան

Այսօր տօն է սուրբ ծննդեան, աւետի՛ւ,
Տեառն մերոյ եւ յայտնութեան, աւետի՛ւ:
Այսօր Արեւն արդարութեան, աւետի՛ւ.
Երեւեցաւ ի մէջ մարդկան, աւետի՛ւ:

Քրիստոս ծննաւ եւ յայտնեցաւ:

Այսօր սուրբ կոյսն անապական, աւետի՛ւ.
Ծննաւ եբեր զանմահ Արքայն, աւետի՛ւ:
Այսօր հրեշտակք յերկնից իջեալ, աւետի՛ւ.
Ընդ մեզ օրհնեն զանմահ Արքայն, աւետի՛ւ:

Քրիստոս ծննաւ եւ յայտնեցաւ:

Գիտէի՞ր թէ....

Յիսուս երեսուն (30) տարեկան էր երբ մկրտուեցաւ:

Յիսուս ութ (8) օրուայ էր երբ անուանակոչուեցաւ, եւ մենք այս կը տօնենք Յունուար 13-ին:

Յովհաննու Կարապետ

Կարապետ կը նշանակէ «ճամբայ բացող»: Յովհաննէս Կարապետը, Յիսուս Քրիստոսի գալուստը վկայած մարգարէներէն վերջինն է որ նաեւ մկրտեց զԱյն այնուհետեւ կոչուելով «Յովհաննէս Մկրտիչ»: Ան մեծ համբաւ ունէր իր ապաշխարհութեան քարոզչութեամբ եւ իրեն հետեւորդներու մկրտութեամբ: Իր հանդէպ յարգանքը այնքան մեծ եղած է որ իր հետեւորդները հարց կու տային թէ արդեօք ի՞նքն էր Քրիստոսը: Յիսուս Յովհաննէսի մասին ըսաւ թէ աւելի մեծ մարդ գոյութիւն չունէր, սակայն Երկնքի մէջ, վերջինն իսկ իրմէ աւելի մեծ պիտի ըլլար:

Հայաստանեայց առաքելական եկեղեցին Յովհաննու կարապետի յիշատակը կը նշէ չորս ատիթներով, որոնցմէ ծննդեան տօնը այս տարի Շաբաթ Յունուար 14-ին է:



Հովիւներուն
Երկրպագութիւնը

Յիշատակութիւն՝ Սուրբ Վահան Գողթնացիի Յունուար 24

Արաբական տիրապետութեան շրջանին, բազմաթիւ հայ իշխաններ ու անոնց զաւակները գերի տարուեցան Դամասկոս հոն կրթուելու համար իսլամական հաւատքի մէջ եւ արաբ դառնալու համար: Տարագրուող մանուկներու կարգին կը գտնուէր Գողթնի Խոսրով իշխանի որդին՝ չորս (4) տարեկան Վահանը: Արաբները անոր անունը փոխելով զայն կոչեցին Վահապ:

Վահան, իր ուշիմութեան շնորհիւ արժանացաւ յատուկ խնամքի ու դարձաւ Օմար ամիրապետին նախասիրած արքունի պաշտօնեան:

Յովհան Օձնեցի կաթողիկոս Դամասկոս իր այցելութեան ընթացքին արտօնութիւն խնդրեց Օմար ամիրապետէն որ հայ տարագիր իշխանները վերադառնան հայրենիք ու յաջողեցաւ այդպիսի արտօնութիւն ձեռք ձգել: Վահան, որ թէեւ իսլամ կրօնքին մէջ մեծցած էր, իմացած էր թէ ինք Հայ իշխանի մը որդին էր: Հետեւաբար, ինք եւս փափաքեցաւ վերադառնալ Հայաստան, խոստանալով ամիրապետին վերադառնալ Դամասկոս իր հօրենական կալուածները ժառանգելէ ու հայրենի հողը տեսնելէ անմիջապէս ետք:

Վահան իր հայրենի գաւառը հասնելէ ետք տեղեկացաւ Օմար ամիրապետին մահուան մասին ու որոշեց փախ Հայաստան ու վերագտնել իր քրիստոնէայ հաւատքը:

Վահանի քրիստոնէայ դառնալու լուրը երբ Դամասկոս հասաւ, օրուան ամիրապետը որոշեց ձերբակալել զայն ու դատել: Այսպիսով սկիզբ առաւ հալածանքի երկար շրջան մը երբ Վահան թափառելով Հայաստանի զանազան կողմերը, ժամանակաւոր կերպով կ'ապաստանէր զանազան շրջաններու վանքերէն ներս, ապա կը ստիպուէր տեղափոխուիլ չվտանգելու համար տեղի

վանականներն ու բնակիչները: Այս թափառական վիճակի վերջին հանգրուանը կը հանդիսանայ Սիփան լեռան ստորոտը գտնուող Երաշխաւորաց վանքը, որուն մեծաւոր Հայր Արտաւազդը պատսպարեց ու քաջալերեց զինք:

Գիտնալով հանդերձ թէ իսլամութենէն հրաժարող անձը մահուամբ կը պատժուէր, Վահան որոշեց ներկայանալ Հեղամ ամիրապետին, յայտնել անոր իր քրիստոնէայ ծագումը ու քրիստոնէայ հաւատքին հաւատարիմ փախու փափաքը: Ամիրապետին մեծ խոստումները ապարդիւն մնացին ու Վահան մերժեց որեւէ ձեռով հրաժարիլ իր քրիստոնէայ հաւատքէն:

Վահան Գողթնացիի նահատակութիւնը այլ օրինակ մըն է հերոսական կեցուածքի մը, ըստ որուն քրիստոնէայ հաւատացեալներ հաստատուն փացած են իրենց հաւատքին հանդէպ ու մերժած ուրանալ զայն:

Անոնց յիշատակը վառ կը փայ միայն երբ իրենց նահատակութիւնը արժեւորենք մենք եւս կառչած մնալով մեր հաւատքին ու ապրելով որպէս Քրիստոսի սիրով ու հաւատքով շնորհուած հաւատացեալներ:

Գողթն գաւառը կը գտնուի Նախիջեւանի մէջ որ ներկայիս Ատրպէյճանի տիրապետութեան տակ է: Անոր քաղաքներէն են Տիգրանաւան եւ Ագուլիս:

Ս. Գրիգոր աստուածաբան (330-390)

Տիեզերական վարդապետ, իր ծննդավայրի անունով կր կոչուի նաեւ Նազիանգացի: Ան ծնաւ իր մօր աղօթքներով, որ արու գաւակ չունէր եւ այդ կը խնդրէր Աստուծմէ: Գրիգորը ուսանեցաւ Կեսարիոյ, Պաղեստինի, Աղեքսանդրիոյ եւ Աթէնքի մէջ ստանալով փիլիսոփայական եւ հռետորական կրթութիւն: Աթէնքի մէջ անոր ընկերակիցն էր Բարսեղ Կեսարացին, եւ երկուքը մարդոց ուշադրութիւնը կը գրաւէին իրենց ժուժկալութեամբ եւ ճգնութեամբ հիացումը պատճառելով քաղաքի բնակիչներուն: 361 թուականին քահանայ ձեռնադրուելով՝ ան դարձաւ Նազիանգի եկեղեցւոյ առաջնորդը: Իսկ 381 թուականին նշանակուեցաւ Կոստանդնուպոլսոյ Եպիսկոպոս: Ան մասնակցեցաւ Բ. տիեզերական ժողովին 381-ին Կոստանդնուպոլսոյ մէջ:



Ս. Աթանաս Աղեքսանդրիացի
Երեւան, ձեռ. 7478 էջ 28բ,
Յայսմաւուրք ԺԶ-ԺԷ դար,
ծաղկող թորոս

Ս. Գրիգոր Աստուածաբան
Երեւան, ձեռ. 7478 էջ 41ա,
Յայսմաւուրք ԺԶ-ԺԷ դար,
ծաղկող թորոս




Ս. Աթանաս Աղեքսանդրիացի (295-373)

Ծնած է Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքին մէջ: Ծագումով եգիպտացի է, եւ փոքր հասակէն իր ծնողները զինք նուիրած են Աստուծոյ ծառայութեան: Իր մանկութենէն ունեցած է յառաջադէմ միտք եւ առաքինի վարք, որու պատճառով Աղեքսանդրիոյ հայրապետը զինք դարձուցած է իր նոտարը եւ՝ սարկաւազ ձեռնադրած: Ան, հայրապետին հետ մասնակցեցած է 325-ի Նիկիոյ տիեզերական ժողովին: Ս. Աթանաս իր ներդրումը ունեցած է այդ ժողովի ընթացքին գրուած դաւանանքին: Իր դաւանաբանական երկերուն պատճառով, Ս. Գրիգոր աստուածաբանի կողմէ կոչուած է Տիեզերական Եկեղեցւոյ սիւներէն մին:

Ս. Կիրէղ Աղեքսանդրիացի Հայրապետ (375-444)

Կիրէղ Աղեքսանդրիացի հայրապետը Աղեքսանդրեան աստուածաբանական դպրոցի փայլուն ներկայացուցիչներէն մէկն է: Ծնած է 375 թ., եղբորորդին է Թեոփիլոս պատրիարքի, որուն յաջորդած է 412 թուականին: Կ. Պոլսոյ պատրիարք Նեստորի դէմ պայքարած է ուղղափառ դաւանանքի համար, որուն պատճառով ալ Թեոդորոս Բ. կայսրը 431 թ. Եփեսոսի մէջ հրաւիրած է Տիեզերական Գ. ժողովը: Ժողովի ընթացքին Նեստորը եւ իր ուսմունքը դատապարտուած են:

Սուրբ Աթանաս եւ սուրբ Կիրէղ Աղեքսանդրիացի հայրապետները Հայ Առաքելական Եկեղեցւոյ տօնելի 12 համաքրիստոնէական մեծագոյն վարդապետներէն են, եւ անոնց յիշատակը տարուան մէջ կը տօնուի նաեւ Հոկտեմբերի վերջաւորութեան՝ 12 վարդապետներու շարքին:



Մկրտություն
Յովսափան Յովսափանեան

Խորհուրդ մեծ

Ո՞վ չի գիտեր Սուրբ Ծնունդի մասին գրուած ամենածանօթ այս շարականը որ կը հնչէ ամէն տարի խթման գիշերը աւետելու համար Յիսուսի ծնունդը: Այս շարականին հեղինակն է Մովսէս Քերթոյ Հայրապետ եւ զայն գրած է 441 թուականին: Ահա այդ շարականին գրաբար բառերը եւ աշխարհաբար թարգմանութիւնը.

Խորհուրդ մեծ եւ սքանչելի
որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւք երգեն ընդ հրեշտակս,
տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ
ի Բեթղեհէմ քաղաքի.
Որդիք մարդկան օրհնեցէ ք,
զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի
ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի Հօրէ՝
ի սուրբ այրին բազմեցաւ:

* * *

Սքանչելի եւ մեծ խորհուրդ է,
որ այսօր յայտնուեցաւ.
Հովիւները հրեշտակներու հետ կ'երգեն,
աշխարհին աւետիս կու տան:

Ծնաւ նոր արքայ
Բեթղեհէմ քաղաքին մէջ.
Ով ժողովուրդ, մարդիկ, օրհնութիւն տուէր
որովհետեւ Ան մեզի համար մարմնացաւ:

Երկնքին եւ երկրին վրայ Անբաւելին
խանձարուրներու մէջ փաթթուեցաւ.
Առանց բաժնուած ըլլալու Հօրմէն
սուրբ մտորին մէջ բազմեցաւ:

ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ

Զանճառելի լուսոյ մայր
Եւ ըզբնակարան անըսկզբնակից Որդւոյն,
Օրհնութեամբ մեծացուցանենք:

Զանհաս տնօրէնութեան մայր
Եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին,
Օրհնութեամբ մեծացուցանենք:


Զբոլորից փրկութեան մայր,
Որ զանտանելին յէից ի յարգանդի եբարձ.
Ըզնա ամենեքեան օրհնութեամբ
մեծացուցանենք:

Յիսուսի Ծնունդը

Դուկաս 2:1-21

Եկուր Բեթլեհէմ երթանք եւ տեսնենք պատահածը, այն ինչ որ Տէրը մեզի յայտնեց:

Օգնէ հովիւներուն որ գտնեն Յիսուս մանուկը:



Տուն մը: Մէջէն կրնանք անցնիլ եւ յառաջանալ:



Միակ մանուկ մը: Ետ դարձէք:



Մէկը որ ձեզի ճամբան ցոյց կուտայ:
Յառաջացիր:



Յիսուսի Տաճար Ընծայումը

Ղուկաս 2:22-38

Յովսէփն ու Մարիամը մանուկ Յիսուսը Երուսաղէմ տարին Տիրոջ ընծայելու: Հոն էր նաեւ Փանուէլի աղջիկը՝ Աննա մարգարէուհին, որ Ասերի ցեղէն էր: Ան տաճարէն չէր հեռանար, այլ գիշեր ու ցերեկ ծոմապահութեամբ եւ աղօթքով անցնելով՝ զԱստուած կը պաշտէր:

Մարգարէուհին անդադար $\frac{-}{1} \frac{-}{2} \frac{-}{3} \frac{-}{4} \frac{-}{5} \frac{-}{6} \frac{-}{7} \frac{-}{8} \frac{-}{9}$ կու տար $\frac{-}{10} \frac{-}{11} \frac{-}{12} \frac{-}{13} \frac{-}{14}$:

Իւրաքանչիւր թիւի համապատասխան հարցումին համար շրջանակի մէջ առ ճիշդ կամ սխալ սինակի գիրը եւ զայն վերի գծիկներուն մէջ գրելով գտիր թէ ինչ ըրաւ մարգարէուհին:

	Ճիշդ	Սխալ
1 - Յիսուս մանուկը տարին Երուսաղէմ:	գ	ա
2 - Յիսուս տարին մանուկի բժիշկին:	բ	ն
3 - Յիսուս ներկայացուցին Մովսէսին:	գ	հ
4 - Մարիամ եւ Յովսէփ Յիսուսը ընծայեցին Տիրոջ:	ո	դ
5 - Միմոն տաճարին մէջ տատրակ կը ծախէր:	ե	ւ
6 - Միմոն գիրկը առաւ մանուկ Յիսուսը:	թ	զ
7 - Յիսուս եւ իր ծնողքը վերադարձան Անտիոք:	է	ի
8 - Սուրբ ընտանիքը կառքով ճամբորդեց:	ը	ւ
9 - Տաճարին մէջ էր նաեւ Աննա մարգարէուհին:	ն	թ
10 - Մարիամ, Յովսէփ եւ Յիսուս վերադարձան Նազարէթ:	Տ	Ժ
11 - Միմոն Օրհնեց սուրբ ընտանիքը:	ի	ւ
12 - Աննա երիտասարդ մարգարէուհի մըն էր:	լ	ր
13 - Աննա տխրեցաւ երբ մանուկը տեսաւ:	իս	ո
14 - Ան մանուկին մասին կը խօսէր:	ջ	ծ

Յիսուսի Տաճար Ընծայումը Ղուկաս 2:22-38

Արդար եւ աստուածավախ մարդ մը կ'ապրէր Երուսաղէմի մէջ: Սուրբ Հոգին վստահեցուցած էր զինք որ Տիրոջ Օծեալը չտեսած ան պիտի չմեռնէր: Սուրբ Հոգիէն առաջնորդուած՝ անիկա տաճար գնաց երբ Մարիամ եւ Յովսէփ մանուկ Յիսուսը տաճար բերին Տիրոջ ընծայելու համար:

Ո՞վ էր այդ մարդը:



Անունը գտիր գիրերու շարքէն պակսող գիրը գրելով՝

չ	պ	ջ	ռ	վ		ս
թ	ժ	լ	խ	ծ		
ճ	յ	ն	շ	ր		
ն	շ	չ	պ	ջ		
ճ	մ	յ	շ	ր		

— — — — —

Ան գիրեր առաւ փոքրիկը եւ զԱստուած

ս	բ	դ	ե	գ		գ
մ	յ	ն	շ	չ		
խ	ծ	կ	ձ	ղ		
օ	ֆ	բ	գ	դ		
ս	գ	դ	ե	գ		
օ	ֆ	բ	գ	դ		
ճ	մ	յ	շ	ր		
գ	դ	գ	ե	ը		
տ	ր	ւ	փ	ք		

— — — — —

Առաջաւորաց Պահք Այս տարի Յունուար 30-ին կը սկսի Առաջաւորաց պահքը (յատուկ է միայն Հայ Առաքելական Եկեղեցւոյ): Այս պահքը կը տեւէ հինգ օր՝ (Երկուշաբթիէն Ուրբաթ) այս տարի մինչև Փետրուարի 3-ը ներառեալ:

Ինչպէս մեզի հասած աւանդութիւնը կ'ըսէ, Խոր Վիրապէն ելլելէն ետք Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, Տիրոջ հրաշքով դարձի եկած Տրդատ արքային, հայոց մեծամեծներուն ու ողջ ժողովուրդին, նախքան մկրտելը, 65 օր շարունակ Քրիստոսի ու Անոր հաւատքը քարոզեց եւ այդ օրերէն 5-ի ընթացքին պատուիրեց պահքով ապաշխարել: Այդ հինգ օրերուն ժողովուրդն իր արքայով հանդերձ ոչ միայն ինքզինք զրկեց կերակուրներէ, այլ ինչպէս Աստուծոյ կողմէ ընդունելի պահքը կը պահանջէ, մեծապէս զոջաց իր նախկին հեթանոսական, անբարոյ կեանքին և բոլոր տեսակ

մեղքերուն համար, մանաւանդ հայոց արքան ու մեծամեծները, որոնք Քրիստոսի հաւատքի պատճառով Սուրբ Գրիգորը բազմաթիւ տանջանքներու ենթարկելէ ետք օձերով լեցուն եւ խաւար խոր փոսը՝ վիրապին մէջ ձգեր էին, իսկ Հռիփսիմեան կոյսերը չարչարելով սպաններ էին:

Այսպէս հաստատուեցաւ Առաջաւորաց պահքը կամ Առաջաւորքը՝ Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջին պահքը (ինչպէս յայտնի է անունէն): Պահքի առաջին 4 օրերուն ճաշու աւետարան չի կարդացուիր իսկ 5-րդ օրը կը կարդացուի Յովսէփ Մարգարէի գիրքը:



Հայկական առաջին տպագիր գիրքը

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

բ	ը	ե	է	զ	թ	դ	ա	գ
թ	է	զ	բ	դ	ա	ե	զ	ը
ա	զ	դ	զ	ը	ե	թ	բ	է
դ	ա	բ	թ	է	ը	զ	ե	զ
զ	ե	ը	ա	բ	զ	է	թ	դ
է	թ	զ	ե	զ	դ	բ	ը	ա
զ	բ	է	ը	ե	զ	ա	դ	թ
ը	զ	թ	դ	ա	բ	զ	է	ե
ե	դ	ա	զ	թ	է	ը	զ	բ

Նախորդ «Եզակի գիրեր»ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր, իւրաքանչիւր

- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

զ		է	դ	թ				
		ա	զ			է		թ
ը			բ		է	ա		
	դ			է	զ		թ	
	բ	է				զ	է	
	է		է	դ			զ	
		զ	ա		դ			զ
է		թ			ը	դ		
				զ	զ	է		ը

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր ըստ Մատթեոսի Աւետարանին 2. 9-12

հրահանգը, աստղը, առաջնորդեց, երկրպագեցին, ոսկի, կնդրուկ, զմուռ, երագի

Թագաւորին այս ----- լսելէ ետք, մոզերը մեկնեցան:
Անոնք չափազանց ուրախացան, երբ կրկին տեսան այն -----,
որ արեւելքի մէջ տեսեր էին. եւ ահա աստղը ----- զիրենք
մինչեւ որ եկաւ ու կեցաւ այն վայրին վրայ ուր երեխան կը
գտնուէր: Երբ տուն մտան, տեսան երեխան իր մօրը՝ Մարիամին
հետ, եւ մինչեւ գետին խոնարհելով ----- մանուկին:
Ապա բացին իրենց արկղերը եւ Յիսուսի ընծայեցին իրենց
նուէրները -----, ----- եւ -----:

Յետոյ ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը, առանց Հերովդէսի
հանդիպելու, ինչպէս որ Աստուած ----- մը մէջ հրահանգեց
իրենց:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Յունուար 24ին:

- ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
Հայրապետին
- բ. Ս. Աբգար Թագաւորին
- գ. Ս. Վահան Գողթնացիին
- դ. Բոլոր Սուրբերուն

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս.
Աթանասի եւ Ս. Կիրիլի տօնը:

- ա. Յունուար 6-ին
- բ. Յունուար 4-ին
- գ. Յունուար 21-ին
- դ. Յունուար 27-ին

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Յիսուսի ծննդեան տօնը:

- ա. Յունուար 6-ին
- բ. Յունուար 18-ին
- գ. Յունուար 20-ին
- դ. Յունուար 27-ին

4.- 2013-ին ե՞րբ տեղի պիտի ունենայ
Զրօքինէք:

- ա. Յունուար 6-ի Ս. Պատարագէն
ետք:
- բ. Յունուար 5-ի երեկոյեան
- գ. Զատիկին
- դ. Բարեկենդանին

5.- 1999-ին ե՞րբ տօնեցինք Յիսուսի
մկրտութեան տօնը:

- ա. Յունուար 6-ին
- բ. Յունուար 18-ին
- գ. Դեկտեմբեր 25-ին
- դ. Յունուար 27-ին

6.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Յիսուսի Աստուածայայտնութիւնը:

- ա. Յունուար 6-ին
- բ. Դեկտեմբեր 18-ին
- գ. Յունուար 25-ին
- դ. Յունուար 27-ին

7.- Յիսուս ինչո՞վ մկրտուեցաւ:

- ա. Ձէթով
- բ. Զուրով
- գ. Միւռնով
- դ. Իւղով

8.- Յիսուս որո՞ւ կողմէ մկրտուեցաւ:

- ա. Տէր Գառնիկին
- բ. Սրբազանին
- գ. Յովհաննէս Մկրտիչին
- դ. Քահանայապետին

9.- Ի՞նչ կը կոչենք Ս. Ծնունդին
նախորդող երեկոն:

- ա. Խթում
- բ. Զատիկ
- գ. Զրօքինէք
- դ. Բարեկենդան

10.- Ե՞րբ տեղի կ'ունենայ
Ճրագալոյցը:

- ա. Յունուար 6-ի Ս. Պատարագէն
ետք:
- բ. Յունուար 5-ի երեկոյեան
- գ. Զատիկին
- դ. Բարեկենդանին

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Յիսուսի անուանակոչութիւնը
անշարժ տօն մըն է: Ամէն
տարի ե՞րբ կը տօնենք Յիսուսի
անուանակոչութիւնը:

Յունուար --- ին:

2.- Մոգերը ի՞նչ նուիրեցին Յիսուս
Մանուկին:

ա. ---ի

բ. -----կ

գ. գ-----

3.- Ո՞վ էր Հրէաստանի թագաւորը
երբ Յիսուս ծնաւ:

-----ս

4.- ա. Ո՞վ էր Հռոմի կայսրը երբ
Յիսուս ծնաւ:

բ. Տարուան քանիերորդ ամիսը այս
կայսրին անունով է:

ա. -----

բ. --

5.- Հինգ Տաղաւարներէն ո՞ր մէկը
անշարժ տօն մըն է:

ա. Ս. Ծնունդ

բ. Ս. Զատիկ

գ. Պայծառակերպութիւն

դ. Վերափոխումն Ս. Աստուածածնի

ե. Խաչվերաց

6.- Յիսուսի մկրտութեան ընթացքին,
Ս. Հոգին ինչի՞ կերպարանքով իջաւ
Յիսուսի վրայ:

-----ի

7.- Ամբողջացո՞ւր ըստ Աւետարան
ըստ Մարկոսի 1.11-ին:

Երկինքէն ձայն մը լսուեցաւ, որ
կ'ըսէր.

- Դուն ես -- ս----- Ո-----, որուն
-----:

8.- Ս. Ծնունդի խթման մատուցուող
Ս. Պատարագի ընթացքին երբ
«Սուրբ Աստուած, Սուրբ եւ հօգօր,
Սուրբ եւ անմահ ողորմեա
մեզ» կ'երգենք, ի՞նչ կ'ըսենք երկրորդ
տողին:

ա. որ խաչեցար վասն մեր

բ. որ յայտնեցար վասն մեր

գ. որ երկիր եւ գալոց ես

դ. որ յարեար ի մեռելոց

9.- Առաջին հայերէն գիրքը որ
տպուեցաւ 1512-ին.

ա. Ի՞նչ կը կոչուէր

բ. Ո՞ր քաղաքին մէջ

տպուեցաւ:

ա. -----գիրք

բ. Վ-----

10.- Յիսուսի ծննդեան հովիւներու
այցին մասին միայն մէկ
աւետարանի մէջ կը կարդանք: Ո՞ր
աւետարանին մէջ:

ա. Մատթէոս

բ. Մարկոս

գ. Դուկաս

դ. Յովհաննէս

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

1.- Անոնք որոնք Ս. Ծնունդը կը տօնեն

Դեկտեմբեր 25-ին, ե՞րբ կը տօնեն

մկրտութիւնը:

ա. Յունուար 6-ին

բ. Յունուար 1-ին

գ. Յունուար 13-ին

դ. Դեկտեմբեր 25-ին

2.- Արեւմտեան Եւրոպայի քրիստոնեաները

ե՞րբ փոխեցին Ս. Ծննդեան տօնը Յունուար

6-էն Դեկտեմբեր 25-ին:

ա. 325 Նիկիոյ ժողովին

բ. 451 Քաղկեդոնի ժողովին

գ. 381 Կոստանդնուպոլսոյ ժողովին

դ. 431 Եփեսոսի ժողովին

3.- Հայաստանեայց Եկեղեցին այս տարի

ո՞ր սուրբին տօնը կը յիշատակէ Յունուար

24-ին:

Ս. Վ----- Գ-----

4.- Գրէ՛ շիտակ ժամանակագրական

շարքով հետեւեալ տօները.

Աստուածայայտնութիւն,

Անուանակոչութիւն, Յովհաննու

Կարապետ, Ս. Սարգիս, Ղեւոնդեանց,

Վարդանանց, Բուն Բարեկենդան:

ա.

բ.

գ.

դ.

ե.

զ.

է.

5.- Գրէ՛ շիտակ ժամանակագրական

շարքով հինգ տաղաւարները:

ա.

բ.

գ.

դ.

է.

6.- Ամբողջացո՛ւր:

Խորհուրդ — եւ սքանչելի

որ յայսմ աւուր -----.

----- երգեն ընդ հրեշտակս

տան ----- աշխարհի

7.- Ամբողջացո՛ւր:

----- նոր արքայ

Ի ----- քաղաքի.

Որդիք մարդկան -----

զի վասն մեր -----:

----- երկնի եւ երկրի

ի ----- պատեցաւ.

Ոչ ----- ի Հօրէ

ի սուրբ ----- բազմեցաւ:

8.- Ո՞ւր կը գտնուի Գողթն գաւառը:

Ն-----ի մէջ:

9.- Տարուան ո՞ր 4 օրերը ճաշու աւետարան

չի կարդացուիր:

10.- Հայկական ՋԿԲ տարին ո՞ր տարուան

կը համապատասխանէ:

1---

Խմբագրական՝

Ի՞նչ կրնամ ընել Հայ տպագրության 500-ամեակը արժանաւորապէս ոգեկոչելու համար



Յակոբ Մեղապարտ

Ինչպէս գիտէք 2012 թուականը 500-ամեակն է Յակոբ Մեղապարտի 1512-ին Վենետիկի մէջ Ուրբաթագիրքի տպագրութեան: Գիրքը ունի 124 թուղթ էջեր եւ տպագրուած է սեւ եւ կարմիր գոյներով: Յակոբ Մեղապարտի հիմնած առաջին հայկական տպարանը գործած է 1512-1513 թուականներուն, լոյս ընծայելով հաւանաբար վեց գիրքեր, որոնցմէ այժմ պահպանուած են հետեւեալ հինգը, ըստ տպագրման հերթականութեան՝

«Ուրբաթագիրք» 1512

«Պատարագագիրք» 1513

«Աղթարք» 1513

«Պարգատումար» 1513

«Տաղարան» 1513

Միայն «Պատարագագիրք»-ն ունի հրատարակութեան թուականը, վայրն ու տպագրիչի անունը նշող յիշատակարան.

«Գրեցաւ տառս ի ջկը (1513), ի աստուածապահ քաղաքս ի Վենեժ, որ է Վենետիկ՝ Տռանկստեան. ձեռամբ Մեղապարտ Յակոբին. ով որ կարդայք մեղաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ»: «Պատարագագիրք» Վենետիկ 1513

Այսօրուայ պայմանները մեզմէ իւրաքանչիւրին առիթ կու տան Յակոբ Մեղապարտ մը ըլլալու, որովհետեւ երբ մենք նստած մեր համակարգիչներուն առջեւ, ընտրութիւնը եւ կարելիութիւնը ունինք մտրոպատառ հայերէն գրելու: Հետեւաբար կը ներկայացնենք մեր ԳՈՐԾՆԱԿԱՆ առաջարկները ոգեկոչելու համար այս 500-ամեակը.

1. Միայն օտար լեզուներով համացանցային ներկայութիւն ունեցող հայ կազմակերպութիւններէն պահանջել որ հայերէն լեզուով համահաւասար ներկայութիւն ունենան:
2. Պահանջել հայ կազմակերպութիւններէն որ իրենց բոլոր ներքին եւ արտաքին հաղորդակցութիւնները անդամներուն, ժողովականներուն եւ ժողովուրդին միջեւ ընեն նաեւ մտրոպատառ հայերէնով:
3. Մտրոպատառ հայերէնով գրել մեր ե-նամակները (email) երբ հայերէն կարդացողներու հետ կը հաղորդակցինք:
4. Մտրոպատառ հայերէն գործածել Facebook, Myspace, Twitter եւ այլ կայքէջերու վրայ:

Իսկ եթէ կը կարծէք թէ դժուար է մտրոպատառ հայերէնով գրել համակարգիչի կամ համացանցին վրայ, դարձեալ կ'ուզենք յիշեցնել թէ երկու շատ պարզ ձեւեր կան.

Ա. Այցելեցէ՛ք http://sourphagop.org/enable_armenian_in_7_clicks եւ եօթն անգամ ստեղն սեղմելով պիտի կարենաք Հայերէն ունենալ ձեր համակարգիչին վրայ:

Բ. Այցելեցէք http://sourphagop.org/virtual_armenian_keyboard եւ պիտի առաջնորդուիք էջ մը ուր մեքենականօրէն հայերէնով պիտի գրէք, եւ ձեր գրութիւնը կրնաք ընդօրինակել (copy) եւ փակցնել (paste) համակարգիչին կամ համացանցին վրայ ուր որ կ'ուզէք:

2012-ին կ'ընտրեմ մտրոպատառ հայերէնով գրել համակարգիչին եւ համացանցին վրայ: Շնորհաւոր Ամանոր եւ Ս. Ծնունդ

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (12-րդ տարի)

Այս թիւով.....

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը
խորհուրդները. Ապաշխարութիւն

Էջ 2

Փետրուար ամսուան բացատրական
տօնացոյց

Էջ 3-7

Տեառնընադառաջ

Սուրբ Սարգիս

Ղեւոնդեանք

Ս. Թէոդորոս

Մեծ Պահքի Կիրակիները

Նորահրաշ՝ Ս. Վարդանանց

շարական

Ս. Սահակ Պարթեւ

Օծեալին տրուած անունները

Էջ 8

Հաւատք

Էջ 9

Յիսուս՝ Աստուծոյ գառնուկը

Էջ 10

Կիրակնօրեան եւ Մեծ Պահքը

Էջ 11

Եզակի գիրքը

Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Էջ 12-15

Ամէն օր Վարդանանց է

Էջ 16

Փետրուար 2012 (ԺԹ տարի թիւ 6)



Վ...Վարդանանք

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարը

«Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը
Միածինին, որ Հօրմէն եկաւ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն»։ *Յովհաննէս 1.14*

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը խորհուրդները (շար. 4)

Նոյեմբեր 2011-ի թիւէն սկսեալ յաջորդական թիւերով կը ներկայացնենք մեր եկեղեցւոյ խորհուրդներէն իւրաքանչիւրը:

Ապաշխարութիւն կը նշանակէ՝ զոջալ կատարուած մեղքի համար, խոստովանիլ զայն եւ Աստուծմէ թողութիւն խնդրել: *Մեղքը* կրօնական, բարոյական *յանցանքն* է (օրինակ ճշմարտութեան դէմ հակառակութիւն, Աստուծոյ պատուիրաններուն անհնազանդութիւն): Մեղքին հետեւանքը ապականութիւն է, հեռացում Աստուծմէ, որով մարդը կը կորսնցնէ աստուածային շնորհները ու իր որդեգրութիւնը, եւ կը դատապարտուի (մահէն ետք) յաւիտենական տանջանքի: Սակայն երբ *խոստովանի* իր մեղքերը եւ *ապաշխարէ*, թողութեան կ'արժանանայ:

Գիտէի թէ ... Պայման է որ բոլոր մարդիկ, որովհետեւ կամայ թէ ակամայ ենթակայ են մեղանշելու, պէտք է դարձի գան, զոջան, խոստովանին եւ ապաշխարեն, որպէսզի սրբուին իրենց մեղքերէն:

. Ապաշխարութիւնը խորհուրդ է որովհետեւ ապաշխարողը իր մեղքերուն համար թողութիւն կը ստանայ, կը նորոգուի, կը վերականգնի, ներքին փոփոխութիւն եւ հոգեկան խաղաղութիւն կ'ունենայ:

. Խոստովանութեան արարողութիւնը ապաշխարութեան խորհուրդի կատարումն է, պայմանաւ որ խոստովանողը սրտանց զոջայ եւ թողութիւն խնդրէ:

. Նկատելով որ մարդ արարածը մեղանշական է,

Ապաշխարութեան խորհուրդը կրնայ կրկնուիլ:

Ապաշխարողը Աստուծոյ կը խոստովանի եւ թողութիւն կը խնդրէ: Սակայն, նկատելով որ

1. Յիսուս, իր առաքեալներուն իշխանութիւն տուաւ մարդոց մեղքերը կապելու եւ արձակելու եւ

2. Առաքեալները իրենց ստացած իշխանութիւնը ձեռնադրութեամբ փոխանցեցին իրենց յաջորդներուն, եւ

3. Քահանան Աստուծոյ ձեռնադրեալ եւ օծեալ պաշտօնեան է,

մենք մեր մեղքերը քահանային առջեւ կը խոստովանինք:

Խոստովանութեան արարողութիւնը Հայ Եկեղեցւոյ մէջ,

կը կատարուի հաւաքական կերպով: Խոստովանողներէն մէկը կը կարդայ «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան» զոջման աղօթքը. որմէ ետք քահանան «Ողորմեսցի Ձեզ մարդասէրն Աստուած» աղօթքը արտասանելով՝ Աստուծոյ անունով մեղքէ կ'արձակէ խոստովանողները: *Անհրաժեշտ պարագաներուն ապաշխարողներ կրնան առանձին ներկայանալ քահանային:*

Անդադար Աղօթքը, Աստուածաշունչի սերտողութիւնը ու յաճախակի ծոմապահութիւնը գործնական միջոցներ են փորձութիւններուն յաղթելու եւ չմեղանշելու համար: **Ամէն Կիրակի** Եկեղեցի յաճախելով եւ Ս. Պատարագի արարողութեան երկիւղածութեամբ հետեւելով, եւ **յաճախ հաղորդուելով** (ճաշակելով Քրիստոսի կենդանարար մարմինն ու արիւնը) **հաւատացեալը** հոգեպէս կը զօրանայ:

Փետրուար ամսուան բացատրական տօնացոյց

Ուր. 3	Յիշատակ՝ Յովսէփ Մարգարէի
Շբթ. 4	Սբ. Սարգիս Զօրավար, Որդին Մարտիրոս եւ 14 զինուորներ
Բշ. 6	Սբ. Ատովմաց Զօրավարացն
Գշ. 7	Սբ. Սուքիասեանց Վկայիցն
Եշ. 9	Սբ. Ոսկեանց Քահանայիցն
Շբթ. 11	Սբ. Սահակ Պարթեւ
Բշ. 13	Աբ. Ղեւոնդեանք
Գշ. 14	Տեառնընդառաջ,
Եշ. 16	Սբ. Վարդանանք
Շբթ. 18	Կոստանդնուպոլսոյ Բ. Տիեզերական ժողովի (381թ.) 150 հայրապետներ
Կիր. 19	Բուն Բարեկենդան
Բշ. 20	Ա. Օր Մեծ Պահքի
Շբթ. 25	Ս. Թեոդորոս Զօրավար
Կիր. 26	Արտաքսման Կիրակի

Գիտէի՞ր թէ ...

Տեառնընդառաջի մասին կարելի է կարդալ միայն Ղուկասի աւետարանին մէջ: Մատթէոս, Մարկոս եւ Յովհաննէս Սուրբ աւետարանիչները չեն ակնարկած Յիսուսի կեանքի այս դէպքին:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Հայաստանեայց Եկեղեցւոյ տէրունի տօներէն մէկն է: Ան յիշատակնէ այն օրուան երբ 40 օրուայ մանուկ Յիսուսը բերուեցաւ տաճար ու ընծայուեցաւ Աստուծոյ: Տեառնընդառաջը անշարժ տօն մըն է, եւ ամէն տարի կը տօնենք Սուրբ Ծնունդէն 40 օրեր ետք, Փետրուար 14-ին:

Տեառնընդառաջի օրը, եկեղեցիէն ներս պատարագ կը մատուցուի, Եկեղեցիին 4 անկիւնները կը կարդացուին աւետարանի համապատասխանող հատուածներ: Կը յիշատակուին նաեւ ծերունի Սիմոնն ու Աննա մարգարէուհին, որոնք Յիսուսի տաճար ընծայման ներկայ գտնուեցան:

Ի՞նչ կը տօնենք Փետրուար 14-ին

Երբ մեր շուրջը St. Valentine կը տօնուի, մենք պէտք է յիշենք թէ Հայ Եկեղեցին այդ օրը Տեառնընդառաջ կը տօնէ: Տեառնընդառաջը, 40 օրուայ Յիսուս Մանուկին տաճար տարուելու եւ Աստուծոյ նուիրուելու օրն է: Նախորդող գիշերը, 13-ին, եկեղեցւոյ մէջ արարողութիւն տեղի կ'ունենայ, կրակ կը վառեն եկեղեցւոյ բակին մէջ ու հաւատացեալներ իրենց մոմերը վառելով տուն կը տանին:



Յիշատակութիւն՝ Սուրբ Սարգիս Զօրավարի Փետրուար 4



Վարդանանցէն 12 օրեր առաջ եղող Շաբաթ օրը, Հայ եկեղեցին նուիրած է Ս. Սարգիս Զօրավարի յիշատակին: Ս. Սարգիս, Կապադոկիոյ Գամիրք գաւառէն էր. քաջ ու առաքինի զինուորական մը, որ զօրապետի աստիճանին հասաւ: Համարձակութեամբ կը քարոզէր Աւետարանը եւ կը կործանէր բագինները: Երբ Յուլիանոս կայսրը, որ քրիստոնէութիւնը

ուրացած էր, գահ բարձրացաւ, Սարգիս, իր Մարտիրոս որդիին հետ Հայաստան ապաստանեցաւ՝ Տիրան թագաւորի մօտ եւ ժամանակ մը հոն մնալէ ետք անցաւ Պարսկաստան, պարսից Շապուհ թագաւորին մօտ՝ ծառայելով զինուորական ասպարէզին մէջ:

Մեծ եղաւ իր որդիին՝ Մարտիրոսին ազդեցութիւնը իր հսկողութեան ներքեւ գտնուող պարսիկ զօրքին վրայ. անոնց մէջէն քրիստոնէութեան դարձողներ եղան:

Այս պարագան հետզհետէ ուշագրաւ դառնալով, Սարգիս եւ իր զաւակը արքայական հրաւեր ստացան զոհ մատուցանելու արքունի մեհեանին մէջ: Սակայն, Սարգիս նոյնիսկ քաջութիւնը ունեցաւ անարգելու կուռքերը: Առ ի հետեւանք իրենց յանդուգն կեցուածքին՝ զօրավարն ու իր որդին մահուան դատապարտուեցան:

Իր պարսիկ զինուորներէն տասնըչորս (14) անձեր որոնք մինչեւ վերջ հաւատարիմ մնացեր էին իրեն, առին Սարգիսի մարմինը եւ մաքուր զգեստներով պատեցին:

Բայց թագաւորին հրամանով իրենք եւս զլիսատուեցան ու իրենց նահատակութիւնը

եւս կը յիշատակուի Սուրբ Սարգիսի եւ անոր Մարտիրոս զաւակին յիշատակին հետ, ամէն տարի:

Գիտէի՞ր թէ

Ս. Սարգիսի տօնը Հայաստանի մէջ ընդունուած է նշել ոչ միայն եկեղեցական ծիսակատարութեամբ, այլեւ ժողովրդական սովորութիւններով:

Ս. Սարգիս Զօրավարը երիտասարդներու արագահաս բարեխօսն է եւ սիրոյ երազանքը իրականացնող սուրբը: Ըստ աւանդութեան, Ս. Սարգիս պէտք է հրեշտակներու ուղեկցութեամբ անցնի եւ տանիքին վրայ դրուած ալիւրին մէջ ձգէ իր սպիտակ ձիուն պայտին հետքը՝ որպէսզի այդ տարի իրականանայ հաւատացեալի երազանքը:

Աղօթք Սուրբ Սարգիսին

Բարձրեալէն գերագոյն պատիւ ստացար Քրիստոսի քով բարեխօսելու համար եւ դարձար մեր խնդրանքները կատարող, աղօթքները լսող, սատանաները հալածող, ով արագահաս Սուրբդ Սարգիս:

Ցաւերով լեցուն մարդկային կեանքին զօրեղ բժիշկ. արտասուքը սրբող, նեղութեան մէջ ինկածներու վիշտերը դիւրութեամբ մեղմացնող, գերիները ազատող, ով արագահաս Սուրբդ Սարգիս:

Դուն որ ամէն տեղ կը յիշուիս ու կը փառաբանուիս, որովհետեւ գեղեցիկ եւ բարի անուն ես, հաւատացեալներուն շուրթերուն համար քաղցրահամ պտուղ: Գիշեր ու ցերեկ յոյսով քեզ կը կանչենք, արագահաս Սուրբդ Սարգիս, բարեխօս եղի՛ր, Քրիստոսի քով, մեր անձերուն համար:



ՂԵՒՈՆՂԵԱՆՔ

Յովսէփ կաթողիկոս, Սահակ եւ Թաթիկ եպիսկոպոսներ, Ղեւոնդ, Մուշէ, Արշէն, Սամուէլ քահանաներ, Քաջաջ եւ Աբրահամ սարկաւազներ եւ այլ հոգեւորականներ Ղեւոնդեանք անուան տակ կը ճանչցուին:

Ղեւոնդեանց քահանայից տօնը կը տօնուի Վարդանանց տօնի նախորդող Երեքշաբթի օրը, որ նաեւ տօնն է բոլոր քահանաներուն:

Պարսից Յազկերտ Բ. թագաւորը, Վարդանանց պատերազմէն ետք, Հայաստանի մէջ ապստամբական նոր խլրտումներ կանխարգիլելու համար, կարգ մը կասկածելի նախարարներու հետ հոգեւորականներն ալ արգելափակեց:

454-ի Քուշանաց դէմ պատերազմի պարտութենէն ետք, Յազկերտ թագաւորը արգելափակուածներէն

խրաքանչիւրը տարբեր ձեւով սպաննեց: Ղեւոնդեանք հայ եկեղեցականութեան պարծանք ներշնչող սուրբերն են: Հայրենիքի եւ հաւատքի նկատմամբ նուիրումի գաղափարը Ղեւոնդեանք տուին իրենց անձնական օրինակով:

Սուրբ Թէոդորոս զօրավարը համաքրիստոնէական սուրբ է, որուն յիշատակութիւնը Հայ եկեղեցին կը տօնէ Մեծ պահքի առաջին շաբաթ օրը:

Ըստ վարքագիրներու ծնունդով Ամասիա քաղաքի Սարու գիւղէն էր, քրիստոնէայ բարեպաշտ ծնողներու զաւակ:

4-րդ դարու սկիզբէն Դիոկղետիանոսի հալածանքներու ժամանակ, ապացուցելու համար կոտորելու հնարովի և կեղծ ըլլալը, գիշերով կրակի կը մատնէ հեթանոսական Ռէա չաստուածուհիի մեհեանը: Այս արարքին համար բանտ կը նետուի և մեծագոյն չարչարանքներէն յետոյ 306թ. կը նահատակուի՝ այրուելով կրակի վրայ:

Սուրբ Թէոդորոս զօրավարը յայտնի է նաև որպէս «վիշապասպան», որ քաջութեամբ ու հաւատքով յաղթեր է հսկայ վիշապի: Օտար եկեղեցիներուն մէջ յայտնի է նաև «Դիոն» անուամբ, որ յունարէն կը նշանակէ «նորեկ» զինուոր:

Մեծ Պահքը ունի 7 Կիրակիներ, որոնք յատուկ եւ իմաստալից անուններ ունին. ահա անոնցմէ առաջին երկուքը.

Ա. Բուն Բարեկենդան

Մեծ Պահքին նախորդող Կիրակին է. բարեկենդան կը նշանակէ բարի կեանք՝ աշխարհիկ իմաստով ուրախութիւն, խրախճանք, իսկ կրօնական իմաստով՝ երանելի կեանք, ինչպէս Ադամը կ'ապրէր դրախտին մէջ արտաքսուելէն առաջ:

Բ. Արտաքսման

Ադամն ու Եւան իրենց անհնազանդութեան պատճառաւ երկար չմացին դրախտին մէջ եւ արտաքսուեցան հոնկէ: Մեզի՝ մեղաւորներուս համար Քրիստոս ապաշխարութեամբ ցոյց տուաւ փրկութեան ճամբան, եւ դրախտին արժանանալու յոյսը:

Նորահրաշ՝ Ս. Վարդանանց շարական

Հայաստանեայց եկեղեցին այս տարի Մարտ 3-ին կը տօնէ Վարդանանց պատերազմի յիշատակը: Պատերազմին պատմականն ու իրողութիւնները բոլորին ծանօթ են: Պարսիկներու Յակեբտ թագաւորին ուղղուած պատասխան-նամակին հետեւեալ եզրափակումը ազդու եւ գեղեցիկ ոճով կ'ամփոփէ կացութիւնը:

«Այս հաւատքէն մեզ ոչ ոք չի կրնար խախտել, ոչ հրեշտակները եւ ոչ մարդիկ, ոչ սուրը եւ ոչ հուրը, ոչ ջուրը եւ ոչ ալ ռեւէ այլ դառն հարուած...»:

Ազգայնակրօնական բնոյթ ունեցող այս տօնը Հայաստանեայց եկեղեցւոյ ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող տօներէն մէկն է, որուն հերոս-գորավարները, իրենց յանձն առած զոհողութիւններուն եւ անխախտ հաւատքին ու յանդգնութեան շնորհիւ սուրբերու կարգին անցած են, եւ այլ սուրբերու նման, անոնց փառքը հիւսուած է շարականներու միջոցաւ:

Սրբոցն Վարդանանցի շարականներէն ամենէն աւելի ծանօթն է «Նորահրաշ պսակաւոր»ը: Ան Սբ. Ներսէս Շնորհալիի ստեղծագործութիւններէն մէկն է, որ Վարդանանց կանոնի «Օրհնութիւն»ն է: Այլ խօսքով, Վարդանանցի տօնի առաւօտեան ժամերգութեան գլխաւոր, կեդրոնական շարականն է եւ առաջին կարգին երգուողը:

Գիտէի՞ր թէ «Նորահրաշ պսակաւոր» շարականը բաղկացած է տասը (10) տուներէ եւ ան ծայրակապն է «Ներսէսի Երգ»-ին: Այսինքն եթէ այս շարականի տասը տուներու առաջին տողերէն իւրաքանչիւրին առաջին գիրերը առնելով քով-քովի գետեղենք, կը կարդանք «Ներսէսի Երգ» խօսքը: Ահաւասիկ 10 տուներու սկիզբները:

Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ
առաքինեաց,
Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ
պատերազմին,
Բենական լուսով լցեալ արիացեալն
քաջն Արտակ,
Սրբափայլ զգեստուք պճնեալք ի յերկնաւոր
հանդիսադրէն,
Էական բարւոյն դիտմամբ ընդդէմ մեղացն
վառեցաւ,
Ստացեալ զհաւատոյ վահան յուսոյն
զրահիւք ծածկեալ,
Ի հոտ անոյշ ողջակիզեալ մատուցանէր
զինքն նուէր,
Երկոքումբք հարազատովք ընտրելագոյն
նահատակօք,
Բամկական խումբ հազարաց եւ երեսնից
թիւ ընդ վեցից,
Գոհութեամբ փառատրութիւն Երրորդութեանդ
նուագենք,....



Գիտէի՞ր թէ Աւարայրի ճակատամարտը տեղի ունեցաւ 451 թուականին: Տղմուտ գետի ափին:

Սուրբ Սահակ Պարթեւ (29.9.348 - 7.9.439)


387 թուին, 39 տարեկան հասակին Հայոց կաթողիկոս ձեռնադրուած այս հոգեւորականին անունը մեր բոլորին ծանօթ է իբր հայ գիրերու գիւտէն ետք, հայերէն լեզուի եւ Աստուածաշունչի պատուիրաններու տարածման աշխատանքին մէջ առաջնահերթ դեր խաղացած անձնաւորութիւն: Սուրբ Սահակ Պարթեւի կաթողիկոսութեան օրերուն (387 - 439) էր որ Մեսրոպ Մաշտոց եկեղեցական դարձաւ եւ լծուեցաւ հայ գիրերու ստեղծման աշխատանքին: Ս. Սահակ Պարթեւ, Հայ գիրերու գիւտէն ետք, տարիներ շարունակ զբաղած է հայրենիքի հոգեւոր կեանքի բարեկարգութեան վերաբերող հարցերով ու հիմնականապէս հայ դպրութեան ամենուրեք տարածումով:

Ս. Սահակ Պարթեւ ծնած է 348թ. Կեսարիոյ մէջ եւ ըլլալով Ս. Ներսէս Մեծի որդին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի տոհմէն է: Անոր միակ դուստրը՝ Սահականոյշ, Քաջն Վարդան մամիկոնեանի մայրն է:

Նախնական ուսումը իր ծննդավայրին մէջ ստանալէ ետք, ան մեկնած է Բիւզանդիոն (Կ.Պոլիս) որ այդ ժամանակաշրջանին բարձրագոյն ուսման կեդրոններէն մէկն էր: Հոն, Սահակ պարթեւ տիրապետած է կրօնական, եկեղեցական եւ այլ գիտութիւններու, ինչպէս նաեւ բազմաթիւ օտար լեզուներու, որոնցմէ՝ յունարէնի եւ պարսկերէնի:

Ս. Սահակ Պարթեւ կարգաւորած է Հայաստանեայց եկեղեցւոյ տօնացոյցը, գրած է բազմաթիւ հոգեւոր կանոններ (շարականներու շարքեր), եղանակաւորած է շարականներ, պատարագամատոյց եւ ծիսական աղօթքներ: Ս. Սահակ պարթեւ եւ Ս. Մեսրոպ Մաշտոց իրենց աշակերտներուն հետ ծաւալած են թարգմանչական աշխատանքները, որոնցմէ առաջինը հանդիսացած է Աստուածաշունչը: Այսպիսով Ս. Սահակ Պարթեւ նկատուած է մեր Ոսկեդարու կերտիչներէն մէկը:

Հայ եկեղեցին Ս. Սահակ Պարթեւի յիշատակը կը տօնէ տարին 2 անգամ: Յիշատակի առաջին օրը Սուրբ Սարգիսի յաջորդող Շաբաթ օրն է, իսկ երկրորդը՝ Հոգեգալստեան յաջորդող 4-րդ Կիրակի օրուան յաջորդող Հինգշաբթի օրը՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի հետ:



Շարական՝ Ս. Սահակ Պարթեւ հայրապետին

Դուն սուրբ հայրապետներուն արմատներէն մեզի գաւազան բխեցուցիր սուրբ Սահակ հայրապետը քու հօտդ հովուելու ո՞վ Քրիստոս:

Դուն հայերուս անգիտութեան խաւարը ջնջեցիր ասով իմաստութեան լոյսը ծագեցնելով Թորգոմի որդիներուն:

Դուն քու յառաջիկայ խորհուրդը տեսիլքով յայտնեցիր սուրբին, անոր յիշատակին՝ ընդունէ տօնողներուս աղաչանքը:

Օճեալին տրուած անունները

Ղուկաս 2:22-38

Օգտագործելով ծածկագիրը, գրէ Յովհաննէսի Աւետարանէն 1:29-41

Օճեալին տրուած հինգ տարբեր անունները:

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ժ	ի	լ	խ
ֆ	օ	ք	փ	ւ	ց	ր	տ	վ	ս	ն	շ	պ

ծ	կ	հ	ձ	ղ	ճ	մ	յ	ն	շ	ն	չ	պ
շ	ն	շ	ն	յ	մ	ճ	ղ	ձ	հ	կ	ծ	խ

շ	ն	ս	վ	տ	ր	ց	ւ	փ	ք	օ	ֆ
լ	ի	ժ	թ	ս	է	զ	ե	դ	գ	բ	ա

ա = ֆ բ = օ

-----○-----
 ֆ ժ ը կ ե չ կ դ ք ֆ ի ձ կ ե ն տ

-----○-----
 ի ֆ օ օ ն ճ լ ժ ն ֆ

-----○-----
 ֆ ժ ը կ ե չ կ դ կ ե փ ն ձ

-----○-----
 գ ե ն ժ ը կ ժ



Շրջանակներուն մէջի գիրերով կազմէ անունը՝ - - - - -

Հաւատք

Ղուկաս 17:5-10

Ծածկագիրը օգտագործէ եւ տես թէ ինչ խնդրեցին աշակերտները Յիսուսէն:

2 = ա	5 = լ	7 = մ	8 = ռ
11 = ց	3 = է	10 = ր	6 = հ
9 = տ	12 = լ	13 = ք	4 = ը

Առաքեալները ըսին Տիրոջ

— — — — —
48-46 24-12 18/6 100/20 33-22 2+6 8+4 40-30

— — —
99-92 3x1 50/5

— — — — —
120/20 2+0 8+4 24/12 3x3 39-26 88-84

Ղուկաս 17:5

Ձայնաւոր գիրերը դնելով ամբողջացուր Տիրոջ խօսքը:

ա է է ը ի ո ու եւ իւ

Տէրը ըսաւ՝

- թ - մ - ն - ն - իս - հ - տ - կ - մ - չ - փ հ - լ - տ ք

- ն - ն - ք - - u - ք - յ u թ թ - ն - - ն « - ր մ - տ - իս - լ - ղ - ր

- ծ - վ - ն մ - ջ տ ն կ - -» պ - տ - հ ն - գ - ն ղ ձ - գ - :

Ղուկաս 17:6



Յիսուս Աստուծոյ Գառնուկը Յովհաննէս 1:29


Օգտագործելով ծածկագիրը գրէ Յովհաննէսի խօսքը իր աւետարանի 1:29 գլուխէն:

	1	2	3	4	5
Ա	ի	ս	Ա	ւ	ծ
Բ	կ	հ	տ	ն	յ
Գ	գ	ռ	ն	ը	ր
Դ	շ	մ	ղ	վ	է
Ե	ե	խ	ք	ց	ա

Ծածկագիրը

Ա1 = ի

Բ2 = հ



Կիրակնօրեան եւ Մեծ Պահքը

Մարտ 19-ին Կիրակնօրեայ Դպրոցը կը տօնէ Վարդանանք եւ Բուն բարեկենդան, երբ աշակերտները կը ծպտուին հայկական տարազներով: Այս տարուան պահքի առաջարկուած ծովապահութիւնը հետեւեալն է:

Փետրուար 20-26	Ծամոն
Փետրուար 27-Մարտ 4	Շաքար
Մարտ 5-11	Կազային խմիչքներ
Մարտ 12- 18	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Մարտ 19 - 25	Կոլոնիատ, տուրմ
Մարտ 26 - Ապրիլ 1	Chips
Ապրիլ 2-7	Հաւկիթ

Այս տարուան պահքի ընթացքին սորվելիքները հետեւեալներն են:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ եւ ՆԱԽԱԿԹԱՐԱՆ Ա. Բ Գոց սորվիլ Խաչակնքել, Տերունական Աղօթքը եւ «Հաւատով խոստովանիմ»էն 3 համարներ:

ՆԱԽԱԿԹԱՐԱՆ Գ. Դ. Ե. եւ Զ. Գոց սորվիլ «Հաւատով խոստովանիմ»ի առաջին 18 համարները:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ Գոց սորվիլ Ա. Կորնթացիս 13-րդ գլուխը, Նոր Կտակարանի Գիրքերու շարքը, եւ «Հաւատով խոստովանիմ»ը

Այս Մեծ Պահքի ընթացքին յիշենք նաեւ կարօտեալները եւ մեր ունեցածէն անոնց ալ բաժին հանենք:

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

գ	ե	է	դ	թ	ա	զ	ը	բ
բ	զ	ա	զ	ը	է	ե	դ	թ
ը	թ	դ	բ	զ	ե	ա	զ	է
ա	դ	ը	զ	է	զ	բ	թ	ե
զ	բ	ե	ը	ա	թ	զ	է	դ
թ	է	զ	ե	դ	բ	ը	զ	ա
է	ը	զ	ա	ե	դ	թ	բ	զ
ե	զ	թ	է	բ	ը	դ	ա	զ
դ	ա	բ	թ	զ	զ	է	ե	ը


	ե	զ		է		թ	բ	
զ			ա		զ			է
		ա		բ		զ		
	բ	ը	զ		թ	ա	զ	
զ			է		զ			բ
	է	զ	ը		բ	դ	զ	
		դ		զ		է		
թ			բ		ա			դ
	զ	է		ը		բ	թ	

Նախորդ «Եզակի գիրեր»ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր, իւրաքանչիւր

- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Յիսուսի տաճար
ընծայումը
«Տեառնընդառաջ
Փետրուար 14»

Ամբողջացո՛ւր
ըստ Ղուկաս 2.22-
32-ի

Տիրոջ, նուիրուի,
տատրակ, աղանիի,
Միմոն, Սուրբ Հոգին,
Օծեալը, Յիսուսը,
գոհաբանեց

Յովսէփն ու Մարիամը մանուկը Երուսաղէմ տարին -----
ընծայելու համար որովհետեւ Տիրոջ Օրէնքին մէջ գրուած է. «Տիրոջ պէտք
է ----- ամէն արու զաւակ, որ մօր առաջին զաւակն է». ինչպէս
նաեւ Տիրոջ Օրէնքին համաձայն գոհ մատուցանելու զոյգ մը -----
կամ ----- երկու ձագ:

Այդ ժամանակ Երուսաղէմի մէջ ----- անունով մարդ մը կ'ապրէր:
Միմոն արդար եւ աստուածավախ մարդ մըն էր, ----- իրեն
հետ էր եւ վստահեցուցած էր զինք՝ թէ Տիրոջ ----- չտեսած պիտի
չմեռնէր: Արդ, Սուրբ Հոգիէն առաջնորդուած՝ անիկա տաճար գնաց: Երբ
ծնողքը մանուկ ----- տաճար բերին, որպէսզի կատարեն այն
ինչ որ Օրէնքը կը պահանջէր մանուկին համար, Միմոն իր գիրկը առաւ
փոքրիկը եւ ----- զԱստուած:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Փետրուար 13-ին.

- ա. Ս. Ղեւոնդեանց քահանայիցն
- բ. Ս. Աբգար թագաւորին
- գ. Ս. Վահան Գողթնացիին
- դ. Սուրբ Սարգիսին

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Վարդանանցը.

- ա. Փետրուար 6
- բ. Փետրուար 16
- գ. Մարտ 3
- դ. Փետրուար 24

3.- Այս տարի ե՞րբ է Բուն
Բարեկենդանը.

- ա. Մարտ 6
- բ. Փետրուար 14
- գ. Փետրուար 16
- դ. Փետրուար 19

4.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ
Աւարայրի ճակատամարտը.

- ա. 1666
- բ. 405
- գ. 301
- դ. 451

5.- Ո՞ր թուականին
նահատակուեցաւ Ղեւոնդ Երեցը.

- ա. 1666
- բ. 405
- գ. 454
- դ. 451

6.- Վարդան Մամիկոնեանը
ո՞ր ճակատամարտին
նահատակուեցաւ.

- ա. Աւարայր
- բ. Սարդարապատ
- գ. Նուարսակ
- դ. Մանազկերտ

7.- Յիսուս քանի՞ օրուայ էր երբ
առաջին անգամ Տաճար բերուեցաւ.

- ա. 10
- բ. 20
- գ. 30
- դ. 40

8.- Բուն Բարեկենդանին յաջորդ օրը
ի՞նչ կը սկսի.

Մեծ ----

9.- Վարդանանցը շաբթուան ո՞ր օրը
կ'ըլլայ.

- ա. Երկուշաբթի
- բ. Երեքշաբթի
- գ. Չորեքշաբթի
- դ. Հինգշաբթի

10.- Հետեւեալներէն ո՞ր մէկը ճիշդ է:

- ա. Սպիտակ Վարդան
- բ. Ճերմակ Վարդան
- գ. Կարմիր Վարդան
- դ. Կանաչ Վարդան

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ս. Ղեւոնդեանց քահանայիցն
տօնը այս տարի ե՞րբ կը տօնենք.

ա. Մարտ 3

բ. Փետրուար 13

գ. Մարտ 1

դ. Փետրուար 24

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Վարդանանցը.

ա. Փետրուար 6

բ. Փետրուար 16

գ. Մարտ 3

դ. Փետրուար 24

3.- Ի՞նչ կը կոչուի Վարդանանցի
յաջորդող Կիրակին.

4.- Թուէ՛ Մեծ պահքի առաջին երկու
(2) Կիրակիները.

ա. Բ--- Բ-----

բ. Ա-----

5.- Ի՞նչ է Սուրբ Սահակ Պարթեւի
եւ Սուրբ Վարդան Մամիկոնեանի
ազգականական կապը.

ա. Ս. Սահակ Պարթեւ Ս. Վարդանին
մեծ հայրն է:

բ. Ս. Սահակ Պարթեւ Ս. Վարդանին
հօրեղբայրն է:

գ. Ս. Սահակ Պարթեւ Ս. Վարդանին
թոռն է:

դ. Ս. Սահակ Պարթեւ Ս. Վարդանին
զաւակն է:

6.- Մեծ պահքի առաջին շաբաթ օրը
ո՞ր սուրբին տօնը կը տօնենք.

ա. Վարդան Մամիկոնեան

բ. Ս. Թէոդորոս Զօրավար

գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի

դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

7.- Ո՞վ գրած է Վարդանանցի
նուիրուած «Նորահրաշ ...»
շարականը.

Ս. -----

8.- Ո՞վ գրած է «Հաւատով
խոստովանիմ...»ը.

Ս. -----

9.- Հին Կտակարանի ո՞ր մարգարէին
տօնը այս տարի Փետրուար 3-ին կը
տօնենք.

ա. Յովսէփ

բ. Եսայիի

գ. Երեմիայի

դ. Եզեկիէլի

10.- Ո՞վ էր ան ծերունին որ
Տեառնընդառաջին գրկեց Յիսուսը.

Ս-----

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

1.- Թուէ՛ Ս. Ղեւոնդեանց քահանայիցն տօնին մէջ ընդգրկուող Կաթողիկոսին եւ երկու եպիսկոպոսներուն անունները:

ա. ----- կաթողիկոս
բ. ----- եպիսկոպոս
գ. ----- եպիսկոպոս

2.- Ամբողջացո՛ւր Ս. Վարդան Մամիկոնեանին խօսքը.

Քանզի Հայր մեր գՍուրբ
----- գիտեմք եւ Մայր
գ----- Եկեղեցի
Կաթողիկէ:

3.- Թուէ՛ Նուարսակի դաշնագրին հայոց երեք (3) հիմնական պայմանները:

ա. Հայաստանի -----
բ. -----
ագատութիւն
գ. ----- վերացում

4.- Թուէ՛ Մեծ պահքի եօթը (7) կիրակիները:

ա. Բ--- Բ-----
բ. Ա-----
գ. Ա-----
դ. Տ-----
ե. Դ-----
զ. Գ-----
է. Ծ-----

5.- Ամբողջացո՛ւր. Բ. Տիեզերական Ժողովը տեղի ունեցաւ

----- մէջ, --- թուականին եւ որուն մասնակցեցան ---
Հայրապետներ եւ որուն տօնը այս տարի կը տօնենք Փետրուար --ին:

6.- Ս. Ղեւոնդեանցը ընդհանրապէս կը տօնենք Վարդանանցին նախորդող Երեքշաբթի օրը: Ինչո՞ւ այս տարի Երկուշաբթի օրը կը տօնենք:

7.- Ամբողջացո՛ւր. Ապաշխարութեան խորհուրդը կրնայ կրկնուիլ որովհետեւ մարդ արարածը ----- է:

8.- Հայ Եկեղեցին Ս. Սահակ Պարթեւի յիշատակը տարին երկու անգամ կը նշէ. ա. Ս. Սարգիսի յաջորդող Կիրակին եւ
բ.-----

9.- Ամբողջացո՛ւր. Այս տարի Ապրիլ --ին Ծաղկազարդ է:

10.- Անցեալ տարի Սուրբ Զատիկը Ապրիլ 24-ին է: Ամենէն ուշ, Ապրիլի ո՞ր օրը կարելի է որ Սուրբ Զատիկ ըլլայ:
ա. Ապրիլ 24
բ. Ապրիլ 25
գ. Ապրիլ 26
զ. Ապրիլ 27

Ամեն օր Վարդանանց է

Սփիւռքի տարածքին ապրող բոլոր հայերուն համար ամեն օր Վարդանանց պէտք է ըլլայ, եթէ հայապահպանումի պատերազմին մէջ մեր դիմագրաւած դժուարութիւններուն յաղթելու յոյսը վառ կ'ուզենք պահել:

Իւրաքանչիւր օրուան ծագող արեւուն հետ «Ճերմակ ջարդ»-ի սուրն է որ կը ճօճէ, քիչ մը եւս օտարացնելով բոլոր անոնք որոնք օրէ օր կը նուազեցնեն իրենց դիմադրականութիւնը եւ կը նօսրացնեն իրենց հայկականութիւնը, համակերպելու համար օտարութեան պայմաններուն:

Թշնամիին միջոցներն ու կարողութիւնները մեր ունեցած միջոցներուն ու կարողութիւններուն բազմապատիկն են: Մեր շարքերուն մէջ «Վասակեան» ըմբռնումի հաւատացողներուն թիւը տարուէ տարի կ'աճի: Այս բոլորին մէջ սակայն, մեր ռազմավարութիւնը պէտք է փայլ վարդանանց շունչով սերմանուած, որպէսզի այս մաշումի պատերազմը մենք հասցնենք Վահանեանց յաղթական եզրակափումին: Ահաւասիկ այս ռազմավարութեան հիմնաքարերը:

1. ՉԶԻՋԻԼ

Նկարագրի տէր անձ մը պէտք է գիտնայ թէ ե՞րբ պէտք է հաստատ կենայ իր կեցուածքին վրայ ու որոշէ ամէն գնով իր սկզբունքը եւ գաղափարը պաշտպանել: Ահա այդ ըրաւ Վարդան Մամիկոնեան ու մերժեց զիջիլ Քրիստոնէութենէն ըսելով «այս հաւատքէն մեզ ոչ ոք պիտի շեղէ»:

2. ՄԵՐԺԵԼ

Երբեմն մեզի պէս մտածող անձերուն թիւը քիչ կ'ըլլայ, իսկ հակառակորդներուն պէս մտածողներունը շատ: Բայց թիւով մեծ խումբը կրնայ նոյնքան զօրաւոր չըլլայ, որովհետեւ նոյնքան համոզում կրնայ չունենալ եւ նոյնքան բուռն ձեռով կրնայ չհաւատալ իր գաղափարին: Ահա այսպէս է որ թէեւ հայ քրիստոնէաները թիւով նուազ էին պարսիկներէն, բայց իրենց հաւատքին մէջ աւելի զօրաւոր ըլլալով, մերժեցին ընդունիլ Յակեթի առաջարկը:

3. ՀԱՄԲԵՐԵԼ

Վարդանի եւ իր 1036 ընկերներու նահատակումով սկսած պատերազմը աւարտեցաւ 33 տարիներ ետք իր եղբորորդի Վահան մամիկոնեանի յաղթանակով եւ 484 թուականի Նուարսակի մէջ ստորագրուած դաշնագրով: Այս դաշնագրով պարսիկները կ'ընդունէին Հայոց պայմանները:

ա. Հայաստանի ինքնավարութիւն

բ. Քրիստոնէական պաշտամունքի ազատութիւն

գ. Ատրուշաններու վերացում:

Ահա այսօր, վարդանանցէն 1,561 տարիներ ետք, մենք որքա՞ն հաւատարիմ ենք քաջ Վարդանին եւ մենք ալ մեր կարգին

1. Հաստատ կը փանք մեր Քրիստոնէական սկզբունքներուն վրայ

2. Հակառակ անոր որ մեր շուրջը շատ աւելի է թիւը անոնց որոնց հաւատամքը խոտոր է մեր Հայ Քրիստոնէայ սկզբունքներուն ու աւանդութիւններուն, եւ

3. Մենք այս բոլորին կը դիմադրենք համբերութեամբ եւ Քաջ Վարդանին պէս կ'ըսենք՝ Քանզի Հայր Մեր զՍուրբ Աւետարանն Գիտեմք եւ Մայր զԱռաքելական Եկեղեցի Կաթողիկէ:

Գիտէի՞ր թէ Աւարայրի ճակատամարտով սկսած Վարդանանց պատերազմը 33 տարիներ տեւեց եւ վերջացաւ Վարդանի եղբորորդի Վահան Մամիկոնեանի յաղթանակով եւ Նուարսակի դաշնագրի ստորագրումովը 484 թուականին:

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (12-րդ տարի)

Այս թիւով.....

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը
խորհուրդները. Ս. Հաղորդութիւն Էջ 2
Մարտ բացատրական տօնացոյց Էջ 3-7

Մեծ Պահքի Կիրակիները
Քառասուն Մանկունք
Միջինք
Ս. Յովհաննէս Օձնեցի
Ս. Յովհաննէս Որոտնեցի
Ս. Գրիգոր Տաթևացի
Տաթևի Վանք, Ճոպանուղի
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Խոր
Վիրապ մուտքը
Փակեալ խորան

Յիսուս եւ Սամարացի Կինը Էջ 8

Աստուծոյ սէրը մարդոց հանդէպ Էջ 9

Բ ե թ հ ե գ դ ա յ ի ա ն դ ա մ ա լ ո յ ծ ի ն
բժշկութիւնը Էջ 10

Կիրակնօրեան եւ Մեծ Պահքը Էջ 11

Եզակի գիրքը Էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 12-15

Մեծ պահքը երբեակ իմաստով Էջ 16

Մարտ 2012 (ԺԹ տարի թիւ 7)



Պ...Պահք

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարը

«Երբ ծով կը պահէք, տրտումներս մի՛ ըլլաք կեղծաւորներուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծով կը պահեն: Վատահ եղէք, միայն ատիկա է՝ անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, երբ դուն ծով կը պահես, օժէ՛ գլուխդ եւ լուս՝ երեսդ, որպէսզի մարդիկ չտեսնեն թէ ծով կը պահես, այլ՝ միայն Հայրը, որ անտեսանելի է. եւ Հայրդ, որ կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս»:

Մատթէոս 6.16-18

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ Եօթը Խորհուրդները (շար. 5)

Նոյեմբեր 2011-ի թիւէն սկսեալ յաջորդական թիւերով կը ներկայացնենք մեր եկեղեցւոյ խորհուրդներէն իւրաքանչիւրը:

Հաղորդութիւն կը նշանակէ՝ հաղորդակցութիւն, մասնակցութիւն, միացում: Մ. Հաղորդութիւնը Ս. Պատարագի արարողութեան ընթացքին սրբազործուած հացն ու գինին են, որոնք Ս. Հոգւոյն զօրութեամբ կը գոյափոխուին Յիսուս Քրիստոսի մարմինն եւ արեան: Սրբազործուած հացին եւ գինին ճաշակումով հաւատացեալները կը հաղորդուին, կը յարաբերին ու կը միանան իրենց Փրկիչին հետ, որովհետեւ Յիսուս Քրիստոսը ընդունած կ'ըլլան իրենց ներսիդին:

Գիտէի՞ր թէ ... Սուրբ հաղորդութեան զգալի նշաններն են *բաղարջ (անխմոր)* հացն ու *անապակ* գինին որոնք քահանային աղօթքով կը փոխարկուին Քրիստոսի մարմնին եւ արեան, առանց փոխելու իրենց նիւթական գոյացութիւնը, այսինքն հաճախ աւել:

- Հաղորդութիւնը խորհուրդ է որովհետեւ Ս. Պատարագի ընթացքին կատարուող գոյափոխութիւնը եւ հաղորդուող հաւատացեալին Քրիստոսի հետ միացումը մեր մարմնական աչքերով չենք կրնանք տեսնել, այլ կ'ըմբռնենք հաւատքով ու հոգիի աչքերով միայն:
- Յիսուս Քրիստոս հաստատեց Ս. հաղորդութեան խորհուրդը վերջին ընթրիքին ընթացքին

Յիսուս ըսաւ «Առէք, կերէք, *այս է իմ մարմինս*, որ կը բաշխուի ձեր եւ շատերու համար, որպէս մեղքերու քաւութիւն եւ թողութիւն»:

Յիսուս ըսաւ «Բոլորդ խմեցէք ասկէ, *այս է իմ նոր ուխտի արիւնս* որ կը թափուի ձեր եւ շատերու համար որպէս քաւութիւն եւ թողութիւն մեղքերու»:

Հաղորդուիլը պայման է յաւիտենական կեանքը ժառանգելու համար, որովհետեւ Յիսուս ըսաւ, «Եթէ Որդւոյ Մարդոյ մարմինը չուտէք եւ անոր արիւնը չխմէք՝ ձեր անձերուն մէջ կեանք չէք ունենար»:

Պատարագ կը նշանակէ՝ զոհ, նուէր, ընծայ: Հին Ուխտի շրջանին, պատարագ կը մատուցուէր կենդանիներու արիւնը զոհասեղանին վրայ թափելէ ետք այրելով Աստուծոյ կը նուիրէին իրենց մեղքերուն քաւութեան համար: Հին Ուխտի պատարագներու ընթացքին թափուող արիւնը ստուերն էին Նոր Ուխտի միջնորդ Քրիստոսի արեան հեղումին: Սուրբ Հաղորդութեան խորհուրդի արարողութիւնը պատարագ կը կոչուի որովհետեւ օրհնուած հացն ու գինին իբրեւ Քրիստոսի մարմինն ու արիւնը հաւատացեալներուն կողմէ պատարագիչ քահանային ձեռամբ՝ կ'ընծայուին Հօր Աստուծոյ իրենց մեղքերուն քաւութեան համար:

Քահանայական պաշտօն ունեցող եկեղեցականները միայն կրնան Ս. Պատարագ մատուցանել: Սուրբ պատարագը մեծ հանդիսութեամբ կը մատուցուի հայ եկեղեցւոյ մէջ: Սաղմոսներ, աղօթքներ, հոգեզմայլ երգեր, ջահավառութիւն, խնկարկութիւն, պատշաճ ու վայելուչ զգեստաւորում մաս կը կազմեն Ս. պատարագի արարողութեան: Սարկաւազը սպասաւորն է սուրբ պատարագի սեղանին: Դպիրներուն պաշտօնն է՝ սուրբ պատարագի երգեցողութիւնը կատարել: Ժողովուրդին պարտականութիւնն է՝ ուշադրութեամբ հետեւիլ արարողութեան, մեղմօրէն ձայնակցիլ դպիրներու երգեցողութեան, աղօթել Աստուծոյ, իսկ սուրբ հաղորդութեան մօտենալ հաւատքով եւ երկիւղածութեամբ:

Մարտ ամսուան բացատրական տօնացոյց

Կիր. 4	Մեծ Պահքի Գ. Կիրակի՝ ԱՆԱՌԱԿԻՆ
Շբթ. 10	Ս. Յովհաննէս Երուսաղէմցի, Ս. Յովհաննէս Օձնեցի, Ս. Յովհաննէս Որոտնեցի, Ս. Գրիգոր Տաթևացի
Կիր. 11	Մեծ Պահքի Դ. Կիրակի՝ ՏՆՏԵՍԻՆ
ԴՉ. 14	ՄԻՋԻՆՔ
Շբթ. 17	Սուրբ Քառասուն Մանկունք
Կիր. 18	Մեծ Պահքի Ե. Կիրակի՝ ԴԱՏԱԻՈՐԻՆ
Շբթ. 24	Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ (Մուտն ի Վիրապ)
Կիր. 25	Մեծ Պահքի Չ. Կիրակի՝ ԳԱԼՍՏԵԱՆ
Շբթ. 31	Ղազարոսի Յարութիւն

Մեծ Պահքը ունի **7 Կիրակիներ**, որոնք յատուկ եւ իմաստալից անուններ ունին. անոնց առաջին երկուքը տեսանք անցեալ թիւով՝ ահա անոնցմէ յաջորդ չորսը.

Գ. Անառակին

Այս Կիրակին կը կրէ տուեալ օրուան ճաշու աւետարանի հատուածին անունը: Մեծ Պահքի ընթացքին մեր ուղեւորութիւնը կը նմանի Անառակ Որդիին ապաշխարութեան յաջորդող դէպի իր հօր տունը վերադարձին:

Դ. Տնտեսին

Անառակի Կիրակիին կը յաջորդէ Տնտեսի Կիրակին որ իր անունը կը ստանայ դարձեալ Յիսուսի խօսած առակներէն մէկէն: Այս առակը կը կարդանք Ղուկասի Աւետարանին 16.1-13 ին մէջ: Միջինքը տեղի կ'ունենայ այս Կիրակիին յաջորդող Չորեքշաբթին:

Դ. Դատաւորին

Դարձեալ Յիսուսի առակներէն մէկէն կը ստանայ իր անունը, որ դատաւորի մը եւ յարատեւող այրիի մը առակն է, զոր կրնանք կարդալ Ղուկաս 18.1-8 ի մէջ:

Դ. Գալստեան

Այս կիրակի օրուան առակը Քրիստոսի աշխարհ գալուն խորհուրդը կը բացատրէ: Այդ օրուան աւետարանական ընթերցումին վերջին համարը՝ Մատթէոս 23.39 Քրիստոսի Գալստեան կ'ակնարկէ:



Սվազի Ասեղնագործ

Մեբաստիոյ մէջ նահատակուած 40 զինուորներ (քառասուն մանկունք)

4-րդ դարու սկիզբը նահատակուած Քրիստոսի 40 վկաները Փոքր Հայքի տարբեր քաղաքներէն էին եւ Մեբաստիոյ կայսերական գունդին զինուորական ծառայութեան մէջ էին: Երբ Լիկիանոս կայսեր հրամանով Կեսարիայի դուքս Լիւսիասը հարցաքննութիւն կը կազմակերպէ բանակին մէջի քրիստոնէայ զինուորներ յայտնաբերելու նպատակով, անոնցմէ 40-ը, հաւատարիմ իրենց հաւատքին, անվեհեր պատասխաններով դատաւորներուն զայրոյթ կը պատճառեն եւ կը բանտարկուին: Չմեռնային ցուրտ գիշեր մը զիրենք կը նետեն Մեբաստիոյ մօտակայ լիճը: 40-էն միայն մէկը չի կրնար տանջանքներուն դիմանալ: Դուրս ելլելով սառած ջուրէն, ան կը փորձէ փրկութիւն գտնել լճափին կառուցուած տան մէջ, սակայն այդպէս կնքելով մահկանացուն, կը զրկուի թէ՛ երկրային և թէ՛ երկնային կեանքէն: Լուսադեմին միւս բոլոր նահատակները կ'երեւին լոյսէ պսակներով զարդարուած:

Պահապան զինուորներէն մէկը, տեսնելով այդ, կը լեցուի Քրիստոսի հաւատքով և նետուելով լիճը, պսակակից կը դառնայ անոնց: Աստուածային հրաշքով ձմեռնային սառնամանիքը դիմակալած վկաները առաւօտեան կը նահատակուին: Անոնց նշխարները կ'ամփոփուին Մեբաստիոյ մէջ, ուր հետագային կը կառուցուի «Քառասուն մանկունք» 40 զմբեթանի տաճարը, որ կանգուն մնացեր է մինչեւ Լենկթիմուրի արշաւանքը:

40 մանկանց (զինուորներու) պատմութիւնը կը յորդորէ կեանքի բոլոր դժուարութիւններուն մէջ հաւատարիմ մնալ Քրիստոսի հաւատքին, յաղթահարել դիւրահաճ գայթակղութիւնները՝ երկնային պսակին արժանանալու համար: Այս տարի անոնց յիշատակը կը տօնենք Մարտ 17-ին:

Միջինք

Մուրբ 40 մանկանց տօնին նախորդող Չորեքշաբթի օրը Միջինք է, որովհետեւ կը հանդիպի Մեծ Պահքի կէսին: Այս օրը երկարատեւ պահքի շրջանին կէսը նուաճած ըլլալու աւետու՜մ է ու խնդութեան առիթ կը նկատուի: Սեղանները կը սարքուին պահքի յատուկ ուտելիքներով:

Հին աւանդութիւն էր որ Միջինքի օրը տուններէն ներս պատրաստուէր բաղարջ կոչուած հաց մը որուն մէջ կը պահուէր մանր երկաթեայ դրամ մը: Երբ տեղի կ'ունենար ընտանեկան հաւաքոյթ, հացը մաս առ մաս կը բաժնուէր եւ բոլորին ուշադրութիւնը կը կեդրոնանար գտնելու համար տարուան այն բախտաւոր անձը որուն հացի բաժնին մէջէն պիտի ելլէր երկաթեայ դրամը:

Հայաստանեայց եկեղեցին Մեծ Պահքի 4-րդ Կիրակին, Տնտեսի Կիրակին, նախորդող շաբաթ օրը կը յիշատակէ Յովհաննէս Երուսաղէմացիի եւ երեք կրօնա-ազգային դէմքերու տօնը: Ահա անոնցմէ իւրաքանչիւրին մասին հակիրճ կենսագրական մը:

Ս. Յովհաննէս Օձնեցի

Հայոց կաթողիկոս 717-728 թուականներուն եւ ծանօթ շարականագիր: Իր հեռատես եւ խելացի կարողութիւններով, յաջողած է արաբական խալիֆայութեան տիրապետութեան ժամանակ ամրապնդել հայ եկեղեցւոյ դիրքը եւ զերծ պահել զայն զանազան տուրքերէ եւ հարկերէ: 718-ին կազմակերպած է եպիսկոպոսական ժողով, Դուինի մէջ, ուր մշակուած են եկեղեցական 37 օրէնքներ: Ան նշանաւոր է նաեւ աղանդներու դէմ իր մղած պայքարով:

Հռչակաւոր է իր փիլիսոփայական գիտելիքներով, որոնց շնորհիւ փորձած է ամրապնդել հայ եկեղեցին:

Ս. Յովհաննէս Որոտնեցի

Ծնած է Սիւնեաց Ծղուկ գաւառի Վաղադն գիւղին մէջ, 1315-ին: Աշակերտած է Գլաձորի համալսարանին մէջ Տիրատուր վարդապետին, որու մահէն ետք փոխադրուած է Որոտանի վանքը, հոն ստանալով Որոտնեցի մականունը: Ան ծանօթ է իբր մեծ աստուածաբան, իմաստասէր, մատենագիր եւ ուսուցչապետ: Հիմնած է Տաթևի համալսարանը եւ Ապրակունիսի բարձրորակ վանական դպրոցը, որոնք դարձած են աստուածաբանական եւ փիլիսոփայական կարեւորագոյն կեդրոններ: Պայքար մղած է հայաստանեայց եկեղեցւոյ լատինացման շարժումին դէմ:

Ան իր ժառանգ թողած աշխատութիւններուն մէջ արծարծած է հայ եկեղեցւոյ արարչութեան, եկեղեցաբանութեան, հրեշտակաբանութեան խնդիրներ եւ մանաւանդ մարդկային հոգիի մասին խորհրդածութիւններ:

Ս. Գրիգոր Տաթևացի

Յովհաննէս Որոտնեցիի նշանաւոր աշակերտներէն, աստուածաբան, փիլիսոփայ եւ մանկավարժ: Իր ժամանակակիցներուն կողմէ անուանուած է «Եռամեծ վարդապետ», «վարժապետ հայոցն»: Իր կարեւորագոյն գործերէն է «Գիրք հարցմանց»-ը որ աստուածաբանութեան գործնական գիրք մըն է: Ունի նաեւ քարոզներու հաւաքածոյ հատոր մը:

Սուրբ Գրիգոր Տաթևացի ծնած է 1346-ին Վայոց Ձոր: Ան Յովհաննէս Որոտնեցիի հռչակաւոր աշակերտներէն մէկը ըլլալով՝ անոր պէս վարպետ էր լատիններէն լեզուի եւ յունական իմաստասիրութեան մէջ:

Թէեւ Գրիգոր Տաթևացի իր կեանքի մեծ բաժինը անցուցած է Տաթևի վանքէն ներս, ան այցելած է նաեւ բազմաթիւ այլ վանքեր որոնցմէ իւրաքանչիւրէն ներս արժանացած է իր աշակերտներուն յարգանքին, համարումին եւ հիացումին: Իր հանճարին շնորհիւ յաջողած է իր այցելած իւրաքանչիւր վանքէ ներս բազմացնել աշակերտներու ու հետեւորդներու թիւը:

Հաւատքի մեծ պաշտպան, մտաւորական ու հոգեւոր առաջնորդ Գրիգոր Տաթևացի հայ ժողովուրդին կողմէ կոչուած է յաճախ «երկրորդ Գրիգոր Լուսաւորիչ»:



Տաթևի Վանք

Հայաստանի հանրապետության հարավային ծայրը կը գտնուի Մինիքի մարզը որմէ ներս կառուցուած է մարզի պատմաճարտարապետական ամենէն նշանաւոր շինութիւնը՝ Տաթևի վանքը:

Կ'ըսուի թէ ՏԱԹԵԻ բառը «Տա Թեւ» է «Թող Աստուած թեւ տա ձեզի» իմաստով, որ այդ օրերու հաւատացեալ ժողովուրդին աղօթքն էր շինողներուն, որոնք՝ այդ դժուարին օրերուն եւ դժուարին տեղ վանք կ'ուզէին կառուցել:

Տաթևի վանքը հիմնուած է 9-րդ դարուն եւ անոր ամենէն հին շինութիւնը

եղած է 895 թուականին կառուցուած Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցին: Եկեղեցւոյ պատերը ծածկուած եղած են հարուստ որմասնկարներով որոնցմէ այժմ քիչ քան պահպանուած է: Սուրբ Պօղոս-Պետրոս եկեղեցիէն դէպի հարաւ կառուցուած է Սուրբ Գրիգոր Եկեղեցին 1295-ին որուն ենթադրեալ ճարտարապետն է Մովսիկը:

Կը պատմուի թէ Տաթևի վանք այցելողները իրենց ուշադրութիւնը կը դարձնեն վանքի բակէն ներս, 10-րդ դարու սկիզբէն մեզի հասած հետաքրքրական յուշարձանի մը վրայ որ կը կոչուի «ճօճուող յուշասիւն» կամ «գաւազան»: Այս յուշասիւնը վանքի միակ կառոյցն է որ իր 8 մետր հասակով հանդերձ անխաթար մնացած է շրջանի բազմաթիւ երկրաշարժներէն:

14-րդ եւ 15-րդ դարերուն, Տաթևի վանքը հայկական մշակոյթի եւ լուսաւորութեան ճանչցուած կեդրոններէն մէկը եղած է ուր գործած են Տաթևի համալսարանը, մատենադարանը եւ մանրանկարչութեան դպրոցը: Տաթևի համալսարանէն ներս աշխատած են յայտնի գիտնականներ եւ աստուածաբաններ՝ ինչպէս Յովհաննէս Որոտնեցի եւ Գրիգոր Տաթևացի:

Տաթևի Ճոպանուղի Հոկտեմբեր 2010-ին Աշխարհի երկարագոյն ճոպանուղին, 5.7 քմ երկարութեամբ, միացուց Տաթևի վանքը Հալիձոր գիւղին: Ճոպանուղին կը շարժի ժամական 37 քմ արագութեամբ եւ 11 վայրկեանէն Հալիձորէն Տաթևի վանք կը հասնի:



Ճոպանուղիէն վար
դիտուած

Ճոպանուղին



Սուրբ Գրիգոր Լուսավորիչի Խոր Վիրապ մուտքը



Սուրբ Գրիգոր հայաստանեայց եկեղեցւոյ առաջին պաշտօնական հայրապետը կը նկատուի որ Ոսկեդարու գրողներէն Ագաթանգեղոսի կողմէ նկարագրուած է իբր Բրիստոնէութիւնը հայ ժողովուրդին մօտ հաստատող եւ տարածող հիմնական դէմք: Անոր կրօնական աշխատանքը այնքան ազդեցիկ եւ որոշիչ եղած է որ ան նկատուած է հայ ժողովուրդի «Հայր եւ Լուսավորիչ»:

Հայաստանեայց եկեղեցին տարին քանի մը անգամ կը յիշատակէ Սուրբ Գրիգորի անունը, հիմնուելով անոր կեանքի յատկանշական հանգրուաններուն վրայ: Այսպէս՝ Խոր Վիրապ մտնելը, Խոր Վիրապէն ելլելը, եւ «Գիւտ նշխարացը»:

Վարի շարականի հեղինակը Յովհաննէս Երզնկացին է (Պլուզ) (1220/30-1293թթ.): Այս շարականը կ'երգուի Ս. Գրիգոր Լուսավորիչին նուիրուած երեք տօներէն առաջինին՝ «Մուտն ի վիրապ»-ի ժամանակ: Այդ օրը Գալստեան Կիրակիին նախորդող Շաբաթ օրն է:

Կանոն՝ Սրբոյն Գրիգոր Լուսավորչին
Մտնելոյն ի Վիրապն

Այսօր գուարճացեալ ցնծայ եկեղեցի. դրախտ աստուածատունկ ծաղկեալ. յորմէ տուաւ մեզ տունկն անմահութեան տէր Գրիգորիոս. եւ պտղո՞քս իւրով ելից գտիեզերս ամենայն:

Բարունակ ողկուգաբեր ճշմարիտ որթոյն. մշակեալ հայրական աստուածային աջոյն. յորմէ բղխեաց բաժակն ուրախարար տրտմեցելոյ ազինս. որով արբեալ զմայլեցաք յուրախութիւն հոգեւոր:

Գարնանաբեր հնչու՜մս հարաւային հողմոյն. ճառագայթեալ հրով աստուածային Հոգւոյն. որով հալեցաւ սառն կռապաշտութեան հիւսիսաբնակ ազանց. եւ եղեն ծաղկեալք աստուածային գիտութեամբն:

Փակեալ խորան

Մեծ պահքի շրջանին, եկեղեցիներէն ներս խորանները փակ կը մնան: Միակ բացառութիւնն է Ս. Գրիգոր Լուսավորչի «Մուտն ի Վիրապ» տօնի առիթով մատուցուած պատարագը որ կը կատարուի բաց խորանով:



Ս ու Ր Բ Գ Ր ի գ ո Ր
Լ ու ս ա Վ ո Ր ի չ ի Ա ջ ը

Յիսուս եւ Սամարացի Կինը


Յովհաննէս 4:1-42

Նկարին մէջ պահուած բառերով ամբողջացուր նախադասութիւնները:
Շրջանակներու մէջի գիրերով կազմէ Յովհաննէս 4:41 ի համարէն պակսող բառը:

- 1 - Յիսուս նստաւ Յակոբի _ _ ☐ _ _ _ _ քով:
- 2 - Աշակերտները _ ☐ _ _ _ գացած էին ուտելիք գնելու:
- 3 - _ ☐ _ _ _ _ _ կինը զարմացաւ երբ Յիսուս իրեն խօսեցաւ:
- 4 - Աստուած քեզի _ _ _ _ _ ☐ _ _ ջուր պիտի տայ, ըսաւ Յիսուս:
- 5 - Ով որ իմ տալիք ջուրէս խմէ, յաւիտեան պիտի _ _ ☐ _ _ _ _ _ :
- 6 - Կինը ըսաւ՝ Տէր, տուր ինծի այդ _ _ ☐ _ _ :
- 7 - Եկէք տեսէք մարդ մը որ իմ բոլոր _ _ _ _ ☐ _ _ _ ըսաւ ինծի:
- 8 - Սամարացիները _ _ _ _ _ ☐ _ _ Յիսուսին որ իրենց մօտ փսայ:
- 9 - Նոր հաւատացեալները գիտէին թէ ճշմարտապէս Յիսուս է աշխարհի
_ _ _ ☐ _ _ :

Յովհաննէս 4:41

- Ուրիշ շատեր ալ _ _ _ _ _ իրեն՝ իր խօսքերուն համար:



Աստուծոյ սէրը մարդոց հանդէպ

Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Յովհաննէս 3:16

Շրջանակի մէջ առ ոսկեհամարին բոլոր բառերը որոնք գրուած են տարբեր ուղղութիւններով:



ն	n	ր	պ	է	ս	զ	ի			հ
ա	ա	ր		ա	յ	ն	ք	ա	ն	ա
կ	ա	շ	Ո	ր	դ	ի	ն		չ	ւ
ա	ս	ն	իս	վ	ք	ն	ա	ե	կ	ա
ն	տ	ի	ն	ա	հ		ւ	ն	ն	տ
ե	ն	ս	ր	ր	ր	ե		ւ	ր	ա
տ	ւ	կ		ե	չ	հ	տ	ն	ս	ց
ի	ա		ր	ն	ց		ը	ե	ն	ն
ւ	ւ		ի		ա	յ	լ	ն	ւ	դ
ա		մ	ի	ա	ծ	ի	ն	ա	ի	ը
յ	Ա	ս	տ	ն	ւ	ա	ծ	յ		

Բեթեզդայի անդամալոյծին բժշկութիւնը

Յովհաննէս 5:1-18

Պակսող բառերը գտիր վանդակին մէջ, գծիկին քով տրուած գիրով եւ թիով:

Օրինակ - (Ա2) հոն , (Ա4) ներքին

Իսկ վանդակի փափագ գիրերով ամբողջացուր վարի նախադասութիւնը:

Երուսաղէմ (Գ1) ----- մէջ աւագան մը (Զ7) ----- ուր բազմաթիւ
հիւանդներ կային, որոնք (Զ1) ----- առ ժամանակ կը (Ժ2) -----:
(Ա2) ----- (Է4) ----- (Ը7) ----- մը կար:

(Դ5) ----- երբ տեսաւ զայն ըսաւ անոր՝ «կ'ուզես (Թ1) -----»:

Հիւանդը պատասխանեց, - «Տէր, մէկը (Ը2) ----- որ ջուրերը

շարժած ատեն զիս (Բ1) ----- իջեցնէ եւ մինչ ես կը դանդաղիմ,

ուրիշը (Գ6) ----- առաջ կ'իջնէ աւագան:» Յիսուս ըսաւ անոր՝ «Ե՛լ,

մահիճդ առ ու քալէ»: Մարդը վայրկեանին առողջացաւ: Այդ օրը Շաբաթ էր:

(Դ1) ----- ղեկավարները (Է2) ----- չփափային: Այդ դէպքէն

ետք, Յիսուս մարդը տաճարին մէջ գտաւ եւ ըսաւ՝ «(Ե3) -----

առողջացար, (Ե5) ----- մի մեղանչեր»:

Յիսուս կ'ուզէր որ մարդը փոխուէր՝ ոչ միայն երեւելի կերպով, իր

մարմնական հիւանդութենէն այլ (Բ6) ----- իր (Ա4) -----

հիւանդութիւններէն իր մեղքերէն:

Հոն մարդ մը կար, որ ----- տարիէ ի վեր հիւանդ էր: Յովհաննէս 5:5

	1	2	3	4	5	6	7	8	9	10
Ա	ե	հ	ն	ն	ե	ր	ք	ի	ն	ը
Բ	ա	ւ	ա	զ	ա	ն	ա	ե	ւ	ե
Գ	ք	ա	ղ	ա	ք	ի	ն	ձ	մ	է
Դ	չ	ր	ե	ա	Յ	ի	ս	ն	ւ	ս
Ե	ը	ն	ա	հ	ա	յ	լ	ե	ւ	ս
Զ	ժ	ա	մ	ա	ն	ա	կ	ա	ր	ւ
Է	ն	զ	ն	հ	ի	ւ	ա	ն	դ	ն
Ը	ւ	չ	ն	ւ	ն	ի	մ	ա	ր	դ
Թ	ա	ն	ն	ղ	ջ	ա	ն	ա	լ	թ
Ժ	ը	բ	ժ	շ	կ	ն	ւ	է	ի	ն

Կիրակնօրեան եւ Մեծ Պահքը

Մարտ 19-ին Կիրակնօրեայ Դպրոցը կը տօնէ Վարդանանք եւ Բուն բարեկենդան, եւ աշակերտները կը ծպտուին հայկական տարագներով: Այս տարուան պահքի առաջարկուած ծովապահութիւնը հետեւեալն է:

Փետրուար 20-26	Ծամոն
Փետրուար 27-Մարտ 4	Շաքար
Մարտ 5-11	Կազային խմիչքներ
Մարտ 12- 18	Հեռատեսիլ, համակարգիչ, պաստառով այլ խաղեր
Մարտ 19 - 25	Կոլոհատ, տուրմ
Մարտ 26 - Ապրիլ 1	Chips
Ապրիլ 2-7	Հաւկիթ

Այս տարուան պահքի ընթացքին սորվելիքները հետեւեալներն են:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ եւ ՆԱԽԱԿԹԱՐԱՆ Ա. Բ Գոց սորվիլ խաչակնքել, Տէրունական Աղօթքը եւ «Հաւատով խոստովանիմ»էն 3 համարներ:

ՆԱԽԱԿԹԱՐԱՆ Գ. Դ. Ե. եւ Զ. Գոց սորվիլ «Հաւատով խոստովանիմ»ի առաջին 18 համարները:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ Գոց սորվիլ Ա. Կորնթացիս 13-րդ գլուխը, Նոր Կտակարանի Գիրքերու շարքը, եւ «Հաւատով խոստովանիմ»ը

Այս Մեծ Պահքի ընթացքին յիշենք նաեւ կարօտեալները եւ մեր ունեցածէն անոնց ալ բաժին հանենք:

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

ը	ե	զ	զ	է	դ	թ	բ	ա
զ	դ	բ	ա	թ	զ	ը	է	ե
է	թ	ա	ե	բ	ը	զ	դ	զ
դ	բ	ը	զ	ե	թ	ա	զ	է
զ	ա	թ	է	դ	զ	ե	ը	բ
ե	է	զ	ը	ա	բ	դ	զ	թ
բ	զ	դ	թ	զ	ե	է	ա	ը
թ	ը	է	բ	զ	ա	զ	ե	դ
ա	զ	ե	դ	ը	է	բ	թ	ե

է			ա			դ		զ
		դ	է	զ			ա	է
	բ	ը	զ					
զ					զ	թ	է	
	ը		դ		թ		է	
	է	զ	ը					բ
					է	զ	թ	
դ	զ			բ	ա	ը		
է		թ			դ			ա

Նախորդ «Եզակի գիրեր»ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր, իւրաքանչիւր

- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Յիսուսի յաղթական մուտքը Երուսաղէմ:

Այս տարի Ծաղկազարդը Ապրիլ --ին է:

Ամբողջացո՛ւր ըստ Յովհաննէսի Աւետարանին 12.12.15

աւանակին, թագաւորդ, Սուրբ, էշ, թագաւորը, Ովսաննա՛,
արմաւենիի, Յիսուս, Զատկի, բազմութիւն

Յաջորդ օրը, ժողովուրդի մեծ ----- մը, որ ----- տօնին
առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ ----- Երուսաղէմ
կու գայ, ----- ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ,
բարձրաձայն աղաղակելով. «-----, օրհնեալ ըլլայ ան՝ որ կու
գայ Տիրոջ անունով, Իսրայէլի -----»:

Յիսուս -- մը գտնելով՝ նստաւ անոր վրայ, ինչպէս որ -----
գիրքերուն մէջ գրուած է.-

«Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Միոնի՛ աղջիկ. ահա
----- քեզի կու գայ իշու մը ----- վրայ նստած:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Մարտ 17-ին.

- ա. Ս. Ղեւոնդեանց քահանաներուն
- բ. Ս. Աբգար թագաւորին
- գ. Ս. Վահան Գողթնացիին
- դ. Սուրբ Քառասուն Մանուկներուն

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Ղազարոսի Յարութիւնը.

- ա. Փետրուար 6
- բ. Փետրուար 16
- գ. Մարտ 3
- դ. Մարտ 31

3.- Այս տարի ե՞րբ է Միջինքը.

- ա. Մարտ 6
- բ. Մարտ 14
- գ. Փետրուար 16
- դ. Փետրուար 19

4.- Այս տարի ե՞րբ է Ծաղկազարդը.

- ա. Ապրիլ 1
- բ. Մարտ 1
- գ. Ապրիլ 8
- դ. Մարտ 19

5.- Ս. Գրիգոր Տաթևացի ո՞ր վանքին
մէջ անցուց իր ժամանակին մեծագոյն
բաժինը.

- ա. Սանահին
- բ. Հաղբատ
- գ. Նաբեկ
- դ. Տաթև

6.- Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ 13
տարի ուր մնաց:

- ա. Խոր Վիրապ
- բ. Տաթևի Վանք
- գ. Տրդատ թագաւորի պալատին մէջ
- դ. Սանահին

7.- Սուրբ հաղորդութեան զգալի
նշաններէն է

Բաղարջ --- :

8.- Սուրբ հաղորդութեան զգալի
նշաններէն է

Անապակ ---- :

9.- Հետեւեալներէն ո՞ր մէկը Յիսուսի
պատմած առակներէն չէ.

- ա. Անառակին
- բ. Տնտեսին
- գ. Դատաւորին
- դ. Գալստեան

10.- Միջինքը շաբթուան ո՞ր օրը
կ'ըլլայ.

- ա. Երկուշաբթի
- բ. Երեքշաբթի
- գ. Չորեքշաբթի
- դ. Հինգշաբթի

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Մարտ 24-ին.

ա. Ս. Ղեւոնդեանց քահանաներուն
բ. Ս. Գրիգոր Լուսավորիչ մուտն ի
Վիրապ

գ. Ս. Գրիգոր Լուսավորիչ ելն ի
Վիրապ

դ. Սուրբ Քառասուն Մանուկներուն

2.- Ծաղկազարդին նախորդող
Շաբաթ օրը որո՞ւ յիշատակը կը
տօնենք.

ա. Ղազարոսի Յարութեան

բ. Յիսուսի Յարութեան

գ. Յիսուսի Երուսաղէմ մուտքին

դ. Լերան քարոզին

3.- Այս տարի Մարտ 14-ին ի՞նչ կը
տօնենք.

ա. Միջինք

բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի

գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի

դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

4.- Միջինքը ո՞ր երկու Կիրակիներու
մէջի Չորեքշաբթի օրուան կը
հանդիպի.

ա. Անառակին եւ Տնտեսին

բ. Տնտեսին եւ Դատաւորին

գ. Դատաւորին եւ Գալստեան

դ. Տնտեսին եւ Գալստեան

5.- Հետեւեալներէն որո՞ւն մասին կը
կարդանք Ղուկաս 18.1-8-ի մէջ.

ա. Դատաւորին

բ. Տնտեսին

գ. Գալստեան

դ. Անառակին

6.- Քառասուն Մանուկները ո՞ր
շրջանի տարբեր քաղաքներէն էին:

Փոքր ----

7.- Հետեւեալներէն ո՞վ Օձուն գիւղին
մէջ ծնած էր.

ա. Գրիգոր Տաթեւացի

բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի

գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի

դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

8.- Հետեւեալներէն ո՞վ Վայոց Ձորի
մարզին մէջ ծնած էր.

ա. Գրիգոր Տաթեւացի

բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի

գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի

դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

9.- Երբ աշխարհի ամենէն երկար
ճոպանուղին (téléphonique) նստիս
ո՞ր վանքը կը հասնիս:

10.- Երբ ըսենք «մուտն ի Վիրապ»
կամ «ելն ի Վիրապ», ո՞ր սուրբին
մասին կը խօսինք.

Ս. Գ-----

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ո՞ւր կը կարդանք. «Երբ ծով
կը պահէք, տրտումներես մի՛ ըլլաք
կեղծաւորներուն նման...».

ա. Մատթէոս 6.16

բ. Մարկոս 6.16

գ. Ղուկաս 6.16

դ. Յովհաննէս 6.16

2.- Որո՞նք են Ս. Հաղորդութեան
զգալի նշանները.

ա. Բ----- (-----) ----գ

բ. Ա----- ----ի

3.- Ամբողջացո՞ւր Պատարագ կը
նշանակէ.

ա. Զ---

բ. Ն-----

գ. Ը-----

4.- Ո՞վ է Սուրբ պատարագի
սեղանին սպասաւորը որ նաեւ
կ'օժանդակէ պատարագիչ
քահանային.

ա. Ժողովուրդը

բ. Դպիրները

գ. Սարկաւազը

դ. Կաթողիկոսը

5.- Հետեւեալներէն ո՞ր մէկը Յիսուսի
պատմած առակներուն մաս չի
կազմէր.

ա. Դատաւորին

բ. Տնտեսին

գ. Գալստեան

դ. Անառակին

6.- Սեբաստիոյ մէջ կառուցուած էր

քառասուն Գմբեթանի տաճար մը:
Այս տաճարը մինչեւ ե՞րբ կանգուն
մնացած էր.

Լ-----քը

7.- Հետեւեալներէն ո՞վ հիմնած է
Տաթեւի համալսարանը.

ա. Գրիգոր Տաթեւացի

բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի

գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի

դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

8.- Հետեւեալներէն ո՞վ Կաթողիկոս
եղած է ու մշակած 37 եկեղեցական
օրէնքներ 718-ի Դուինի մէջ
կազմակերպուած եպիսկոպոսական
Ժողովին.

ա. Գրիգոր Տաթեւացի

բ. Ս. Յովհաննէս Երուսաղէմցի

գ. Ս. Յովհաննէս Որոտնեցի

դ. Ս. Յովհաննէս Օձնեցի

9.- Պլուզ կը նշանակէ գաճաճ կամ
կարճահասակ: Գրէ՛ Պլուզին լման
անունը.

Յ----- Ե-----

10.- Ամբողջացո՞ւր. Ս. Յովհաննէս
Որոտնեցին պայքար մղած
է հայաստանեայց եկեղեցոյ
Լ----- շարժումին դէմ:

Մեծ պահքը երբեակ իմաստով*

Մեծպահքի քառասնօրեայ շրջանը եկեղեցւոյ հաւատացեալներուն համար հոգեկան վերանորոգութեան սքանչելի առիթ մըն է: Երբ անիկա գիտակցօրէն ապրուի հոգեկան ազնուացման, առհասարակ մարդ անհատի երջանկութեան ամենէն ազդու եւ բարերար միջոցը կը դառնայ: Մեծ պահքը գիտակցօրէն ապրիլ կը նշանակէ:-

1. Աղօթքը դարձնել մեր կեանքի կեդրոնական առանցքը

Առաջին հերթին, աղօթել առանձնապէս տունին կամ ռեւէ այլ հանդարտ միջավայրի մէջ, ուր ինքնամփոփումի, առանձին ըլլալու, ինք իր խղճին հետ խօսակից դառնալու կարելիութիւնը կայ: Կ'անդրադառնա՞նք թէ մարդ առօրեայ կեանքին մէջ որքան գրաւուած է ուրիշներով...: Բայց անհրաժեշտ է որ երբեմն ինք իր անձին հետ առանձին ըլլայ, եւ Աստուծոյ ամենատես աչքին ներքեւ, դիտէ ու քննէ ինքզինք...:

Խոկումի, ինքնանդրադարձումի, առանձնութեան, աղօթքի պահերուն, երբ ոչ ոք մեզի կը նայի, ռեւէ մէկու հետ կապ չունինք, երբ մեր աչքերը մեր անձերուն վրայ կը սեւեռենք, այն ատեն կը յաջողինք սրտբացօրէն, ճշմարտօրէն եւ ջինջ յստակութեամբ մենք գնեզ տեսնել, ճանչնալ եւ սրբագրել կամ վերանորոգել: ...

2. Պահք բռնել

Աղօթելու հետ առններ եւ բացի աղօթելէ անհրաժեշտ է պահք բռնել, ինչպէս ժողովրդական արտայայտութեամբ կ'ըսուի: Ի՞նչ կը նշանակէ պահք բռնել...:

Կրօնական ճշգրիտ եւ խորունկ իմաստով՝ պահքը այնպիսի արարք մըն է որ մարդը կ'առաջնորդէ ինքզինք կամաւորապէս զրկելու որոշ զգայարանական, նիւթական հաճոյքներէ եւ ճոխութիւններէ: Առիթ կու տայ անոր մտածելու հոգեկան, բարոյական կեանքի մշակման մասին...:

Յիսուսի կեանքի պատկերին մէջ մենք կը տեսնենք որ Ան քառասուն (40) օր անապատի մէջ առանձնացաւ, ինքզինք կերակուրներէ զրկեց, հոգեպէս զօրանալու համար: Աւետարանին մէջ մենք կը կարդանք թէ Ան պատուիրեց Իր հետեւորդներուն եւ ըսաւ որ պէտք է պահք բռնեք բայց ոչ «ի ցոյց մարդկան», այլ ներքին ինքնամփոփումով, որպէսզի պահքը արժէք ստանայ եւ ծառայէ անձին վերանորոգութեան...:

3. Բարիք Գործել

Մեծ պահքի շրջանը գիտակցօրէն ապրիլ կամ գործնապէս իմաստաւորել կը նշանակէ ոչ միայն ներանձնական աղօթք բռնել կամ պահք բռնել, այլ նաեւ որոշ գործեր կատարել, դրական արարքներ գործել, որոնց նպատակն ու արդիւնքը բարիք ըլլան, եւ ոչ թէ միայն անհատին, այլ իր նմանին, ուրիշին երջանկութեանը ծառայեն:

Հետեւեալք, Մեծ Պահքի քառասնօրեայ շրջանը քրիստոնէաբար եւ հայօրէն ապրելու համար ունինք երեք գլխաւոր պարտաւորութիւններ.

- 1.- Աղօթել՝ առանձնապէս եւ հաւաքաբար
- 2.- Պահք բռնել ինքնազրկումի սկզբունքով
- 3.- Բարիք գործել՝ ծառայութիւններ մատուցանելով:

*հատուածներ՝ «Պարզ խօսքեր՝ պարզ հոգիներու համար» Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոս

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (12-րդ տարի)

Այս թիւով.....

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը

խորհուրդները. Ս. Պատկ Էջ 2

Ապրիլ ամսուան բացատրական
տօնացոյց Էջ 3-7

Աւագ Երկուշաբթի

Աւագ Երեքշաբթի

Աւագ Չորեքշաբթի

Աւագ Հինգշաբթի

Աւագ Ուրբաթ

Նոր Կիրակի - Կրկնագատիկ

Եզակի գիրեր Էջ 7

Յիսուս՝ Կեանքի հացը Էջ 8

Յիսուս՝ աշխարհի լոյսը Էջ 9

Ծիծաղ՝ հանացանցէն քաղուած Էջ 10

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 12-15

Ինչպէ՞ս ոգեկոչել Մեծ Եղեռնի
նահատակներուն անմահ յիշատակը

Էջ 16

Ապրիլ 2012 (ԺԹ տարի թիւ 8)



Յ...Ս. Յարութիւն

Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարը

«Ե՛ս եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինձի կը հաւատայ, թելէտել մեռնի պիտի ապրի»: *Յովհաննէս 11.25*

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը խորհուրդները (շար. 6)

Նոյեմբեր 2011-ի թիւէն սկսեալ յաջորդական թիւերով կը ներկայացնենք մեր եկեղեցւոյ խորհուրդներէն իւրաքանչիւրը:

Ս. Պսակ կամ ամուսնութիւնը այր եւ կնոջ միութիւնն է Աստուծոյ օրհնութեամբ: Աստուած Ադամը ստեղծելէ ետք, անոր համար ստեղծեց Եւան եւ երկուքը օրհնելով ու միացնելով հաստատեց ամուսնութեան խորհուրդը: Ս. Պսակի արարողութիւնը *սիրոյ* եւ *հաւատարմութեան* ուխտադրութիւնն է ամուսնացող զոյգին՝ Աստուծոյ եւ հանրութեան առջեւ: Այրը կը խոստանայ մինչեւ մահ տէր ու պաշտպան ըլլալ իր կնոջ ու չլքել զայն: Կինը կը խոստանայ հնազանդիլ իր ամուսինին եւ օգնական ըլլալ անոր մինչեւ մահ:

Գիտէ՞՞ր թէ ...

. Ամուսնութեան արարողութիւնը Ս. պսակ կը կոչուի որովհետեւ արարողութեան ընթացքին փեսային եւ հարսին գլխուն պսակ կամ թագ (Աստուծոյ փառքը, պատիւը, օրհնութիւնը) կը դրուի եւ այդ պատճառով ալ փեսան կը կոչուի *թագաւոր* եւ հարսը *թագուհի*:

. *Ուէ՛է ընտանիք պզտիկ թագաւորութիւն մը կը նկատուի եւ զաւակներն ալ իր հպատակները կը համարուին:*

. Քահանան հարսը կը յանձնէ փեսային եւ երկուքը միաւորելով Աստուծոյ անունով կ'օրհնէ, ինչպէս Աստուած Եւան ստեղծելէ վերջ զայն Ադամին յանձնեց եւ երկուքը միաւորելով օրհնեց:

. Խաչեղբայրը փեսային եւ հարսին օրինաւոր ամուսնութեան պաշտօնական վկան է, որ արարողութեան ընթացքին Քրիստոսի խաչը հովանի կը բռնէ անոնց գլխուն վերէ: Յաճախ խաչեղբայրը ժողովուրդին կողմէ կոչուած է կնքահայր, որովհետեւ հինէն ի վեր պսակուողներուն գլխուն վերէ Ս. Խաչը հովանի բռնելու պատիւը շնորհուած է փեսային մկրտութեան կնքահօր կամ անոր որդւոյն:

Ս. Պսակի խորհուրդին ներկայանալէ առաջ թեկնածուները պէտք է՝

1. Ամուսնական կեանքի համար հասուն տարիք ունենան:
2. Ֆիզիքապէս եւ մտապէս առողջ ըլլան:
3. Ազատ կամքով՝ առանց պարագաներու բռնադատութեան որոշում տան իրարու հետ ամուսնանալու:

4. Նոյն կրօնքի եւ նոյն Եկեղեցւոյ անդամակցութիւն ունենան, որպէսզի ապագային բարդութիւններ չստեղծուին նամանաւանդ զաւակներու դաստիարակութեան շուրջ:

5. Իրարու հետ մօտիկ ազգականութիւն չունենան:

Եփես. 5.21 «Քրիստոսի հանդէպ ձեր պատկառանքը արտայայտեցէ՛ք՝ իրարու հնազանդելով»:

Եփես. 5.25 «Այրե՛ր, սիրեցէ՛ք ձեր կիները այնպէս՝ ինչպէս Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր կեանքը տուաւ անոր համար, ...»:

Եփես. 5.31 Սուրբ գիրքին մէջ գրուած է. «Ահա այս պատճառով այրը պիտի թողու իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»:

Ապրիլ ամսուան բացատրական տօնացոյց

Կիր. 1	ԾԱՂԿԱԶԱՐԴ
Բշ. 2	Աւագ Երկուշաբթի՝ յիշատակ Արարչագործութեան
Գշ. 3	Աւագ Երեքշաբթի՝ յիշատակ Տասը Կուսանաց
Դշ. 4	Աւագ Չորեքշաբթի՝ յիշատակ Մատնութեան
Եշ. 5	Աւագ Հինգշաբթի՝ Վերջին Ընթրիք, Ոտնլուայ, Խաւարում
Ուր. 6	Աւագ Ուրբաթ՝ Կարգ Խաչելութեան եւ Թաղման
Շբթ. 7	Աւագ Շաբաթ՝ Ճրագալոյց Սուրբ Զատիկի
Կիր. 8	Սուրբ Զատիկ՝ Յիշատակ Քրիստոսի Յարութեան
Բշ. 9	Յիշատակ Մեռելոց
Շբթ. 14	Յիշատակ Գլխատման Ս. Յովհաննէս Մկրտիչի
Կիր. 15	Նոր Կիրակի (Կրկնագատիկ)
Կիր. 22	Կանաչ Կիրակի (Աշխարհամատրան)
Գշ. 24	97րդ Տարեդարձ Հայոց Յեղասպանութեան
Կիր. 29	Կարմիր Կիրակի

Աւագ Երկուշաբթին նուիրուած է աշխարհի՝ երկնքի և երկրի արարչագործութեան: Առաւօտեան ժամերգութեան ընթացքին աւետարանական ընթերցումները կը յիշատակեն «Անիծուած թզենիին» պատմութիւնը, երբ Յիսուս, Բեթանիայէն Երուսաղէմ վերադարձին, անէծքով չորցուց անպտուղ թզենին՝ ըսելով. «Եւ աղօթած ատեն ինչ որ հաւատալով խնդրէք՝ պիտի ստանաք»: (Մատթ., 21.22): Յիսուս անիծելով տերններով զարդարուած, բայց անպտուղ թզենին՝ փարիսեցիներուն կ'ակնարկէր, ովքեր արտաքին բարեպաշտութեամբ զարդարուած էին, սակայն չունէին այդ բարեպաշտութեան հոգևոր պտուղը՝ բարի գործերը և ողորմածութիւնը:

Պտուղը այլաբանօրէն կը խորհրդանշէ մարդկային բարի գործերն ու առաքինութիւնները, որոնցմէ զուրկ մարդը կը պատժուի այս թզենիի օրինակով: Ինչպէս կ'ըսէ Ս. Յակոբոս առաքեալը՝ «Առանց գործերու հաւատքը անօգուտ է» (Յակոբոս, 2.20):

Աւագ երկուշաբթի օրը չորցած թզենիի յիշատակն է: Քրիստոս Իր գործունէութեամբ բոլորին կը բուժէր և կեանք կը պարգեւէր, սակայն միայն մէկ անգամ ան Իր զօրութիւնը գործածեց չորցնելու համար թզենին՝ ցոյց տալու համար, որ Իր խօսքը կենդանարար է, Ինքն ալ կը կենդանացնէ, բայց նաև կը դատէ: Քրիստոս չորցուց կանաչ թզենին և բուժեց չորցած ձեռքը: Քանի որ կը մօտենային Իր չարչարանքները, Քրիստոս թզենին չորցուց, որպէսզի առաքեալները չմտածէին, թէ Իր ուժերու թուլութեան պատճառով էր, որ չարչարանքներու մատնուեցաւ: Քրիստոս թզենին չորցուց նաև ցոյց տալու համար, որ Իր գալուստով այլևս պէտք չեն թզենիի տերնները, որոնցմով Ադամ կը ծածկէր իր մերկութիւնը, և որոնք կը ծառայէին իբրև ամօթի և խայտառակութեան ծածկոց: Այս օրուան մէջ Յիսուս նաեւ մաքրագործեց տաճարը:

Աւագ Երեքշաբթի ներքին ձեռով կապուած է նախորդ օրուան հետ. կ'ակնարկէ, որ մեր առաքինի գործերու պտուղներով հոգեպէս պետք է պատրաստ ըլլանք Քրիստոսի երկրորդ գալստեան, այլապէս կը չորնանք թգենիին պէս և երկնքի արքայութենէն դուրս կը մնանք հինգ յիմար կոյսերու նման: Օրուայ աւետարանական ընթերցումը կը պատմէ «Տասը կոյսերու» առակը (Մատթ., 25.1-13): Այս առակը հինգ իմաստուն և հինգ յիմար կոյսերու պատմութեամբ կը պատգամէ պատրաստ ըլլալ Տիրոջ գալստեան:

Աւագ երեքշաբթի, երեկոյեան ժամերգութեան ընթացքին եկեղեցւոյ ատեան կու գան տասը կոյսեր: Անոնցմէ հինգը, ձեռքերնին պահած ունենալով վառող մոմեր, կը խորհրդանշեն իմաստուն կոյսերը, իսկ միւս հինգը՝ մարած մոմերով՝ յիմար կոյսերը:

Աւագ Չորեքշաբթի օրը կը յիշատակուի Բեթանիոյ մէջ կնոջ կողմէ Յիսուս Քրիստոսի օծումը և Տիրոջ մատնութիւնը: Մեղաւոր կինը նարդոսի ազնիւ ու թանկարժէք իւղով կ'օծէ Յիսուսը: Այս մասին աւետարանիչները զիրար լրացնող տեղեկութիւններ կը հաղորդեն: Աշակերտները կը բարկանան, քանի որ այդ իւղը վաճառելով կարելի էր շատ աղքատներու ողորմութիւն տալ: Աշակերտներու այս տրտունջին Յիսուս կը պատասխանէ. Աղքատները միշտ ձեզի հետ ունիք եւ երբ որ ուզէք՝ կրնաք անոնց բարիք գործել, բայց զիս չունիք ձեզի հետ: Կնոջ կողմէ Յիսուսի օծումը կը կանխանշէ անոր թաղուիլը: Այս կինը ի՛նչ որ կրնար՝ ըրաւ. իմ մարմինս սկիզբէն օծեց թաղումիս որպէս նշան, կ'ըսէ Քրիստոս:

Աւագ Չորեքշաբթի օրուայ աւետարանական ընթերցումը կը յորդորէ չչարաշահել Աստուծոյ ունեցած սէրն ու վստահութիւնը և, յիշելով մարդկութեան համար անոր կրած չարչարանքներն ու մահը, չշեղիլ ճշմարիտ ճանապարհէն, երկրպագել ու փառաւորել զԱստուած:

Աւագ Հինգշաբթի Խորհրդաւոր ընթրիքի յիշատակի օրն է: Աւագ Հինգշաբթի առաւօտեան բոլոր եկեղեցիներուն մէջ կը մատուցուի Ս. Պատարագ՝ ի յիշատակ Խորհրդաւոր ընթրիքի ժամանակ Քրիստոսի կողմէ Ս. Հաղորդութեան խորհրդի հաստատման:

Վերջին ընթրիքէն ետք Յիսուս ջուրը լեցուց կոնքի մէջ, ծունկի եկաւ իր աշակերտներուն առջև և խոնարհաբար լուաց անոնց ոտքերը՝ հեգութեան և խոնարհութեան իբր օրինակ ծառայելով:

Այս օրը եկեղեցիներու մէջ կատարուող ոտնլուայի արարողութենէն ետք հաւատացեալներուն կը բաժնուի օրհնուած իւղ, զոր հաւատացեալները կը գործածեն հիմնականին մէջ հիւանդութիւններու դէպքին կամ կը խառնեն տան մէջ ունեցած իւղին:

Աւագ Հինգշաբթի օրը կը յիշատակուի Քրիստոսի կողմէ Սուրբ Հաղորդութեան խորհուրդի հաստատումը: Քրիստոս վերջին ընթրիքի ընթացքին հացն ու գինին ճաշակելու տուաւ իր աշակերտներուն՝ ըսելով որ հացը Իր մարմինն է, իսկ գինին՝ Իր արիւնը, որ կը հեղու մարդոց մեղքերու քաւութեան համար: Մերժելի և անընդունելի են աղանդաւորական այն բոլոր տեսակէտները, որոնց համաձայն հացն ու գինին պարզապէս Քրիստոսի մարմնի և արեան խորհրդանիշ են: Այսպիսի պնդումները կը հակասեն Քրիստոսի բառերուն: Ան հաղորդութեան համար երբեք չօգտագործեց խորհրդանիշ բառը: Քրիստոս նաև մէկ այլ տեղ ըսաւ, որ ով որ Իր մարմինն ու արիւնը չճաշակէ, երբեք յաւիտենական կեանք պիտի չունենայ: Իւրաքանչիւր մկրտուած քրիստոնէայ եկեղեցական մեծ տօներու առիթով, տարուան ընթացքին 4 կամ 5 անգամ,

պէտք է հաղորդութիւն ստանայ: Մակայն առ նուազն տարին մէկ անգամ՝ Սուրբ Զատիկի տօնին, պէտք է հաղորդութիւն ստանալ եկեղեցւոյ մէջ, որպէսզի ներքին եութեամբ հաստատենք մեր քրիստոնէայ ըլլալը:

Աւագ Հինգշաբթի երեկոյեան կը կատարուի ոտնլուայի արարողութիւնը: Խորանի վրայ բարձրաստիճան հոգևորականը, զոգնոց կը կապէ եւ կը լուայ ու իւղով կ'օծէ 12 հոգիի ոտքերը: Այս՝ ան կ'ընէ Քրիստոսի արարքի նմանողութեամբ, երբ Քրիստոս լուաց իր 12 աշակերտներու ոտքերը՝ խոնարհութեան նշան ցոյց տալով ու ըսաւ թէ՝ *«Ես ձեզի օրինակ մը տուի, որպէսզի դուք ալ իրարու ընէք այն՝ ինչ որ ես ձեզի ըրի»*: Յովհաննէս 13.15



Աւագ Ուրբաթ

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի չարչարանքներու եւ խաչելութեան յիշատակի օրն է: Քանի որ, ըստ եկեղեցական օրէնքի, երեկոյեան ժամերգութենէն ետք օրը կը փոխուի, ապա չարչարանքներուն նուիրուած արարողութիւնը կը կատարուի Հինգշաբթի երեկոյեան: Արարողութեան ընթացքին կ'ընթերցուին համապատասխան Աւետարաններ, իսկ խորանի վրայ վառող 12 մոմերը կը խորհրդանշեն առաքելները: Երբ ընթերցուի առաքելներու՝ Քրիստոսին լքելու մասին հատուածները, վառող մոմերը հերթով կը մարեն: Յուդային խորհրդանշող մոմը սև գոյն կ'ըլլայ: Աւագ ուրբաթ օրը ծաղիկներէ եւ մշտադալար ծառերու ճիւղերէ կը պատրաստուի Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը և երեկոյան ժամերգութիւնէն ետք, հոգևորականները, հաւաքուելով գերեզմանի մօտ, կ'երգեն Խաչի Քո Քրիստոս օրհներգը, այնուհետև բոլորը կը համբուրեն գերեզմանի վրայ դրուած խաչն ու Աւետարանը:

Մարդիկ սովորաբար կը վախճան մահէն, սակայն Քրիստոսի մահով և յարութեամբ արդէն

մահը մեզի համար սարսափելի չէ, որովհետև մենք գիտենք յարութեան մասին: Այդ իսկ պատճառով ծաղկահիւս այս գերեզմանը ոչ թէ մահ, այլ կեանք, յաւիտենութիւն ու երանութիւն կ'աւետէ:

Խաւարման արարողութեան ժամանակ խորանի վրայ կը վառին տասներկու հաւասարաչափ մոմեր և մէկ հատ մեծ՝ անոնց միջև: «Խաւարման» ընթացքին աւետարաններէն կը կարդացուին եօթ հատուածներ, որոնք կը բովանդակեն 1. Յիսուսի՝ Գեթսեմանիի պարտեզին մէջ աղօթելը, 2. Յուդայի մատնելը, 3. Յիսուսի՝ ամբոխի ձեռքը յանձնուիլը, 4. Աննայի և Կայիափայի առաջ տարուիլը, 5. ապտակուիլը, 6. անարգուիլն ու 7. Պետրոսի երեք անգամ Յիսուսը ուրանալն ու զղջալը: Աւետարանական ընթերցումները կ'ընդմիջուին սաղմոսներու ընթերցանութեամբ և Ս. Ներսէս Շնորհալիի հեղինակած շարականներով: Ամէն աւետարանական ընթերցումէ ետք, կը մարեն տասներկու մոմերէն երկուքը՝ իւրաքանչիւր կողմէն մէկական, վերջաւորութեան կը փայ միայն մէջտեղի մեծ մոմը: Եւս մէկ շարականէն ետք կը մարեն եկեղեցւոյ բոլոր լոյսերը, և կ'երգուի «Փառք ի բարձունս»-ը, զոր առաջին անգամ ըսեր են հովիւները. «Բարձունքներուն մէջ Աստուծոյ փառք, խաղաղութիւն երկրի վրայ եւ մարդոց միջև:

հաճութիւն» (Ղուկ. 2.14): Այս երգի վերջին խօսքերէն «Ծագեալ»-ի ժամանակ դարձեալ կը վառին լոյսերը: Մոմերը մարելը կը խորհրդանշէ աշակերտներու ձքելն ու փախչիլը, իսկ մէջտեղի մոմը կը խորհրդանշէ Քրիստոսը, որ փառքեր է միայնակ:

Ուրբաթ օրը տեղի կ'ունենայ կարգ խաչելութեան, իսկ երեկոյեան ժամերգութենէն յետոյ նախատօնակի արարողութեան ընթացքին կը կատարուի Թաղման կարգը, երբ Յիսուս Քրիստոսի խորհրդանշական գերեզմանը՝ պատրաստուած ծաղիկներու և ծառի ճիւղերէ կը պտտի եկեղեցւոյ շուրջ՝ ի տես հաւատաւոր ժողովուրդի:

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ – ԿՐԿՆԱԶԱՏԻԿ

ԽՈՐՀՈՒՐԴ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ

Արեւելեան Եկեղեցիներ Զատիկին յաջորդող Կիրակիին կուտան ՆՈՐ մակդիրը, այն բացայայտ պատճառով, որ Զատիկը ըլլալով գերագանց Կիրակին, անոր յաջորդողը կ'ըլլայ սկիզբը տարւոյն բոլոր Կիրակիներուն: Հայաստանեայց Եկեղեցին, սակայն, ունի ուրիշ անուանակոչում մը այս Կիրակիին համար – ԿՐԿՆԱԶԱՏԻԿ – ինչ որ կը նշանակէ թէ այս Կիրակիին կը կրկնուին Զատկական ուրախութիւնները, ինչպէս նաեւ Զատիկին տիրող հոգեւոր ու ընկերային մթնոլորտը:

Ըստ այս Կիրակիի շարականներու մեկնաբանութեան Նոր Կիրակին իր մէջ կը բովանդակէ մարդկային կեանքի վերանորոգութեան խորհուրդը: Բնութեան գեղեցկագոյն երեւոյթներէն է վերանորոգութիւնը: Ծառերն ու ծաղիկները անձրեւով ու արեւով յագենալէ յետոյ կ'արթնան, կը վերակենդանան: Արտաքին ազդակներ անհրաժեշտ են նաեւ մեր ներքին կեանքի վերանորոգութեան համար: Մեր գաղափարները, մեր համոզումները, մեր սէրը, մեր հաւատքը եւ այն ամէնը, որոնք չեն երեւիր եւ որոնք սակայն կը կազմեն մեր ներքին կեանքը, ներքին մարդը, կը կարօտին նոր ներարկումի, նոր աւիշի, նոր արեւի եւ անձրեւի:

Յիսուս է մարդկային բանական կեանքի գերագոյն վերանորոգիչը: Ան վերանորոգեց Հին Ուխտը, որ մաշած էր այլեւս եւ իր նպատակին չէր ծառայեր, այլ՝ Աստուծոյ նոր նպատակին անբաւարար էր: Յիսուս պէտք տեսաւ ՆՈՐ ՈՒԽՏ մը հաստատել նոր քարոզութեամբ եւ զայն կնքեց իր արիւնով: Նորոգեց հին պատուիրանները. նոր «գինին» նոր «տիկերու» մէջ լեցուց: Ամէն մարդ որ կը լսէր իր քարոզութիւնը կամ ականատես կ'ըլլար իր հզօր գործերուն զարմացած կամ զայրացած կ'ըսէր. «Այս ի նչ նոր ուսուցում է» (Մարկ. 1.27): Յիսուս «նոր պատուիրան» տուաւ համայն մարդկութեան – սիրոյ պատուիրանը:

Առաքեալները, որոնք հոգեւին նորոգուած էին Քրիստոսի քարոզութեամբ, յարութեամբ ու մանաւանդ Սուրբ Հոգիի ներգործութեամբ, նոյն վերանորոգութիւնը կը թելադրեն բոլորին: Պօղոս Առաքեալ, որ արդարեւ Յիսուսի ուղղակի եւ անմիջական ազդեցութեամբ հոգեպէս եւ հիմնովին վերակենդանացաւ, իր նամակներուն մէջ հզօր շեշտ կը դնէ այս լարին վրայ: «Չարութեան հին խմորը դուրս նետեցէք ձեզմէ, որպէսզի ամբողջութեամբ նոր եւ անխմոր զանգուած մը ըլլաք:» (Ա. Կորնթ. 5.7): Կը պնդէ «Նոր մարդ, նոր արարած» ըլլալու անհրաժեշտութեան վրայ: «Ոչ թլփատուած ըլլալը եւ ոչ ալ անթլփատ փաւր բարոյական մարդի մէջ արժէք մը կրնան ներկայացնել. էականը «նոր արարած» ըլլալն է (Գաղ. 6.15): «Ուստի մոռցէք թէ հին ինքնութիւնը, այսինքն ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր վերանորոգուեցէք ինքնով ձեր մտածելակերպը փոխելով...» (Եփս. 4. 22-23): «Մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը եւ նոր մարդ եղէ՛ք ձեր Արարչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի կարենաք զինք ճանչնալ» (Կոլ. 3. 10): «Ուստի չենք թուլնա բնաւ: Նոյնիսկ եթէ մարմնապէս հետզհետէ կը քայքայուինք, բայց ներքնապէս կը նորոգուինք օրէ օր»: (Բ. Կորնթ. 4.16):

Ու Նոր Կտակարանը իր վախճանին կը բերուի երբ Յայտնութեան Գրքի Տեսանողը կ'ըսէ. «Ապա տեսայ նոր երկինք եւ նոր երկիր մը, որովհետեւ նախկին երկինքն ու նախկին երկիրը անյայտացան... Ան որ գահին վրայ նստած էր, ըսաւ. ահաւասիկ ամէն ինչ նոր կը դարձնեմ» (Յայտ. 21. 1,5):

Քրիստոնէական հիմնական այս գաղափարին յատկացուած է Նոր Կիրակին: Եւ օրուան շարականը, որ Ներսէս Լամբրոնացիի քերթողական բարձր ոճով գրչին արգասիքն է, կը յայտարարէ մարդկային ազգի նորոգութիւնը մեղքի եւ մահուան հնութենէ եւ կը հռչակէ այս Կիրակին իբրեւ Նաւակատիքը, այսինքն սկիզբը մեր փրկութեան:

Շարականին սկիզբը յիշուած «Նորոգեալ Կղզիք»ը քրիստոնէայ դարձած ազգերն են. նոյն նշանակութիւնը ունի յաջորդ տողի «Եկեղեցիք հեթանոսաց» բացատրութեան հետ: Շարականի երկրորդ տունով Սրբազան Բանաստեղծը խօսքը կ'ուղղէ «Հարսին», այսինքն Եկեղեցիին, ըսելով. «Ներսէն զարդարուէ ոսկեճամուկ զգեստներով պճնուած». այսինքն առաքինութիւններով եւ սրբութեամբ նորոգուէ: Երրորդ տունի «Միոնի Որդիները» եկեղեցիի զաւակներն են: Շարականի այս համարով կը թելադրուի անոնց. «Ուրախացէ՛ք ի Քրիստոս թագաւորն» եւ ձեր հոգիներուն հնութենէն նորոգուած ըլլալու առիթով Նաւակատիք տօնեցէ՛ք եւ օրհնեցէ՛ք հրեշտակներու հետ «փառաց թագաւոր» Քրիստոսը:

Երանի անոնց, որոնց մէջ չէ մեռած եռանդը, հաւատքը եւ տրամադրութիւնը վերանորոգուելու: Անոնք պիտի նմանին հզօր արծիւին, որ ամէն տարի կը փոխէ իր փետուրները եւ խորհրդանշանը կը հանդիսանայ երկարակեցութեան եւ անսպառ ոյժի: Անոնք պիտի նմանին խնձորենիին որ ամէն տարի նոր ծաղիկներով եւ նոր տերեւներով կը պատմուճանուի, եւ ամէն տարի նոր պտուղներով կը բեռնաւորուի:

* * *

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

է	ե	զ	ա	թ	բ	դ	ը	գ
զ	թ	դ	ե	զ	ը	բ	ա	է
ա	բ	ը	զ	դ	է	ե	զ	թ
զ	դ	ե	բ	ա	զ	թ	է	ը
բ	ը	ա	դ	է	թ	զ	ե	զ
թ	է	զ	ը	ե	զ	ա	դ	բ
ը	ա	բ	է	զ	ե	զ	թ	դ
դ	զ	է	թ	բ	ա	ը	զ	ե
ե	զ	թ	զ	ը	դ	է	բ	ա

Նախորդ «Եզակի գիրեր»ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր, իւրաքանչիւր

- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

թ				ա				գ
	բ	է	զ		ը	ե	ա	
	ա		է		զ		բ	
է			ա	զ	բ			ը
	ե	ա				զ	դ	
ը			դ	ե	է			ա
	թ		ե		ա		զ	
	է	ը	զ		դ	զ	թ	
զ				է				բ

Յիսուս՝ Կեանքի հացը

Յովհաննէս 6:25-59


Յիսուս ըսաւ անոնց՝

- Ես եմ կեանքի հացը: Ան որ ինծի կու գայ բնաւ պիտի չանօթենայ եւ ան որ ինծի կը հաւատայ երբեք պիտի չծառանայ: Յովհաննէս 6:35
 Ժողովուրդը միայն բառացի իմաստը կը հասկնար այս խօսքին, կ'ուզէր գիտնալ թէ Յիսուս ի՞նչ հրաշք պիտի գործէր որ իրենք Անոր հաւատան եւ կ'ըսէին «Տէ՛ր, միշտ տուր մեզի այդ հացը»:

Ամբողջացուր համարը պակսող բառերը գտնելով վարի վանդակին մէջ:

Յովհաննէս 6:51

-----՝ -----
 -----, Է. -----
 -----: Հացը -----
 -----, -----
 -----:



յ	մ	տ	ո	ւ	տ	է	ա	ո	ա
ա	ա	ա	ւ	հ	ի	հ	պ	ր	շ
ւ	ր	մ	ն	ա	ջ	ա	ր	պ	խ
ի	մ	կ	է	ց	ա	ց	ի	է	ա
տ	ի	ե	ն	է	ծ	ը	տ	ս	ր
ե	ն	ա	ա	ն	ո	ո	ի	զ	հ
ա	ս	ն	յ	մ	ր	վ	պ	ի	ը
ն	է	ք	ն	ի	կ	ր	ե	մ	ե
կ	ե	ն	դ	ա	ն	ի	ա	յ	ս

Յիսուս աշխարհի լոյսը

Յովհաննէս 8:12-20

Պակտող բառերը գտիր նկարին մէջ եւ ամբողջացուր ոսկեհամարը:
Յիսուս դարձաւ ժողովուրդին, ըսելով՝

_____ եմ _____ : Ով որ _____ կը _____
_____ մէջ պիտի _____ , այլ պիտի _____ այն լոյսը որ
_____ : Յովհաննէս 8:12



Պահքի օրերուն յիշէ՛

- Լաւ է ունեցածդ բաժնել ուրիշին հետ
- Յաճախ աղօթել
- Ամէն օր Աստուծոյ խօսքը լսելով եւ հաւատալով դուն կը ստանաս կեանքի հացը:



Առաջնորդէ փոքրիկները դէպի Յիսուս ականջի ճամբով

Ծիծաղ համացանցին քաղուած

Ծաղկազարդ

Ծաղկազարդի կիրակի առաւօտ, փոքրիկ Աւետիսին կոկորդը այնքան կը ցաւեր որ ծնողքը կ'որոշէ զինք եկեղեցի չտանիլ, այլ տունը պահել որ շուտով առողջանայ: Անոնք կը խնդրեն դրացիէն որ Աւետիսին մօտ մնայ մինչեւ իրենց վերադարձը:

Եկեղեցւոյ աւարտին, ծաղկազարդի առիթով իրենց բաժնուած արմաւենիի ոստերը ձեռքին, ընտանիքը կը վերադառնայ տուն:

Երբ Աւետիս այս կը տեսնէ, կը հարցնէ թէ ինչո՞ւ արմաւենիի ոստեր ունէին անոնք:

Հայրը կը բացատրէ թէ Յիսուսը դիմաւորելու համար ժողովուրդէն շատեր իրենց վերարկուները կը փռէին ճամբուն վրայ իսկ ուրիշներ արմաւենիի ոստեր կը շարժէին օդին մէջ:

Աւետիս կ'ափսոսայ «Մէկ օր չկրցայ եկեղեցի երթալ եւ այդ օրը Յիսուս մեր եկեղեցին կ'այցելէ»:



Բազմութիւնը կ'աղաղակէր՝

«Օրհնութիւն Դաւիթի Որդիին,
օրհնեալ է ան՝ որ կուգայ Տիրոջ անունով:
Օրհնութիւն Բարձրեալին:»

Շարական Նոր Կիրակիին

- Օրհնություն -

Նորոգեալ կրդիք առ Աստուած, եկեղեցիք հեթանոսաց,
Ի գլխոց լերանց գոչմամբ ձայնի, տուք ըզփառս Աստուծոյ.
Եւ պատմեցէք զքաջութիւն Յարուցելոյն ի մեռելոց:

Երկնաւոր փեսային հարսնացեալ եկեղեցի Աստուծոյ,
Զարդարեա ի ներքոյ ի հանդերձս յոսկեհուորս պրսակեալ.
Քանզի ահա գայ առ քեզ Քրիստոս փառաց թագաւորն:

Բախացեալ որդիք Սիոմի, ի թագաւորն Քրիստոս,
Տօնեցէք ցնծութեամբ զնաւակատիս հոգւոց մերոց նորոգեալք ի հնութենէ.
Եւ ընդ հրեշտակս օրհնեսցուք զՔրիստոս փառաց թագաւորն:

Սքանչելի է խորհուրդ տնօրէնութեան քո, Քրիստոս,
Որ իջեր է ի Հօրէ, ի սէր հարսին եկեղեցւոյ զոր ընտրեցեր.
Որով փառաբանիս, Քրիստոս, անմահ թագաւոր:

Երեւեցար յարուցեալ եկեղեցւոյ քո հիմանցն,
Յորմէ Թովմաս հրաժարէր ոչ հաւատալ զքեզ տեսողացն.
Որում ցուցեր այսօր փափաքողին զվերըս մարմնոյդ:

Սարսելով Թովմայի շօշափեր զխոցուած տիգին եւ զբեւեռացն,
Եւ գոչելով վերաձայներ Տէր եւ Աստուած դաւանելով ըզյարուցեալդ.
Որով առաք զերանին որք ոչ տեսեալ հաւատացար:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Նորոգուած կրդիներ, Ազգերու եկեղեցիներ,
Լեռներու կատարներէն բարձրաձայն փառք տուէք Աստուծոյ.
Եւ պատմեցէք քաջութիւնը Յարուցեալին:

Երկնաւոր փեսային հարսնացեալ եկեղեցի Աստուծոյ,
Զարդարուէ ներքնապէս ոսկեհուռ հանդերձներով պճնուած.
Քանզի կ'իջնէ քեզի Քրիստոս փառաց թագաւորն:

Ուրախացէք, Սիոնի որդիներ, Քրիստոս թագաւորով,
Տօնեցէք ցնծութեամբ նաւակատիքը մեր հոգիներուն.
Եւ օրհնեցէք հրեշտակաց հետ զՔրիստոս, փառաց թագաւորն:

Սքանչելի է, Քրիստոս, խորհուրդը տնօրէնութեանդ,
Որ իջար Հօրմէ ի սէր Հարսիդ եկեղեցւոյ,
Որմէ փառք կ'ստանաս, Քրիստոս, անմահ թագաւոր:

Երեւեցար յարուցեալ եկեղեցւոյդ հիմքերուն,
Իսկ բացական, Թովմաս, չէր հաւատար տեսնողներուն.
Որուն սակայն ցոյց տուիր այսօր վերքերը մարմնոյդ:

Սարսափահար Թովմաս կը շօշափեր հետքը վերքիդ եւ զամերուն,
Ու բարձրաձայն յարուցեալդ Տէր եւ Աստուած կը դաւանէր:
Որով մենք ալ երանուեցանք, զի չտեսած Քեզ հաւատացինք:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Յիսուսի յարութիւնը:

Այս տարի Յարութեան Տօնը Ապրիլ --ին է:

Ամբողջացո՛ւր ըստ Մատթէոս 28.1-7 համարներուն

տեսնէք, աշակերտներուն, Գալիլիա, քարը, փնտռէք, յարութիւն,
Կիրակին, հրեշտակը, երկրաշարժ

Շաբաթ երեկոյէն ետք, երբ ----- կը բացուէր, Մարիամ
Մագդաղենացին եւ միւս Մարիամը գերեզմանը տեսնելու եկան:
Յանկարծ զօրաւոր ----- մը եղաւ եւ Աստուծոյ -----
երկինքէն իջնելով՝ գլորեց գերեզմանի մուտքին դրուած ----- եւ
նստաւ անոր վրայ: Հրեշտակը կիներուն ըսաւ. «Դուք մի՛ վախնաք.
գիտեմ որ խաչուած Յիսուսը կը ----- : Հոս չէ, որովհետեւ
----- առաւ, ինչպէս ըսած էր: Անմիջապէս գացէք եւ ըսէ՛ք
ի՛ր ----- թէ յարութիւն առաւ: Անիկա ձեզմէ առաջ
----- կը հասնի եւ հոն պիտի ----- զինք.
ահա ըսի ձեզի»:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուալով ինչի՞ դաս մը տուաւ անոնց.

- ա. համբերութեան
- բ. մաքրութեան
- գ. խոնարհութեան
- դ. ծուլութեան

2.- Յիսուս ի՞նչ հաստատեց Վերջին Ընթրիքին.

- ա. Սուրբ Հաղորդութիւնը
- բ. Սուրբ Մկրտութիւնը
- գ. Սուրբ Պսակը
- դ. Դրոշմը

3.- Ո՞վ Յիսուսը երեք (3) անգամ ուրացաւ.

- ա. Յուդան
- բ. Պետրոսը
- գ. Պօղոսը
- դ. Յովհաննէսը

4.- Յիսուս իր ձերբակալութենէն առաջ ի՞նչ կ'ընէր.

- ա. կ'ուտէր
- բ. կը խմէր
- գ. կ'աշխատէր
- դ. կ'աղօթէր

5.- Այս տարի ե՞րբ էր Ծաղկազարդը. Ապրիլ - ին:

6.- Ո՞վ գլորեց Յիսուսի գերեզմանը զոցած մեծ քարը.

- ա. Կիները
- բ. Աշակերտները
- գ. Աստուծոյ հրեշտակը

դ. Պահակ զինուորները

7.- Ոտնլուան շաբթուայ ո՞ր օրը տեղի ունեցաւ.

- ա. Երկուշաբթի
- բ. Երեքշաբթի
- գ. Չորեքշաբթի
- դ. Հինգշաբթի

8.- Վերջին Ընթրիքը շաբթուայ ո՞ր օրը տեղի ունեցաւ.

- ա. Երկուշաբթի
- բ. Շաբաթ
- գ. Չորեքշաբթի
- դ. Հինգշաբթի

9.- Յիսուսի խաչելութիւնը շաբթուան ո՞ր օրը տեղի ունեցաւ.

- ա. Ուրբաթ
- բ. Երեքշաբթի
- գ. Չորեքշաբթի
- դ. Հինգշաբթի

10.- Կիրակի օրը Յիսուսի յարութենէն առաջ ի՞նչ կը կոչուէր.

- ա. Մէկշաբթի
- բ. Շաբաթ
- գ. Կիրակի
- դ. Արեւի օր

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Յիսուս ո՞ր օրը պատմեց տասը կոյսերուն առակը.

- ա. Աւագ Երկուշաբթի
- բ. Աւագ Երեքշաբթի
- գ. Աւագ Չորեքշաբթի
- դ. Աւագ Հինգշաբթի

2.- Յիսուս ո՞ր օրը աղօթեց Գեթսեմանիի պարտեզին մէջ.

- ա. Աւագ Երկուշաբթի
- բ. Աւագ Երեքշաբթի
- գ. Աւագ Չորեքշաբթի
- դ. Աւագ Հինգշաբթի

3.- Յիսուս ո՞ր օրը մաքրագործեց Տաճարը.

- ա. Աւագ Երկուշաբթի
- բ. Աւագ Երեքշաբթի
- գ. Աւագ Չորեքշաբթի
- դ. Աւագ Հինգշաբթի

4.- Թուէ՛ Մեծ պահքի վերջին երեք (3) Կիրակիները.

- ա. Դ-----
- բ. Գ-----
- գ. Ծ-----
- դ. Սուրբ Զատիկ

5.- Ի՞նչ կը կոչուի Ս. Յարութեան յաջորդող Կիրակին (2 պատասխան).

- ա. Նոր Կիրակի
- բ. Կանաչ Կիրակի
- գ. Կարմիր Կիրակի
- դ. Կրկնազատիկ

6.- Այս տարի Հայոց Յեղասպանութեան քանի՞երորդ տարեդարձն է.

--

7.- Ո՞ր Տաղաւարը այս տարի Ապրիլ ամսուան մէջ կը տօնենք.

- ա. Ծաղկազարդ
- բ. Ս. Զատիկ
- գ. Այլակերպութիւն
- դ. Ս. Ծնունդ

8.- Ո՞ր սուրբը գլխատուեցաւ որուն յիշատակը այս տարի Ապրիլ 14-ին կը յիշատակենք.

Ս. -----

9.- Ե՞րբ կը յիշատակենք Վերջին Ընթրիքը, Ոտնկուան եւ խաւարումը.

- ա. Աւագ Երկուշաբթի
- բ. Աւագ Երեքշաբթի
- գ. Աւագ Չորեքշաբթի
- դ. Աւագ Հինգշաբթի

10.- Ե՞րբ կը յիշատակենք Յիսուսի Մատնութիւնը.

- ա. Աւագ Երկուշաբթի
- բ. Աւագ Երեքշաբթի
- գ. Աւագ Չորեքշաբթի
- դ. Աւագ Հինգշաբթի

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ամբողջացո՛ւր Յովհաննէս 11.25.

Ես եմ ----- եւ -----:

Ան որ ինծի կը -----,

Թէպէտեւ ----- պիտի -----:

2.- Զատիկին, ողջոյն տուողը կ'ըսէ.

- Քրիստոս ----- ի -----

եւ ստացողը կը պատասխանէ

----- է ----- Քրիստոսի:

3.- Կիրակիներու ո՞ր շաբթը շիտակն է.

ա. Ս. Զատիկ, Նոր Կիրակի, Կանաչ, Կարմիր

բ. Նոր Կիրակի, Կանաչ, Կարմիր, Ս. Զատիկ

գ. Ս. Զատիկ, Նոր Կիրակի, Կարմիր, Կանաչ

դ. Կրկնազատիկ, Ս. Զատիկ, Նոր Կիրակի, Կանաչ

4.- Ի՞նչ կը յիշատակենք

Ծաղկազարդին նախորդող Շաբաթօրը.

Ղ-----ը

5.- Յուդայ ե՞րբ համաձայնեցաւ մատնել Յիսուսը:

ա. Աւագ Երկուշաբթի

բ. Աւագ Երեքշաբթի

գ. Աւագ Չորեքշաբթի

դ. Աւագ Հինգշաբթի

6.- Խաւարման գիշերուայ ընթացքին քանի՞ հատուածներ կը կարդացուին Աւետարանէն.

ա. 6 կամ 12

բ. 3 կամ 13

գ. 7

դ. 13

7.- Որո՞նք առաջին անգամ գտան Յիսուսի պարապ գերեզմանը.

Մարիամ ----- եւ -----
Մարիամը

8.- Յիսուսի ո՞ր երկու աշակերտները միւսներէն առաջ վազեցին դէպի պարապ Գերեզմանը (գրէ շիտակ շաբթով).

Յ----- եւ -----

9.- Յուդա ի՞նչ ստացաւ Յիսուսը մատնելուն համար.

ա. 20 արծաթ դահեկան

բ. 30 արծաթ դահեկան

գ. 20 ոսկի դահեկան

դ. 30 ոսկի դահեկան

10.- Յուդան ինչպէ՞ս մատնեց Յիսուսը.

Ինչպե՞ս ոգեկոչել Մեծ Եղեռնի նահատակներուն անմահ
յիշատակը

Ապրիլ 24, 1915 - 2012

Ոգեկոչենք Մեծ Եղեռնի նահատակներուն անմահ յիշատակը նաեւ՝

- . Ապրելով Հայադրոշմ կեանք մը,
- . Վառ պահելով հայաստանեայց եկեղեցւոյ տօներն ու ազգային
աւանդութիւնները,
- . Լսելով, մտիկ ընելով ու երգելով մեր Հայանուագ շարականներն ու
երգերը,
- . Ամուր կառչած փալով մեր հայավայել բարի բարքերուն ու
սովորութիւններուն
- . Կարդալով ու կեանքի վերածելով մեր հայագրեալ Աստուածաշունչը
- . Էւ մանաւանդ ՍԻՐԵԼՈՎ Հայր Ամբողջ տարուան ընթացքին:



«Պիտի հանեմ
ձեզ ձեր
գերեզմաններէն.
կենդանութեան
շունչ պիտի
տամ, իմ հոգիս
պիտի տամ ձեզի,
եւ ձեզի ձեր
երկիրը պիտի
վերադարձնեմ»:
Եզեկիէլ 37.14

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (12-րդ տարի)

Այս թիւով.....

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը

խորհուրդները. Ձեռնադրութիւն էջ 2

Մայիս ամսուան բացատրական

տօնացոյց էջ 3-5

Շարական Հոգեգալուստի

Յիսուսի Համբարձումը

Հոգեգալուստ

Բ. Ծաղկազարդ

Ս. Խաչի Երեւման Տօնը

Սարդարապատ էջ 6

1918 թուականի մայիսեան

հերոսամարտը եւ հայ եկեղեցին էջ 7

Մայր էջ 8

Եզակի գիրեր էջ 8

Յի ծնէ կոյրին բժշկութիւնը էջ 9

Հինգ Հազարին կերակրումը էջ 10

Յիսուս է բարի հովիւր էջ 11

Ո՞րն է ճիշդ պատասխանը էջ 12-15

Ամավերջի Հանդէս էջ 16

Մայիս 2012 (ԺԹ տարի թիւ 9)



Հ...Համբարձում,
Հոգեգալուստ

Խաչքարի Հեղինակ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Ամսուան Համարը

«Հետեւաբար, գացէք եւ բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէք:
Զանոնք մկրտեցէք՝ ջօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: Անոնց սորվեցուցէք
այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի, եւ ահա ես ձեզի հետ պիտի ըլլամ,
մինչեւ աշխարհիս վախճանը:»

Մատթէոս 28.19-20

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Քրիստոսի Սուրբ Եկեղեցւոյ եօթը խորհուրդները (շար. 7)

Նոյեմբեր 2011-ի թիւէն սկսեալ յաջորդական թիւերով կը ներկայացնենք մեր եկեղեցւոյ խորհուրդներէն իւրաքանչիւրը:

Ձեռնադրութիւն կը նշանակէ՝ կրօնական աստիճանի, կարգի տուչութիւն կը կատարուի ընծայեալին գլխուն վրայ ձեռք դրուելով: Ընծայեալը կը նուիրուի Աստուծոյ ծառայութեան եւ Եկեղեցւոյ սպասաւորութեան ու թեկնածու կը դառնայ ձեռնադրութեամբ կրօնական աստիճան ստանալու: Ձեռնադրութիւնը կրնան կատարել **Եպիսկոպոսները**:

Գիտէ՞ր թէ ...

- . Ձեռնադրութեան խորհուրդը *հաստատուած* է Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի ձեռքով երբ ան Առաքեալներուն շնորհեց քահանայական եւ եպիսկոպոսական ամէն իշխանութիւն:
- . Առաքեալները իրենց հիմնած եկեղեցիներուն վրայ եպիսկոպոսներ (տեսուչներ) կարգեցին եւ ձեռնադրութեամբ անոնց *փոխանցեցին* Յիսուս Քրիստոսէ իրենց ստացած իշխանութիւնը: Ձեռնադրութիւնը Խորհուրդ է, որովհետեւ *հաւատքով*/կ'ըմբռնենք թէ նուիրեալը ձեռնադրութեամբ կ'ընդունի եկեղեցական կարգ, իշխանութիւն եւ երկնային իմաստութիւն:
- . Սկզբնական շրջաններուն Քրիստոսի Եկեղեցին ունէր նուիրապետական 3 աստիճաններ. *սարկաւագութիւն, երիցութիւն (քահանայութիւն) եւ եպիսկոպոսութիւն*:
- . Դպիր ըլլալէ առաջ ձեռնադրիչ եպիսկոպոսը *Սաղմոսերգութեան եւ Աւելածութեան* պաշտօնները կու տայ ընծայեալին՝ մասնաւոր արարողութեամբ, եւ կը կտրէ անոր մազերը: Այս արարողութեամբ ընծայեալը կը դառնայ Աստուծոյ ծառայ եւ Եկեղեցւոյ սպասաւոր, ու կը կոչուի *կղերիկոս* կամ *ժառանգաւոր*:

Եկեղեցւոյ նուիրապետութեան ինը (9) կարգերն են:

ա. Դոնապանութիւն, բ. Ընթերցողութիւն գ. Երդմսեցուցչութիւն, դ. Ջահընկալութիւն, (այս առաջին չորսը (4) կը կոչուին Դպիր:

ե. Կիսասարկաւագութիւն, գ. Սարկաւագութիւն, է. Քահանայութիւն, ը.

Եպիսկոպոսութիւն, թ. Կաթողիկոսութիւն:

Այժմ *Դպիրները* եկեղեցւոյ արարողութիւններուն իրենց բաժինը կը բերեն կարդալով ու երգելով: *Ուրարակիր* Դպիրներ, եպիսկոպոսէն ուրար կրելու արտօնութիւն ստանալով սարկաւագի պաշտօն կը կատարեն բացի վերաբերումէն:

Կիսասարկաւագին պաշտօնն է օգնել Սարկաւագին, խնկարկել, պատարագիչը զգեստաւորել, Պատարագի ընթացքին դատարկ սկիիը խորհրդանոցէն սուրբ սեղան բերել:

Սարկաւագը Ս. Եկեղեցւոյ գլխաւոր սպասաւորն է: Ան օգնականն է քահանային: Ս. Պատարագի ընթացքին կը կարդայ Աւետարանը եւ կը կատարէ վերաբերումը (Ս. Պատարագի ընթացքին երբ նշխարները խորան կը փոխադրեն):

Մայիս ամսուան բացատրական տօնացոյց

Կիր. 6	Երեւումն Սուրբ Խաչի
Կիր. 13	Մայրերու Օր
Եշ. 17	Համբարձում
Կիր. 20	Բ. Ծաղկազարդ
Կիր. 27	Հոգեգալուստ (Պենտեկոստէ)
Բշ. 28	Հայաստանի Ա. Հանրապետութեան Տարեդարձ (94-ամեակ)

ՇԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԳԱԼՈՒՄՏԻ

– Օրհնութիւն –

Առաքելոյ աղանոյ իջանելով մեծաձայն հընչամբ ի բարձանց,
Ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի զաշակերտսն,
Մինչդեռ նըստէին ի սուրբ վերնատանն:

Աննիթական աղանի, անքննելի որ քննէ ըզխորս Աստուծոյ.
Զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր եւ ըզմիւսանգամ գալուստն.
Զոր քարոզեցին համագոյական:

Օրհնութիւն ի բարձունս, ելողին ի Հօրէ Հոգւոյն սրբոյ.
Որով առաքեալքն արբեցան անմահական բաժական,
Եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Երկնառաքեալ Աղանին, բարձրաձայն հնչամբ իջաւ Աստուծմէ
Փայլուն լոյսի նմանութեամբ, անսպառ կրակով զինեց աշակերտները.
Երբ նստած էին ի սուրբ վերնատուն:

Աննիթական աղանին, որ կը քննէ խորքերն Աստուծոյ,
Հօրմէն իմացած կը պատմէ ահաւոր եւ միւսանգամ գալուստն,
Որ հօր հետ միշտ է համագոյական:

Օրհնութիւն երկինքին, Հօրմէ Բխող Սուրբ Հոգիին.
Որով առաքեալներ լեցուեցան, որպէս անմահ բաժակէն.
Եւ հրաւիրեցին երկիրս դէպ երկինք:

Յիսուսի Համբարձումը

Համբարձում կը նշանակէ «բարձրացում»: Համբարձումը Յիսուսի յարութիւն առած ու փառաւորուած մարմնով երկինք բարձրանալու եւ Հայր Աստուծոյ աջ կողմը նստելու յիշատակումին տօնն է, որ տեղի կ'ունենայ միշտ Հինգշաբթի օր, Յարութեան 40րդ օրը:

Յարութենէն ետք, Յիսուս իր աշակերտներուն երեւնալէ ետք, 40րդ օրը իր աշակերտներուն հետ Ձիթենեաց լեռ բարձրացաւ ուր յայտնեց իր աշակերտներուն թէ «երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք ու իմ վկաներս պիտի ըլլաք, Երուսաղէմի, Հրէաստանի, եւ Սամարիայի մէջ մինչեւ աշխարհի ծայրամասերը»: Երբ ան կ'արտասանէր այս խօսքերը, Յիսուս երկինք կը բարձրանայ մինչեւ որ ամպերը ծածկեն զինք աշակերտներուն տեսողութենէն: Այս պատուիրանին համաձայն թաղեալ ու Բարթողոմէոս Առաքեալները Հայաստան կու գան հիմնելու Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:



Հոգեգալուստ Պենտէկոստէ (50)

Հոգեգալուստը տեղի ունեցաւ Համբարձումէն 10 օրեր ետք եկող Կիրակի օրը: Ըստ Համբարձեալ Յիսուսի խոստումին, Սուրբ Հոգին հրեղէն լեզուներու պէս հանգչեցաւ Առաքեալներուն վրայ, որոնք զօրութեամբ լեցուեցան, եւ տարբեր լեզուներ խօսելու կարողութիւնը ունեցան, որուն միջոցով կրցան Քրիստոսի Աւետարանը քարոզել Աշխարհին տարբեր երկրներէն ժամանած հրեաներուն որոնք եկեր էին Պենտէկոստէ (Ջատիկէն 50 օրեր ետք նշուող երկու տօները տօնելու

ա. Առաջին հունձքը Տիրոջ նուիրելու Տօնը

բ. Մինա լերան վրայ Աստուծոյ տասնաբանեայ պատուիրաններուն տրչութեան)

: Նկատելով որ Քրիստոսի յարութիւնը եւ Հոգեգալուստը տեղի ունեցան Մէկշաբթի օրը, Մէկշաբթին դարձաւ Տէրունի օր եւ կոչուեցաւ Կիրակի:

Երկրորդ Ծաղկազարդ

Այսպես կը կոչուի Համբարձման յաջորդող Կիրակին: Ան իր անունը ստացած է պարզապես այդ օրուայ ճաշու Աւետարանէն որ կը կարդացուի եկեղեցոյ մէջ: Թէ ինչո՞ւ:

Հայ Եկեղեցին Նոր Կիրակիէն սկսեալ՝ 4 աւետարանները կը կարդայ շարունակաբար եւ այդ կարգին շարունակութեամբ 4 աւետարաններուն Քրիստոսի Երուսաղէմ մուտքին բաժինները կը կարդացուին Ս. Զատիկին յաջորդող 6րդ Կիրակիին ընթացքին՝ որ Համբարձումի յաջորդող կիրակին է, երբ Ծաղկազարդի յիշատակութեան կրկնութիւնը տեղի կ'ունենայ: Այսպիսով ժողովուրդը երկրորդ անգամ ըլլալով կը լսէ Ծաղկազարդի հատուածը՝ որմէ անունը:

Երկրորդ Ծաղկազարդի օրն ալ Զատիկուան պէս 35 օրերու շարժականութիւն ունենալով՝ Մայիս 3էն Մինչեւ Յունիս 6 կրնայ հանդիպիլ:

Սուրբ Խաչի Երեւման Տօնը

Համբարձումէն 11 օրեր առաջ, որ այս տարի կը հանդիպի Մայիսի 6-րդ օրը, Հայաստանեայց եկեղեցին կը յիշատակէ Սուրբ Խաչի երեւման դէպքը որ տեղի ունեցաւ 351 թուին, այն տարիներուն երբ Կիւրեղ եպիսկոպոս Երուսաղէմի պատրիարք էր: Այդ տարի, Հոգեգալստեան առաւօտուն ժամը 3-ին, ահաւոր մեծութեամբ լուսաւոր խաչ մը երեւցաւ երկինքին վրայ, մէկ ծայրը Գողգոթայի եւ միւս ծայրը Ձիթենեաց լեռան վրայ եւ շատ ժամեր տեւելով՝ տեսնուեցաւ Երուսաղէմի բոլոր բնակիչներուն կողմէ որոնք զոջումով եւ բարեպաշտութեամբ սկսան դէպի եկեղեցիներ վազել, հոն փառք ու գոհունակութիւն յայտնելու համար Աստուծոյ: Այս հրաշալի երեւոյթը անմոռանալի եւ աննախընթաց դէպք մը ըլլալուն համար, այդ թուականէն ի վեր կը մնայ յիշատակութեան արժանի տօն: Հայ եկեղեցին զայն կը տօնէ Զատիկը հաշուելով, հինգերորդ Կիրակին ու խաչի երեւման տօնը Զատիկին կապուած ըլլալուն համար կը նկատուի շարժական տօն եւ ունի 35 օրուայ շարժականութիւն:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ



Գիտե՛ի՞ր թե՛

. Հայաստանի Հանրապետության Զինանշանին կեդրոնը Արարատ լեռն է որուն վրայ կը հանգչի Նոյեան Տապանը:

. Հայերենը Հայաստանի պաշտօնական լեզու հռչակուեցաւ Դեկտեմբեր 1919-ին:

. 1918-1920 Անկախ Հայաստանի վերջին դաշնագիրը՝ Սեւրի Դաշնագիրը ստորագրուեցաւ 10 Օգոստոս 1920-ին:

1918 թուականի մայիսեան հերոսամարտը եւ հայ եկեղեցին

1918 թուականի սկիզբներուն, թրքական բանակը, արեւմտեան Հայաստանի հայերը ցեղասպանութեան ենթարկելէ վերջ, իր յառաջխաղացքը շարունակեց ձգտելով գրաւել նաեւ արեւելեան Հայաստանը: Այս սպառնալիքին դէմ կեցաւ հայ հասարակութիւնը իր ամբողջութեամբ, ներառեալ Հայաստանեայց եկեղեցին, որուն մասնակցութիւնը մայիսեան հերոսամարտին արժանի է յիշատակման: Նկատի ունենալով թուրքերու դէպի արարատեան դաշտ շարժումը, հայկական զօրքերու հրամանատարութիւնը դիմեց օրուան Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենեանցին, առաջարկելով անոր Էջմիածնին յապառնացող վտանգին առջեւ կաթողիկոսական մայր աթոռը տեղափոխել աւելի ապահով տեղ՝ Բիւրական:

Ահա թէ ինչ էր կաթողիկոսին կոչը իր ժողովուրդին, առ ի պատասխան փախուստի այդ առաջարկին. «Ազգ հայոց, թուրքը մեր բանական հօտի դարաւոր թշնամին, նուաճել է Ալեքսանդրապոլը, շարժում է դէպի սիրտը մեր երկրի, մեր հաւատի, մեր կենսագրութեան: Գալիս է Արարատեան երկրի վրայ: Թուրքը, կոտորած ու աւեր սփռելով, գալիս է եւ մեր զօրապետներն էլ այլ ելք չեն գտնում այդ աղետից, քան Հայոց հայրապետին փախուստի մղել: Նրանք Ամենայն Հայոց կաթողիկոսին առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը, մեր սրբաբանները, հայ ժողովուրդը, հայրենի երկրի վերջին կտորը: Առաջարկում են լքել այս բոլորը եւ սեփական կեանքը փրկել Բիւրականում կամ այլ անմատչելի լեռնաձորացի վրայ: Ո՛չ եւ ոչ, հազար անգամ ոչ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից աւանդուած մայր աթոռը: Ես չեմ հեռանայ Հայոց առաքելական եկեղեցու օճախից: Եթէ հայոց զինուորութիւնն ու ինքը՝ հայ ժողովուրդը չեն կարողանայ թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթէ ի զօրու չեն լինի մեր սրբութիւնները, ապա թող ես նահատակուեմ հենց այստեղ շեմի վրայ Մայր աթոռի, որու գահակալի պատիւն ունեմ մեր սուրբ նախնիների արդար բարեխօսութեամբ եւ Աստուծոյ ողորմածութեամբ: Միթէ մենք չպիտի՞ կարողանանք պահպանել մեր օճախի կրակը, մեր հաւատի ջահը, մեր ազգային գոյի հիմքերը: Իսկ եթէ եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատուով ու քաջութեամբ եւ ոչ թէ ողորմելի գեռունի պէս ոսոխի առաջ սողալով: Մեր պատմութեան անցեալ դարերը լիքն են քաջութեան օրինակներով, ներկուած են նահատակների արեամբ: Դրանով չի սպառուել մեր արիւնը եւ չի կորսուել քաջութիւնը մեր շարքերից: Դարեր շարունակ հայոց ազգն այսպէս է ապրել՝ իր ինքնութեան համար պայքարելով, իր վաղուայ համար այսօր մեռնելով: Եւ որովհետեւ, ով գաղափարի՝ հետ է մեռնում, մեռնում է որպէս հատիկը ցորենի, ապա հատիկի մահով նոր կեանքեր են ծնուում վաղ թէ անագան: Դրա համար է, որ զանգուածային կոտորածներով ու մահերով հարուստ մեր կենսագրութիւնը չի ունեցել եւ երբեք էլ չպիտի ունենայ վերջին վերջակէտ: Ուրեմն էլ ինչո՞ւ դաւենք ապրելու եւ գոյատևելու մեր ազգային կերպին: Ինչո՞ւ ազգովին չբարձրանանք թշնամու դէմ, որ գալիս է անդրաբաքսեան իր թեթեւ յաջողութիւններով յղիացած եւ մեր արեան վերջին կաթիլին ծարաւի...»

Եւ վեհաբանի դահլիճին ու Մայր աթոռի բակին մէջ հաւաքուած ամբողջ բազմութիւնը կերպարանափոխուած միահամուռ բացազանչեց.
- Պատրաստ ենք ելնելու, Վեհափառ Տէր:

Ապաճերունազարդհայրապետը, իրարծուայինհայեացքնուղղելով ժողովուրդին շարունակեց.

- Ես միշտ էլ հաւատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնութիւնները: Ես համոզուած եմ նաեւ, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն դէմ չի ասել իր վերջին խօսքը: Եւ խօսքն այդ պիտի լինի յաղթական:

Կաթողիկոսին խօսքը բազմացուեցաւ տպարանին մէջ եւ ուղարկուեցաւ ռազմաճակատ...

5-րդ պատուիրանը

Պատուէ՛ հայրդ ու մայրդ, որպէսզի կեանքդ երկար ըլլայ այն երկրին վրայ, որ ես՝ Տէրը, քու Աստուածդ, քեզի կու տամ:

Մեր բոլոր բանաստեղծները ամենէն քնքոյշ եւ սրտաթով բառերը վերապահած են մայրերուն: Մայրութիւնը այնքան նուիրական արժէք մը եղաւ հայ ժողովուրդին համար որ մայր բառը դարձաւ բնորոշիչ բառը հայոց ամենէն նուիրական սրբութիւններուն.

- Մայր եկեղեցի, Մայր Աթոռ, Մայր Տաճար
- Մայր հայաստան, Մայր հայրենիք, Մայրաքաղաք
- Մայրենի լեզու
- Մայր Արաքս

Դուք ձեր կեանքով, նուիրումով, զոհողութեան գերազանց արտայայտութեամբ ամենէն մեծ դաստիարակներն էք հայ ժողովուրդի զաւակներուն: Ձեր դասագիրքը Ձեր սէրն է, ձեր գրիչը՝ ձեր ժպիտը...

Արեգակի լոյսին պէս թող այդ ժպիտը միշտ ծագի հայ մանուկներու աչքերուն մէջ, երբ անոնց աչքերը բացուին աշխարհի լոյսին:

Գարեգին Բ. Կաթողիկոս
Մեծի Տանն Կիլիկիոյ

Եզակի գիրեր Հայերէն գիրերով Sudoku

թ	ը	գ	բ	ա	ե	դ	է	զ
դ	բ	է	գ	թ	ը	ե	ա	զ
ե	ա	զ	է	դ	գ	ը	բ	թ
է	զ	դ	ա	գ	բ	թ	ե	ը
բ	ե	ա	ը	զ	թ	գ	դ	է
ը	զ	թ	դ	ե	է	բ	գ	ա
գ	թ	բ	ե	ը	ա	է	զ	դ
ա	է	ը	զ	բ	դ	գ	թ	ե
զ	դ	ե	թ	է	գ	ա	ը	բ

		գ	է				թ	ը
			ը			բ		
թ	բ			է	դ		ա	
ա	ը		բ				դ	զ
		զ		դ		ա		
է	դ				թ		ը	է
	է		գ	ա			զ	թ
		թ			է			
բ	է				զ	է		

Նախորդ «Եզակի գիրեր»ուն լուծումը

Ամբողջացուր քառակուսիները, գործածելով ա, բ, գ, դ, է, զ, է, ը, թ գիրերը պայմանաւ որ միայն մէկ անգամ գործածես իւրաքանչիւր գիր, իւրաքանչիւր

- . հորիզոնական գիծի վրայ
- . ուղղահայեաց գիծի վրայ եւ
- . իննեակ քառակուսիի մէջ:

Յոսիաննէս 9:1-41

Գիրերու կարգը ճշդէ եւ տես թէ ինչ ըսաւ մարդը: Յովհաննէս 9:38

Կենդանիներու անունները զանց առ վարի տախտակէն ապա գրէ նախադասութիւնը:

1	2	3	4	5	6	7
8	9	10	11	12	:	

1	ᄃ	ᄅ	ᄆ	ᄇ	ᄈ	ᄉ	ᄊ	ᄋ	ᄌ	ᄍ	ᄎ	ᄏ	ᄐ
2	ᄑ	ᄒ	ᄓ	ᄔ	ᄕ	ᄖ	ᄗ	ᄘ	ᄙ	ᄚ	ᄛ	ᄜ	ᄝ
3	ᄞ	ᄟ	ᄠ	ᄡ	ᄢ	ᄣ	ᄤ	ᄥ	ᄦ	ᄧ	ᄨ	ᄩ	ᄪ
4	ᄫ	ᄬ	ᄭ	ᄮ	ᄯ	ᄰ	ᄱ	ᄲ	ᄳ	ᄴ	ᄵ	ᄶ	ᄷ
5	ᄸ	ᄹ	ᅀ	ᅁ	ᅂ	ᅃ	ᅄ	ᅅ	ᅆ	ᅇ	ᅈ	ᅉ	ᅊ
6	ᅋ	ᄱ	ᅍ	ᅎ	ᅏ	ᅐ	ᅑ	ᅒ	ᅓ	ᅔ	ᅕ	ᅖ	ᅗ
7	ᅙ	ᅚ	ᅛ	ᅜ	ᅝ	ᅞ	ᅟ	ᅠ	ᅡ	ᅢ	ᅣ	ᅤ	ᅥ
8-9	ᅦ	ᅧ	ᅨ	ᅩ	ᅪ	ᅫ	ᅬ	ᅭ	ᅮ	ᅯ	ᅰ	ᅱ	ᅲ
10	ᅳ	ᅴ	ᅵ	ᅶ	ᅷ	ᅸ	ᅹ	ᆀ	ᆁ	ᆂ	ᆃ	ᆄ	ᆅ
11	ᆆ	ᆇ	ᆈ	ᆉ	ᆊ	ᆋ	ᆌ	ᆍ	ᆎ	ᆏ	ᆐ	ᆑ	ᆒ
12	ᆓ	ᆔ	ᆕ	ᆖ	ᆗ	ᆘ	ᆙ	ᆚ	ᆛ	ᆜ	ᆝ	ᆞ	ᆟ

Հինգ հազարին կերակրումը

Յովհաննէս 6:1-13

Յիսուս կերակրեց մեծ բազմութիւն մը միայն գարիի հինգ հացով եւ երկու ձուկով: Աւելցած կտորներն ալ տասներկու սակառ լեցուցին: Աստուած միշտ հրաշքներ կը գործէ երբ մենք վստահինք եւ հաւատանք իրեն: Լուծէ հետեւեալները եւ գտիր բազմութեան թիւը .-

1- Բազմապատկէ ձուկերուն թիւը X գարիի հացերուն թիւով

2- Պատասխան =

3- Բազմապատկէ թիւ 2 պատասխանը X աւելցած սակառներու թիւով

4- Պատասխան =

5- Գումարէ ձուկերու թիւը + գարիի հացերու թիւը

6- Պատասխան =

7- Բազմապատկէ թիւ 4 X թիւ 6 պատասխանները

8- Պատասխան =

9- Բաժնէ սակառներու թիւը երկուքով

10- Պատասխան =


11- Բազմապատկէ թիւ 8 X թիւ 10 պատասխանները

12- Պատասխան =

13- Թիւ 12 պատասխանէն հանէ 40












14- Քանի՞ հոգի կերակրեց Յիսուս

15- Պատասխան =




Յիսուս է բարի հովիւր

Կարդա՛ համարները: Պակտոդ բառերը գտիր ոչխարներուն վրայէն եւ ընդօրինակէ ճիշդ տեղերը:



Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Ամբողջացո՛ւր Ըստ Ղուկաս 24.50-53ի
օրհնեց, երկինք, երկրպագեցին, զԱստուած, Բեթանիա,
բաժնուեցաւ, Երուսաղէմ
Յիսուսի համբարձումը այս տարի Մայիս -- ին է:

Ապա տարաւ զանոնք մինչեւ ----- եւ ձեռքերը
վեր բարձրացնելով ----- զանոնք: Եւ մինչ
կ'օրհնէր, ----- անոնցմէ, դէպի -----
բարձրանալով: Անոնք ----- Յիսուսի եւ մեծ
ուրախութեամբ վերադարձան -----: Ամէն օր
տաճարին մէջ էին գովելով ու օրհնաբանելով -----
-----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Մայրերու օրը.

ա. Մայիս 10

բ. Մայիս 11

գ. Մայիս 12

դ. Մայիս 13

2.- Ասոնցմէ ո՞ր մէկը սխալ է:

ա. Նոր Կիրակի

բ. Կապոյտ Կիրակի

գ. Կարմիր Կիրակի

դ. Կանաչ Կիրակի

3.- Հետեւեալներէն ո՞ր մէկուն պատկերը Հայաստանի Հանրապետութեան Զինանշանին վրայ կը գտնենք (երկու պատասխան):

ա. Արարատ լեռը

բ. Նոյեան Տապանը

գ. 10 Պատուիրանները

դ. Յիսուսի Համբարձումը

4.- Սուրբ Խաչին երեւումը ո՞ր տեղի ունեցաւ:

ա. Երուսաղէմէն մինչեւ Երիքով

բ. Երիքովէն մինչեւ Երուսաղէմ

գ. Գողգոթայէն մինչեւ Ձիթենեաց լեռ

դ. Փոքր Մասիսէն մինչեւ Մեծ Մասիս

5.- Համբարձումը շաբթուան ո՞ր օրը կը տօնենք:

ա. Երկուշաբթի

բ. Երեքշաբթի

գ. Չորեքշաբթի

դ. Հինգշաբթի

6.- Պատարագի ընթացքին ո՞վ (որո՞նք) կ'երգէ (կ'երգեն) «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ...»:

ա. Պատարագիչը

բ. Սարկաւազը

գ. Քահանան

դ. Դպիրները

7.- Ողջոյն տուողը ի՞նչ կ'ըսէ: Քրիստոս - մէջ --- յայտնեցաւ

8.- Ողջոյն ստացողը ի՞նչ կ'ըսէ: ----- է ----- Քրիստոսի

9.- Այս տարի Հայաստանի Ա. հանրապետութեան քանիերրո՞րդ տարեդարձն է:

ա. 96

բ. 95

գ. 94

դ. 93

10.- Ո՞ր ստորագրուեցաւ Հայաստանի Ա. հանրապետութեան վերջին դաշնագիրը 10 Օգոստոս 1920-ին:

ա. Սեւր

բ. Լոզան

գ. Պերլին

դ. Փարիզ

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ի՞նչ նմանութիւն կայ Բաբելոնի

Աշտարակի շինութեան եւ
Հոգեգալուստին միջեւ.

2.- Ի՞նչ կը կոչուի Համբարձումին
յաջորդող Կիրակին.

ա. Կրկնագատիկ

բ. Հոգեգալուստ

գ. Երկրորդ Ծաղկազարդ

դ. Տօն Երեւման Ս. Խաչի

3.- Յիսուսի յարութենէն քանի՞ օր
ետք Պենտէկոստէ կը կոչուի.

ա. Հինգ

բ. Յիսուն

գ. Քառասուն

դ. Երեք

4.- Յիսուսի յարութենէն քանի՞ օր
ետք Հոգեգալուստ կը տօնենք.

ա. Հինգ

բ. Յիսուն

գ. Քառասուն

դ. Երեք

5.- Յիսուսի Համբարձումը շաբթուան
ն՞ր օրը կը տօնենք.

ա. Երկուշաբթի

բ. Հինգշաբթի

գ. Շաբաթ

դ. Կիրակի

6.- Այս տարի Հայաստանի առաջին
հանրապետութեան հռչակման
քանի՞ երորդ տարեդարձն է.

7.- Ո՞վ է Միխիթարիչը գոր Յիսուս
խոստացաւ դրկել Համբարձումէն
ետք.

8.- Ո՞ւր կը կարդանք Հոգեգալուստին
մասին.

ա. Մատթէոսի Աւետարան

բ. Մարկոսի Աւետարան

գ. Յովհաննէսի Աւետարան

դ. Առաքեալներուն Գործերը

9.- Ամբողջացո՞ւր 5-րդ
պատուիրանը.

Պ----- Հ----- ու -----, որպէսզի կեանքդ
----- ըլլայ այն երկրին վրայ որ ես
Տէրը, քու Աստուածդ, քեզի --- ---:

10.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Քրիստոսի համբարձումը.

Մայիս -- ին:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Ե՞րբ ստորագրուեցաւ Սեւրի
Դաշնագիրը.

Օ-----, 19--

2.- Ո՞րն է հետեւեալ Կիրակիներուն
շիտակ շարքը.

ա. Երկրորդ Ծաղկագարդ,
Հոգեգալուստ, Համբարձում, Տօն
Երեւման Ս. Խաչի:

ա. Երկրորդ Ծաղկագարդ, Տօն
Երեւման Ս. Խաչի, Հոգեգալուստ,
Համբարձում:

ա. Համբարձում, Երկրորդ
Ծաղկագարդ, Հոգեգալուստ, Տօն
Երեւման Ս. Խաչի:

ա. Տօն Երեւման Ս. Խաչի,
Համբարձում, Երկրորդ Ծաղկագարդ,
Հոգեգալուստ,:

3.- Հայերէնը ե՞րբ Հայաստանի
Հանրապետութեան պաշտօնական
լեզու հռչակուեցաւ.:

ա. Դեկտեմբեր 1917

բ. Դեկտեմբեր 1919

գ. Մայիս 1918

դ. Փետրուար 1921

4.- Ամբողջացո՛ւր.

ա. Մայր -----

բ. Մայր-----

գ. Մայր-----

դ. Մայր-----

5.- Հետեւեալներէն ո՞վ կրնայ
ձեռնադրութիւն կատարել.

ա. Սարկաւազը

բ. Եպիսկոպոսը

գ. Ծայրագոյն վարդապետը

դ. Աւագ Քահանան

6.- Որո՞նք են Քրիստոսի
Եկեղեցւոյ սկզբնական շրջանի
նուիրապետական 3 աստիճանները.

ա. Ս.....

բ. Ե..... կամ Ք.....

գ. Ե.....

7.- Ըսէ՛ մէկ բառով «Աստուծոյ ծառայ
եւ Եկեղեցւոյ սպասաւոր».

Կ----- կամ Ժ-----

8.- Ըսէ՛ մէկ բառով
«Դռնապանութիւն, Ընթերցողութիւն,
Երդմսեցուցչութիւն կամ
Ջահրնկալութիւն ընող».

.....

9.- Ըսէ՛ մէկ բառով «Ս. Պատարագի
ընթացքին նշխարները Ս. խորան
փոխադրել».

Վ.....

10.- Ի՞նչ նուիրապետական կարգ
կ'ունենայ Ս. Եկեղեցւոյ գլխաւոր
սպասաւորը.

.....

Հայաստանայց Եկեղեցւոյ

Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոց
2011-2012 Տարեշրջանի (32րդ)

Ամսավերջի Հանդես՝

Կիրակի 20 Մայիս, 2012

Ժամը 13:30-ին

Բաստրմաճեան Սրահ

(մուտքը ազատ)

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել տնօրէն՝ Թորոս Պապիկեանին

Հեռ. (514)-956-1277 email director@sourphagop.org

Կայքէջ՝

www.sourphagop.org

11-րդ տարի

Ամսաթերթ՝

«Մաշտոցի Արձագանգ»

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

19-րդ տարի

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (12-րդ տարի)

Այս թիւով.....

Ս. Էջմիածնի Մայր Տաճար, Ս. Հռիփսիմէ,

Ս. Գայիանէ Էջ 2

Յունիս ամսուան բացատրական
տօնացոյց Էջ 3-5

Մեծն Ներսէս Հայրապետ

Ս. Գրիգոր Լուսաւորչի
Նշխարներու Գիտը

Ս. Հռիփսիմեանց Կոյսեր

«Մաշտոցի Արձագանգ»ի ներկայ
եւ նախկին թիւերու նոր հասցէն
համացանցի վրայ: Էջ 6

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ
Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի 2011-12
տարեշրջանի խմբակը: Էջ 6

Ամսուան Համարը

«Ժողովուրդէն ոմանք մանուկներ բերին
Յիսուսի, որպէսզի Ձեռքը դնէ անոնց
վրայ, բայց աշակերտները սաստեցին
բերողները: Երբ Յիսուս տեսաւ,
բարկացաւ եւ սաստեց աշակերտները
ըսելով.

- Ձգեցէք որ մանուկները ինծի գան,
արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ
այդպիսիներուն է Աստուծոյ
արքայութիւնը: Լաւ գիտցէք, ով որ
Աստուծոյ արքայութիւնը չ'ընդունիր
փոքրիկ մանուկի մը պէս, հոն պիտի
չմտնէ:

Մարկոս 10.13-15

Յունիս 2012 (ԺԹ տարի թիւ 10)




Է...Էջմիածին


Խաչքարի հեղինակ՝ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան



Ս. Էջմիածնի Մայր Տաճար



Էջմիածնի Ս. Հռիփսիմե Վանքը



Էջմիածնի Ս. Գայիանե Վանքը

Յունիս ամսուան բացատրական տօնացոյց

Բշ. 4	Ս. Հռիփսիմեանց Կոյսեր
Գշ. 5	Ս. Գայիանեան Կոյսեր
Շրթ. 9	Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Ելն ի Վիրապէն)
Կիր. 10	Տօն Սրբոյ Էջմիածնի
Գշ. 12	Ս. Նունէ եւ Մանէ Կոյսեր
Շրթ. 16	Մեծն Ներսէս Հայրապետ
Կիր. 17	Հայրերու Օր
Գշ. 19	Ս. Կոստանդիանոս Թագաւոր եւ Հեղինէ Թագուհի
Շրթ. 23	Ս. Գրիգոր լուսաւորիչ (Գիւտ Նշխարաց)
Եշ. 28	Ս. Թարգմանիչներ Սահակ եւ Մեսրոպ
Ուր. 29	Ս. Տրդատ Թագաւոր եւ Աշխէն Թագուհի



Սրբուհի Գայիանէ



Սրբուհի Հռիփսիմէ

Տրդատ Գ. թագաւոր

Մեծն Ներսէս Հայրապետ



Ս. Մեծն Ներսէս պատարագ մատուցելու պահուն:

Երեւան Ձեռ. 2639 էջ 250ա ժողովածու 1672թ.
Ամբողջու վանք: Ծաղկող՝ Սահակ Վանեցի

Իր գահակալութեան ընթացքին Ս. Ներսէս պայքարեցաւ պարսկական ազդեցութեան դէմ, արգիլելով պարսկերէնի ուսուցումը: Բացաւ նոր դպրանոցներ, որոնցմով նպաստեց թուլացած քրիստոնէական աւանդութիւններու վերահաստատման: Ան ամէն կերպով հոգ տարաւ, որպէսզի եկեղեցւոյ պաշտօնեաները զինուին գիտութեամբ եւ աստուածային իմաստութեամբ:

Ս. Ներսէսի օրով մեծ ծաղկում ապրեցաւ վանականութիւնը: Կառուցուեցան բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ, որոնցմով լեցուեցաւ ողջ Հայոց աշխարհը:

Սուրբ Հայրապետը մեծ էր իր աղքատասիրութեամբ. ան երբեք ճաշի կամ ընթրիքի չէր նստեր առանց սեղանակից ունենալու աղքատներն ու կոյրերը, անդամալոյծներն ու ցաւազարները: Ան կը սիրէր անձամբ սպասաւորել ու դարմանել զանոնք:

371 թուին, երբ պարսից Շապուհ Բ. արքան մեծաքանակ զօրքով ներխուժեց Հայաստան, Ս. Ներսէսը ճակատամարտէն առաջ քաջալերեց Հայ մարտիկներուն, որ աներկիւղ եւ հաւատքով զինուած մարտնչեն թշնամիին դէմ: Ինքը, բարձրանալով Նպատ լեռան գագաթը, մարտի ընթացքին բազկատարած կ'աղօթէր, մինչեւ որ հայոց զօրքը լիակատար յաղթանակ տարաւ:

Սուրբ մեծն Ներսէս Ս. Գրիգոր Լուսաւորչի թոռան թոռն է որ ուսանած է Կեսարիոյ մէջ: Հայրենիք վերադառնալէ ետք, Արշակ Բ. թագաւորը զինք կը նշանակէ արքունի սենեկապետ, այնուհետեւ անոր շնորհելով հոգեւոր բոլոր աստիճանները, 353 թուին զինք կ'ուղարկէ Կեսարիա՝ օծուելու հայոց կաթողիկոս: Ըստ աւանդութեան՝ այնտեղ անոր հետ կը ձեռնադրուի նաեւ Սուրբ Բարսեղ Կեսարացին:

Մեծն Ներսէս կաթողիկոս իր պաշտօնին գլուխն անցնելով մեծ բարեկարգութիւններու ձեռնարկեց: Անհամար վանքերու, դպրոցներու, որբանոցներու հիմնադրութիւնը իր աշխատանքին մէկ բաժինն էր: Ան կազմակերպեց հայ եկեղեցական դասը, ամէն կողմ քահանաներ, եպիսկոպոսներ եւ քարոզիչներ ղրկելով: Կանոնաւորեց եկեղեցիներու արարողութիւնները եւ օրեր ու ժամեր նշանակեց անոնց գործադրութեան համար:

Մբ Գրիգոր Լուսավորչի նշխարներու գիւտը

Մբ. Գրիգոր Լուսավորչի նշխարներու գիւտը հայոց մեծագոյն սուրբի յիշատակին նուիրուած երեք տօներէն մէկն է:

Ըստ աւանդութեան, հայոց մեծ դարձէն յետոյ Ս. Գրիգոր Լուսավորիչն իր կեանքի վերջին տարիները աւարտեց ճգնակեցութեամբ՝ Սեպուհ լեռան Մանէի քարայրին մէջ, ուրտեղ ալ վախճանեցաւ 326 թ.: Անոր մարմինը գտնուեցաւ հովիւներու կողմէ, որոնք, չճանչնալով՝ մահացեալ կաթողիկոսին, անոր մարմինը կը ծածկէն քարակոյտի տակ: Հետագային Մբ. Գրիգոր Լուսավորիչը տեսիլքով կը յայտնէ իր նշխարներու տեղը իր աշակերտներէն Գառնիկ Բասենցիին, որմէ ետք Հայրապետի նշխարները կը տեղափոխուին և կ'ամփոփուին Դարանաղի գաւառի Թորդան գիւղին մէջ:

Մբ Գրիգոր Լուսավորչի նշխարները բոլոր քրիստոնէական եկեղեցիներու մեծագոյն սրբութիւններէն են: Հայոց Հայրապետի նշխարները գտնուելէն յետոյ անոնցմէ մէկ մասը իբրև սրբազան մասունք տարուեր է Վաղարշապատ, Բիւզանդիա, Իտալիա: Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի եւ Անթիլիասի մէջ պահուող Լուսավորչի Սբ Աջը Հայ Եկեղեցւոյ կարևորագոյն սրբութիւններէն են, որով կ'օրհնուի սրբազան միւռոնը:

Մբ. Գրիգոր Լուսավորչի նշխարներու գիւտի տօնը կը նշուի Հոգեգալուստի երրորդ շաբաթ օրը: Տօնի օրը եկեղեցիներուն կը մատուցուի Սբ. Պատարագ: Տօնի առիթով Հայ եկեղեցին սահմաներ է շաբաթապահք: Տօնն ունի նաեւ իր նախատօնակը:

Սուրբ Հռիփսիմեանց Կոյսեր

Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան մէջ վասն հաւատքի նահատակութեան օրինակները անպակաս են: Այս օրինակներէն մէկն է Հռիփսիմէ անունով կոյս մը որ յաջողեցաւ հաւատքի ոյժով դիմադրել օրուան թագաւորին՝ Տրդատ Գ.ին:

Ս. Հռիփսիմէ քրիստոնէայ հաւատացեալ մըն էր որ Հռոմի մէջ քրիստոնէաներու դէմ Դիոկղետիանոս կայսրին կողմէ կատարուած հալածանքներէն փախչելով կ'ապրէր Գայիանէ կոյսի գլխաւորած հաւատացեալ կոյսերու խումբին հետ: Այս խումբը հաստատուած էր Հնձաններ կոչուած վայրի մը մէջ, Վաղարշապատէն ոչ շատ հեռու:

Հայաստանի այդ ժամանակաշրջանի թագաւորը Տրդատ Գ., որ այդ ժամանակ տակաւին հեթանոս էր, ուզեց ամուսնանալ Հռիփսիմէի հետ: Հռիփսիմէն անշուշտ մերժեց, որովհետեւ չէր ուզեր կին ըլլալ կռապաշտ թագաւորին: Հռիփսիմէի ժխտական կեցուածքին որպէս հետեւանք, թագաւորը սպաննել տուաւ ոչ միայն Հռիփսիմէն, այլ նաեւ Գայիանէն եւ անոր ընկերակիցները: Այս դէպքէն 9 օրեր ետք Խոր Վիրապէն ազատ արձակուած Ս. Գրիգոր Լուսավորիչ թաղեց նահատակները եւ զանոնք դասեց սուրբերու կարգին: Այսպէս, նահատակուած 37 կոյսերը կոչուեցան Հռիփսիմեանց կամ Գայիանեանց կոյսեր որոնք մեր եկեղեցիներէն ներս կը յիշատակուին Սուրբ Էջմիածնի տօնին նախորդող Երկուշաբթին եւ Երեքշաբթին:

Ստեփանոս Օրբելեանը կը գրէ թէ մինչեւ 13-րդ դար կաթողիկոսաբանին մէջ կը պահուէին Հռիփսիմէի մասունքները, որոնք Հռոմկլայի գրաւման ժամանակ (1292) մամլութիւնները տարեր են Եգիպտոս՝ որպէս աւար: Հռիփսիմէի գերեզմանը կը գտնուի Էջմիածնի Սուրբ Հռիփսիմէ վանքին մէջ:

ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ ԺԹ. ՏԱՐԻ

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի
ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցին վրայ
www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի
2011-12 տարեշրջանի կազմը

Առէն Պապիկեան
Թամար Գիզիրեան
Յասմիկ Նաճարեան
Շողիկ Նաճարեան
Յասմիկ Գանաճեան
Վաչէ-Սագօ Պոյաճեան
Շաղիկ Թորիկեան Պոյաճեան
Անի Թորիկեան Պապիկեան
Թորոս Պապիկեան